

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

№ 20-21

2018

ԵՐԵՎԱՆ 2018

Գլխավոր խմբագիր՝ Արա ԻՍՊԻԲՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Լևոն ՄԿՐՏՉՅԱՆ - ԿԳ նախարար
Մանուկ ՍԿՐՏՉՅԱՆ - ԿԳ փոխնախարար
Արա ԻՍՊԻԲՅԱՆ – ԳԹԿ տնօրեն
Արմեն ՓԱՇԱՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Ալեքսան ԵՍՍՅԱՆ - ԳԹԿ թեստաբանության բաժնի պետ
Կարո ՆԱՍԻԲՅԱՆ - ԳԹԿ քննությունների կազմակերպման բաժնի պետ
Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - ԳԹԿ իրավաբանական բաժնի պետ
Համլետ ԴԱՎԹՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ
Աշոտ ԴԱԶԱՐՈՍՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի գլխավոր
մասնագետ


Խմբագրական կազմ՝

Լիանա ՎԱՐԴԱՆՅԱՆ
Սիքայել ԽՈՍՐՈՎՅԱՆ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4
Հեռ. (+374 10) 55-32-65
E-mail: gtk2005@web.am
www.atc.am

ՎԵՐԼՈՒԾՈՒ - ԹՅՈՒՆ



Վերլուծությունը կատարել է
ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժինը

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
գլխավոր մասնագետ

Արմեն ՂԱԶԱՆՉՅԱՆ
գլխավոր մասնագետ

Նարե ՍԱՐԳՍՅԱՆ
առաջատար մասնագետ

Մարիամ ԳՐԻԳՈՐՅԱՆ
առաջին կարգի մասնագետ

2017 թ. պետական միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն

Նախաբան

2017 թ. պետական միասնական և կենտրոնացված քննությունների վերլուծությունը կատարվել է մի քանի ուղղություններով:

- Կատարվել է ընդհանուր արդյունքների վերլուծություն (ինչպես պետական միասնական, այնպես էլ կենտրոնացված քննությունների), համեմատություններ նախորդ տարիների պետական միասնական քննությունների արդյունքների հետ:
- Վերլուծության են ենթարկվել պետական միասնական քննությունների (այսուհետև՝ միասնական քննություններ) արդյունքներն ըստ խմբերի (ըստ մարզերի, ըստ բնակավայրերի տիպերի (քաղաք, գյուղ), ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների, ըստ սեռերի):

- Ըստ թեստերի և թեստային առաջադրանքների կառուցվածքի և որակական բնութագրիչների հետազոտվել են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքները: Թեստերը բարելավելու նպատակով վերլուծության այդ մասը տրամադրվել է առարկայական մասնագետներին:
- Ներկայացվել են 2017 թ. բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկություններ՝ ըստ բուհերի ամենապահանջված մասնագիտությունների:
- Միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի հետ կապված առանձին անդրադարձ է արվել սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերից հայտագրված դիմորդների արդյունքներին:

Վերլուծության մեջ ներառված չեն զուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերին (օրինակ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ և այլն) վերաբերող տեղեկությունները: Պետական միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթին մասնակցող դիմորդների հաշվառման բազաներում ընդունելության ներբուհական քննություններ պահանջող մասնագիտություններին վերաբերող տվյալներ կան այն դեպքում, եթե տվյալ դիմորդը բուհի ընդունելության դիմում-հայտի մասնագիտությունների մասում նշել է զուտ ներբուհական քննություն պահանջող որևէ մասնագիտություն և իր նշած այլ մասնագիտությունների համար առնվազն մեկ առարկայից հանձնել է միասնական քննություն:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 2017 թ. պետական միասնական քննությունների կազմակերպումը

Գնահատման և թեստավորման կենտրոնում (այսուհետև՝ ԳԹԿ) քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ից և ավարտվում մարտի 15-ին (համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի»): Մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակիցների ցուցակը վերահաստատելու նպատակով ԳԹԿ-ից դպրոցներ ուղարկված տվյալները և նոր դիմում-հայտերը ապրիլի 10-15-ը ուղարկվում են ԳԹԿ: Բուհերում դիմորդների հայտագրումը կատարվում է տվյալ տարվա մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը: Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններին,

ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը: ՀՀ երկքաղաքացիների և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, նույն տարվա գարնանային գորակոչից գորացրված կամ մինչև հուլիսի 31-ը գորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը:

Միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

2017 թ. հունիսի 2-23-ը և հուլիսի 2-8-ը ՀՀ տարածքում տեղաբաշխված 29 և ԼՂՀ 5 քննական կենտրոններում միասնական քննություններ են անցկացվել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն), «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից, որոնց մասնակցելու համար հայտագրվել են ՀՀ, ԼՂՀ և արտերկրի 10396 դիմորդներ (ՀՀ-ում՝ 9710, ԼՂՀ-ում՝ 686 դիմորդ): Քննություններն անցկացվել են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական փուլին (հունիսի 3-24-ը) հայտագրվել են ՀՀ և ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2017 թ. և նախորդ տարիների շրջանավարտները՝ 9944 դիմորդ: Լրացուցիչ փուլին (հուլիսի 2-8-ը) հայտագրվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա շրջանավարտները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 2015-2017 թթ. գորացրվածները, արտերկրի շրջանավարտները, միասնական քննությունների հիմնական փուլին հայտագրված և քննությանը հարգելի պատճառով չմասնակցած, ինչպես նաև հիվանդության պատճառով հիմնական փուլի միասնական քննությունն ընդհատած և լրացուցիչ փուլին մասնակցելու թույլտվություն ստացած դիմորդները: Այս փուլի քննություններին մասնակցության հայտ է ներկայացրել 1042 դիմորդ (ՀՀ-ից՝ 911, արտերկրից՝ 73, ԼՂՀ-ից՝ 58): Միասնական քննությունների լրացուցիչ փուլում հայտագրվածների մի մասը հայտագրված է եղել նաև հիմնական փուլում, սակայն չի ներկայացել քննության և տվյալ քննության համար կրկին հայտագրվել է լրացուցիչ փուլում, մի մասը հիմնական փուլի քննություններին մասնակցելուց հետո այլ առարկայի քննություն հանձնելու համար է հայտագրվել, մի

մասն էլ ընդհանրապես հայտագրված չի եղել հիմնական փուլում: Այդ պատճառով 2 փուլերի հայտագրվածների ընդհանուր թիվը մեծ է հայտագրված անձանց թվից:

ՀՀ-ում 2017 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին մասնակցելու համար հայտագրված դիմորդներից 10006-ը (9279-ը՝ ՀՀ-ից, 60-ը՝ արտերկրից) և ԼՂՀ դիմորդներից 667-ը եղել են հանրակրթական ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա, իսկ մնացածները՝ նախորդ տարիների շրջանավարտներ:

Բուհերում հայտագրված դիմորդների թիվը եղել է 9789: Միասնական քննություններին մասնակցելու համար հայտագրված դիմորդների թվից այն պակաս է, որովհետև միասնական քննություններին մասնակցելու համար հայտագրված դիմորդների մի մասը դիմել է բուհերի ընդունելության մրցույթի ցանկում չընդգրկված բուհեր: Բուհերում հայտագրված 9789 դիմորդներից 9738-ը դիմել է պետական, 51-ը՝ ոչ պետական բուհեր:

Քննությունների կազմակերպմանն ու անցկացմանը ներգրավվել են քննական կենտրոնի 33 ղեկավար, 323 ԳԹԿ ներկայացուցիչ, մուտքի 91 համակարգչային օպերատոր և 164 կազմակերպիչ:

1.2 2017 թ. պետական միասնական քննությունների ժամանակացույցը

Աղյուսակ 1. 2017 թ. միասնական քննությունների ժամանակացույցը

Քննությունը	Քննության տևողությունը (ժամ)	Քննության օրը	
		հիմնական փուլ	լրացուցիչ փուլ
Համաշխարհային պատմություն Կենսաբանություն Աշխարհագրություն	3	02.06.2017 թ.	06.07.2017 թ.
Հայոց լեզու և հայ գրականություն	3	06.06.2017 թ.	03.07.2017 թ.
Ֆիզիկա	3	09.06.2017 թ.	04.07.2017 թ.
Օտար լեզու	2.5	13.06.2017 թ.	05.07.2017 թ.
Մաթեմատիկա	3	16.06.2017 թ.	07.07.2017 թ.
Հայոց պատմություն Քիմիա	3	20.06.2017 թ.	08.07.2017 թ.
Ռուսաց լեզու	2.5	23.06.2017 թ.	02.07.2017 թ.

Հիմնական փուլի բոլոր քննություններն անցկացվել են թեստերի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ տարբերակներով, լրացուցիչ փուլի քննությունները՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ տարբերակներով, ընդ որում, թեստ 3-ը կազմ-

վել է թեստ 1-ի, թեստ 4-ը՝ թեստ 2-ի, թեստ 6-ը, 7-ը, 8-ը՝ թեստ 5-ի առաջադրանքների և/կամ ընտրովի պատասխանով առաջադրանքների դիստրակտորների տեղափոխությամբ:

Օտար լեզվի քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն լեզուներից որևէ մեկը: Պարսկերից միասնական քննություն հանձնելու համար 2017 թ. հայտ չի ներկայացվել:

1.3 2017 թ. պետական միասնական քննությունների լուսաբանումը և իրազեկումը

Համաձայն ԳԹԿ գործունեության պլանի՝ ԳԹԿ-ն հունվարի 20-ից ԶԼՄ-ներում պարբերաբար հրապարակել է հայտարարություններ, որոնցում նշվել են միասնական քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, դիմում-հայտերն ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանումները: ԳԹԿ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվել և պարբերաբար թարմացվել են միասնական քննություններին և բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկությունները:

ԳԹԿ համակարգչային և վերլուծական բաժինը միասնական քննություններին մասնակցելու դիմում-հայտ լրացրած դիմորդների տվյալները էլեկտրոնային եղանակով ստանալու նպատակով հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային օպերատորների համար կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ:

ԶԼՄ-ներով լուսաբանվել է 2017 թ. միասնական քննությունների կազմակերպման գործընթացը (ուղեցույցների մշակում և տրամադրում, միասնական քննությունների և բուհերի ընդունելության հայտագրում, թեստերի տպագրություն): Քննությունների անցկացման ողջ գործընթացը (քննության ընթացք, բողոքարկում, տվյալների տրամադրում, մեկնաբանում) եղել է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Պարբերաբար կազմակերպվել են հարցազրույցներ և ասուլիսներ:

1.4 Դիմորդների մասնակցությունը 2017 թ. պետական միասնական քննություններին

Աղյուսակ 2-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2017 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին

հայտագրված, քննության ներկայացած, բացակայած, հիվանդության պատճառով քննությունն ընդհատած և քննությունից հեռացված դիմորդների թվերը: Հայտագրվածների և քննությանը ներկայացածների թվերում ընդգրկված են նաև հիմնական փուլի քննություններին հայտագրված և այս կամ այն պատճառով չներկայացած այն դիմորդները, որոնք հայտագրվել և մասնակցել են լրացուցիչ փուլի քննություններին:


Աղյուսակ 2. Դիմորդների մասնակցությունը 2017 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին

Քննական առարկաներ	Հայտագրված դիմորդներ	Քննությանը ներկայացած դիմորդներ	Բացակա դիմորդներ	Հիվանդության պատճառով քննությունը ընդհատած դիմորդներ	Քննությունից հեռացված դիմորդներ
Հայոց լեզու և հայ գրականություն	5477	5307	170		
Մաթեմատիկա	4766	4586	174	1	5
Անգլերեն	4318	4158	156	2	2
Ֆիզիկա	1739	1683	56		
Հայոց պատմություն	1331	1248	83		
Կենսաբանություն	1304	1265	39		
Քիմիա	1146	1098	48		
Ռուսաց լեզու	591	544	47		
Աշխարհագրություն	289	282	7		
Տրանսերեն	130	126	4		
Գերմաներեն	124	119	5		
Համաշխարհային պատմություն	90	79	11		
Իսպաներեն	6	6			
Իտալերեն	2	2			

Աղյուսակից հետևում է, որ յուրաքանչյուր քննությունից բացակայածների թիվը հիմնականում չի գերազանցել 5%-ը: Բացառություն են կազմել «Հայոց պատմություն», «Ռուսաց լեզու» և «Համաշխարհային պատմություն» առարկաների քննություններին չներկայացած դիմորդները, որոնք կազմել են հայտագրված դիմորդների, համապատասխանաբար, 6,2, 8 և 12.2 տոկոսը: Բոլոր քննությունների հանրագումարում բացակայել է դիմորդների 3.8%-ը, հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է 3 դիմորդ, 7 դիմորդ հեռացվել է քննությունից:

1.5 2017 թ. և նախորդ տարիների պետական միասնական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունը

Դիագրամ 1. Միասնական քննություններին հայտագրվածների թիվը ըստ տարիների




2011 թ. միասնական քննությունների դիմորդների ընդհանուր թիվը մոտ 7 անգամ պակաս է նախորդ և հաջորդ տարիների դիմորդների թվից, քանի որ հանրակրթական ուսումնական հաստատությունները 2010-2011 ուսումնական տարում շրջանավարտ չեն ունեցել:

Դիագրամ 1-ում ըստ տարեթվերի ներկայացված են 2008-2017 թթ. միասնական քննություններին մասնակցության հայտ ներկայացրած դիմորդների թվերը: Ինչպես երևում է դիագրամից, ընդհանուր առմամբ նվազման միտում է դիտարկվում՝ սկսած 2009 թվականից: Ընդհանուր նվազման ֆոնին 2012 թ. հայտագրվածների թիվը 219-ով գերազանցել է 2010 թ. ցուցանիշը, իսկ վերջին տարիներին արձանագրված նվազման միտումն աստիճանաբար մեղմացել է 2014-2015 թթ.: Նախորդ տարվա համեմատությամբ 2017 թ. հայտագրվածների թիվը նվազել է 1667-ով (13.8%-ով): 2015 և 2016 թթ. այդ ցուցանիշը կազմել է 3.6%:


Դիագրամ 2-ում ներկայացված է «Մաթեմատիկա» և բնագիտական առարկաների, դիագրամ 3-ում և 4-ում՝ լեզուների, դիագրամ 5-ում՝ հայոց պատմության և համաշխարհային պատմության տարբեր տարիների միասնական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունը:

Դիագրամ 2-5 Միասնական քննությունների մասնակիցների թվերը ըստ տարիների


Դիագրամ 2




Դիագրամ 3



Դիագրամ 4



Դիագրամ 5



2. Վիճակագրական տվյալներ 2017 թ. պետական միասնական և կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքների վերաբերյալ

Աղյուսակ 3-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2017 թ. միասնական քննությունների մասնակիցների թիվը¹, առավելագույն, նվազագույն և միջին² միավորները և ստանդարտ շեղումները³, ինչպես նաև մասնակիցների թիվը և տոկոսը ըստ գնահատման 20 միավորանոց սանդղակի 0-7.25, 7.5-13.25, 13.5-16.75, 17-18.75 և 19-20 միջակայքերի:

¹ Մասնակիցների թվից կախված է միջին միավորի հուսալիությունը: Մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը, ինչի արդյունքում միջին միավորը դառնում է հուսալի:

² Միջին միավորը բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:

³ Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է: Այն ցույց է տալիս, թե ստացված արդյունքները որքանով են շեղված միջին միավորից: Ոչ մեծ ստանդարտ շեղումը վկայում է միջին միավորի շուրջը արդյունքների կուտակվածության մասին:

2.1 Միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Աղյուսակ 3. 2017 թ. միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Ֆնանսական առարկաները	Ֆինանսային ծախսերի քանակը	Առարկայի վրա ծախսերը	Լիցենզիայի դիմումների քանակը	Միջին վարձավճար	0-7,25 միավոր հավաքած մտանակցիներ		7,5 - 13,25 միավոր հավաքած մտանակցիներ		13,5 - 16,75 միավոր հավաքած մտանակցիներ		17,0 - 18,75 միավոր հավաքած մտանակցիներ		19,0-20,0 միավոր հավաքած մտանակցիներ	
					թիվը	ստույգը	թիվը	ստույգը	թիվը	ստույգը	թիվը	ստույգը	թիվը	ստույգը
Հարց լեզու և նույն ժամանակահատվածում	5307	20,0	1,5	12,9	620	11,7	2131	40,2	1382	26,0	782	14,7	392	7,4
Մաթեմատիկա	4586	20,0	0,25	11,3	663	14,5	2644	57,7	782	17,1	309	6,7	188	4,1
Անգլերեն	4158	20,0	2,0	14,4	376	9,0	1251	30,1	911	21,9	754	18,1	866	20,8
Ֆիզիկա	1683	20,0	0,0	11,5	455	27,0	524	31,1	357	21,2	217	12,9	130	7,7
Կենսաբանություն	1265	20,0	1,5	13,4	219	17,3	343	27,1	269	21,3	214	16,9	220	17,4
Հարց պատմություն	1248	20,0	1,5	12,1	239	19,2	502	40,2	200	16,0	176	14,1	131	10,5
Ֆրանսա	1098	20,0	1,5	12,7	225	20,5	353	32,1	182	16,6	177	16,1	161	14,7
Ռուսաց լեզու	544	20,0	1,25	10,2	155	28,5	261	48,0	91	16,7	24	4,4	13	2,4
Մշտորեն արդյունաբերություն	282	20,0	3,0	12,1	55	19,5	111	39,4	61	21,6	33	11,7	22	7,8
Ֆրանսերեն	126	20,0	4,5	15,6	5	4,0	29	23,0	31	24,6	25	19,8	36	28,6
Գերմաներեն	119	20,0	3,0	15,6	5	4,2	26	21,8	25	21,0	35	29,4	28	23,5
Համաշխարհային պատմություն	79	20,0	5,5	14,7	6	7,6	22	27,8	19	24,1	13	16,5	19	24,1
Իտալերեն	6	20,0	8,75	14,3			3	50,0			2	33,3	1	16,7
Իսպաներեն	2	17,25	17,0	17,1							2	100,0		

2.2 Միասնական քննությունների արդյունքների բողոքարկումը⁴

Աղյուսակ 4-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2017 թ. միասնական քննությունների արդյունքներին վերաբերող և դրական լուծում ստացած բողոք-դիմումների թվերը:

Աղյուսակ 4. 2017 թ. միասնական քննությունների արդյունքներին վերաբերող բողոք-դիմումների թվերը

Քննական առարկաները	Բողոք-դիմումների ընդհանուր թիվը	Դրական լուծում ստացած բողոք-դիմումների	
		թիվը	տոկոսը
Ֆիզիկա	32	6	18.8
Մաթեմատիկա	23	7	30.4
Կենսաբանություն	21	10	47.6
Հայոց լեզու և հայ գրականություն	20	11	55.0
Հայոց պատմություն	16	2	12.5
Քիմիա	15	3	20.0
Անգլերեն	12	11	91.7
Ֆրանսերեն	4		
Գերմաներեն	2	2	100.0
Համաշխարհային պատմություն	2		
Ռուսաց լեզու	1		
Ընդամենը	148	52	35.1

Աղյուսակից երևում է, որ քննության արդյունքների հետ անհամաձայնությանը վերաբերող բողոք-դիմումների մի մասին բողոքարկման հանձնաժողովի կողմից դրական լուծում է տրվել: Ֆրանսերենի, համաշխարհային պատմության և ռուսաց լեզվի բողոքարկումների հիման վրա քննության արդյունքի փոփոխություն չի կատարվել: Աշխարհագրության քննության արդյունքների հետ անհամաձայնության բողոք-դիմում չի

⁴ Համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի», պետական միասնական քննության բողոք-դիմումները բողոքարկման ժամկետի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում ներկայացվում են ԳԹԿ: Տեսակավորված բողոք-դիմումները ներկայացվում բողոքարկման հանձնաժողովին: Դրանք հանգամանորեն ուսումնասիրելուց հետո բողոքարկման հանձնաժողովի կողմից կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման կամ փոփոխության վերաբերյալ: Դրական լուծում ստացած բողոք-դիմումների և բողոքարկման հանձնաժողովի կողմից կազմված արձանագրության հիման վրա միասնական քննությունների էլեկտրոնային բազայում կատարվում է համապատասխան փոփոխություն: Հիմնական փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են վերջին քննության բողոքարկման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, լրացուցիչ փուլինը՝ վերջին քննության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:


եղել:

Ընդհանուր առմամբ 148 դիմումներից դրական լուծում է ստացել 52-ը (35.1%-ը):


2.3. 2017 թ. և նախորդ տարիների միասնական քննությունների միջին միավորների համեմատությունը

Դիագրամներ 6-9. Միասնական քննությունների միջին միավորները ըստ տարիների


Դիագրամ 6




Դիագրամ 7



Դիագրամ 8



Դիագրամ 9



2.4. 2017 թ. կենտրոնացված քննությունների⁵ ընդհանուր արդյունքները

Կենտրոնացված քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 25-ից մինչև հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում: Կենտրոնացված քննությունների քննական կենտրոնների ցանկը մինչև տվյալ տարվա հունիսի 15-ը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: Դիմորդի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով, և գնահատականը դիմորդին հայտնվում է քննության օրը՝ քննասենյակում:

Աղյուսակ 5. Կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքները

Կենտրոնացված քննությունը	Հաստատված դիմորդների թիվը	Քննությունների անցած դիմորդների թիվը	Բացակայների թիվը	Միջին միավորը	20 միավոր ստացած դիմորդների		Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների	
					թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Անզերեն (բանավոր)	931	904	27	11.4	4	0.4	58	6.4
Հայոց լեզու (բանավոր)	306	281	25	10.2	3	1.1	22	7.8
Բանավոր հաղորդակցման միջոցներ	101	93	8	12.6	7	7.5		
Ռուսաց լեզու (բանավոր)	99	95	4	11.4	1	1.1	12	12.6
Ստեղծագործական աշխատանք	87	79	8	12.9			1	1.3
Ֆրանսերեն (բանավոր)	48	46	2	14.1	3	6.5		
Գերմաներեն (բանավոր)	32	31	1	13.8				
Իսպաներեն (բանավոր)	5	5		14.4	1	20.0		
Իտալերեն (բանավոր)	1	1		19.0				

Կենտրոնացված քննություններից բացակայել են հիմնականում իրենց հայտագրած միասնական քննություններից դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդները:

Հայոց լեզվի, ռուսաց լեզվի, անզերենի և ստեղծագործական աշ-

⁵ Կենտրոնացված քննություններն այն քննություններն են, որոնք, ելնելով տվյալ քննական առարկայի առանձնահատկություններից, հնարավոր չէ անցկացնել թեստերի միջոցով:

խատանքի կենտրոնացված քննությունների մասնակիցների 1.3-12.6%-ը չի հաղթահարել դրական միավորի շեմը: Մյուս քննություններից «անբավարար» գնահատված դիմորդ չի եղել:

20 միավոր հավաքածուների ամենաբարձր տոկոսը բաժին է ընկել իսպաներենի բանավոր քննություն հանձնած դիմորդներին (20%), իսկ ստեղծագործական աշխատանքից, գերմաներենից և իտալերենից 20 միավորներ չեն արձանագրվել:

Աղյուսակ 6-ում ներկայացված են հայոց և օտար լեզուներից բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները, այդ դիմորդների՝ մինևույն առարկաների միասնական քննություններից հավաքած միջին միավորները և միասնական քննությունների ընդհանուր միջին միավորները:

Աղյուսակ 6. Տվյալ առարկայից միասնական և բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները

Քննական առարկաները	Միասնական քննության ընդհանուր միջին միավորը	Բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները	
		միասնական քննությունից	բանավոր քննությունից
Հայոց լեզու և հայ գրականություն	12.9	14.1	10.1
Անգլերեն	14.4	15.7	11.4
Գերմաներեն	15.6	17.2	13.8
Ֆրանսերեն	15.6	17.6	13.8
Ռուսաց լեզու	10.2	13.1	11.3
Իսպաներեն	14.3	13.5	14.4
Իտալերեն	17.1	17.0	19.0

3. 2017 թ. պետական միասնական քննությունների միջին միավորները ըստ խմբերի

Այս բաժնում ներկայացվում են 2017 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի, հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների և ըստ սեռերի:

3.1. Միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և միասնական քննություններին այլ երկրներից մասնակցածների

Աղյուսակ 7-ում ՀՀ մայրաքաղաքից, մարզերից և քննություններին այլ երկրներից մասնակցածների կտրվածքով ներկայացված են 2017 թ.

միասնական քննությունների միջին միավորները: Հաստացված շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայից արձանագրված ամենաբարձր միջին միավորը: Գունավորած են տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորին հավասար կամ դրանից բարձր միջին միավորների վանդակները: Այն դեպքում, երբ միջին միավորը ներկայացված է մեկ դիմորդով, նրա միավորը աղյուսակում որպես միջին միավոր չի նշվել:

Աղյուսակ 7. ՀՀ վարչատարածքային միավորներից և այլ երկրներից միասնական քննություններին մասնակցած դիմորդների միջին միավորները

		ՀՀ										ԼՂՀ	Վրաստան	Ռուսաստան	Ուկրաինա	Ղազախստան	ԱՄՆ	
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Մարտակ	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր							Տավուշ
Մաթեմատիկա	մասնակիցների թիվը	1818	171	226	274	224	333	368	335	264	119	166	268	15	5			
	միջին միավորը	11.3	11.3	11.2	10.8	11.2	10.8	12.6	11.4	11.7	11.4	11.9	9.8	7.6	7.4			
Հայոց լեզու և հայ գրականություն	մասնակիցների թիվը	1754	247	290	361	323	344	424	404	342	111	260	420	24	2			1
	միջին միավորը	12.9	11.9	13.6	13.7	13.4	12.5	14.2	13.3	13.7	12.4	12.8	11.1	8.3	5.0			4.75*
Անգլերեն	մասնակիցների թիվը	1732	133	227	263	209	278	337	333	207	87	154	181	16	1			
	միջին միավորը	14.4	12.8	14.4	15.3	13.7	14.0	14.8	14.2	15.9	13.0	14.1	14.4	9.1	12.25*			
Ֆիզիկա	մասնակիցների թիվը	736	42	83	97	66	104	124	124	89	43	43	121	7	4			
	միջին միավորը	11.6	11.2	12.1	10.5	11.7	11.2	14.4	11.9	12.4	12.3	11.6	8.4	6.4	4.9			
Գեոմատրիկա	մասնակիցների թիվը	431	44	66	97	87	80	73	110	79	38	58	72	16	12	1	1	
	միջին միավորը	13.2	13.1	13.8	14.3	13.3	12.1	14.7	15.1	13.2	13.6	13.7	12.0	8.4	9.0	9.25*	4.75*	
Հայոց պատմություն	մասնակիցների թիվը	407	50	53	76	74	76	115	103	83	25	47	137	2				
	միջին միավորը	12.6	10.3	12.4	13.0	11.9	11.9	13.2	12.1	14.5	11.9	12.6	8.7	3.5				
Քիմիա	մասնակիցների թիվը	389	38	51	88	61	61	64	108	75	32	46	58	15	10	1	1	
	միջին միավորը	12.4	12.7	11.9	13.5	13.1	12.9	13.9	13.5	14.2	12.2	13.7	11.0	5.6	8.9	7.5*	2.25*	
Ռուսոց լեզու	մասնակիցների թիվը	124	19	12	28	33	41	29	24	42	18	23	144	6	1			
	միջին միավորը	8.6	11.6	12.1	9.3	12.1	10.9	13.0	12.4	11.5	8.8	11.0	9.7	7.5	11.75*			
Աշխարհագրություն	մասնակիցների թիվը	53	15	15	30	18	24	10	33	14	5	44	19	2				
	միջին միավորը	11.7	12.9	15.6	12.9	14.0	12.1	13.1	10.7	14.7	9.3	11.2	10.4	5.1				
Տրամաբան	մասնակիցների թիվը	43	13	8	3	3		15	8	24	1	8						
	միջին միավորը	15.0	15.5	16.6	18.4	14.0		16.6	12.6	16.2	19.5*	16.8						

Պերմանենտ	մասնակցների թիվը	20	4	12	6	25	9	3	20	13	3	3							
	միջին միավորը	15.3	14.5	16.2	12.4	16.5	14.9	14.8	16.3	16.2	15.8	16.8							
Համաշխարհային պատմություն	մասնակցների թիվը	8	9	1	10	4	20	3	13	5	1	1							
	միջին միավորը	13.8	13.0	19.75'	13.7	13.2	16.0	16.3	16.1	12.1	19.5'	19.25'							
Իսպաներեն	մասնակցների թիվը	6																	
	միջին միավորը	14.3																	
Իտալերեն	մասնակցների թիվը	1	1																
	միջին միավորը	17.25'	17.0'																

*- քննությունը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ նրա ցուցանիշը որպես միջին միավոր չի ներկայացվում:

Աղյուսակ 7-ից երևում է, որ աշխարհագրության քննությունից ամենաբարձր միջին միավոր են հավաքել Արարատի մարզի դիմորդները, ֆրանսերենից՝ Արմավիրի, կենսաբանությունից՝ Շիրակի, մաթեմատիկայից, հայոց լեզվից և հայ գրականությունից, ֆիզիկայից, ռուսաց լեզվից և համաշխարհային պատմությունից՝ Կոտայքի, անգլերենից, հայոց պատմությունից և քիմիայից՝ Սյունիքի, գերմաներենից՝ Տավուշի մարզի դիմորդները: Իսպաներենի քննության բոլոր մասնակիցները եղել են Երևանից, իտալերենի քննության 2 մասնակիցներից մեկը՝ Երևանից, մյուսը՝ Արագածոտնի մարզից:

3.2. Միջին միավորները ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 8-ում ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի ներկայացված են 2017 թ. միասնական քննությունների միջին միավորները, ինչպես նաև այդ քննությունների ընդհանուր միջին միավորները: Ըստ քաղաքային բնակավայրերի բնակչության թվի առանձնացվել են խոշոր, միջին և փոքր քաղաքները: Վերջին երկու ենթատիպերի դիմորդների թիվը և միջին միավորներն ուսումնասիրվել են միասին վերցրած: Խոշոր քաղաքների սյունակը պարունակում է և՛ 3 խոշոր քաղաքների՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի դիմորդների ընդհանուր թվերն ու միջին միավորները, և՛ միայն Երևանի դիմորդներինը:

Գյուղական բնակավայրերի դիմորդների թիվը և միջին միավորները ներկայացվել են ընդհանուր հաշվարկով, ինչպես նաև՝ սահմանամերձ⁶, հեռավոր ու բարձր լեռնային գյուղերի համար առանձին: Սյունակների գունավորած վանդակներում ըստ քննական առարկաների

⁶ **Սահմանամերձ բնակավայրերի** ցանկը 2017 թ. պետական միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներում թարմացվել է համաձայն «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 17.11.1998 թ. N 713 որոշման 31.07.03 N 940-Ն, 14.04.04 N 492-Ն, 01.09.05 N 1490-Ն, 21.06.07 N727-Ն լրացումների:

ներկայացված են ընդհանուր միջին միավորին հավասար կամ գերազանցող միջին միավորները: Հաստատված շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը ըստ բնակավայրի տիպերի (ենթատիպերի):

Աղյուսակ 8. Միջին միավորները ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի

Քննական տարրեր	Ֆաղարներ						Գյուղեր						Միջին միավոր
	Խոշոր			միջին և փոքր			աղ քվում			աղ քվում			
	մատակնթղթերի թիվ	միջին միավոր	աղ քվում		մատակնթղթերի թիվ	միջին միավոր	առնումները և կեսայր		բարձր լեռնային		Միջին միավոր		
			մատակնթղթերի թիվ	միջին միավոր			մատակնթղթերի թիվ	միջին միավոր	մատակնթղթերի թիվ	միջին միավոր			
Մարեմտակա	2205	11.4	1818	11.3	1047	12.1	1046	10.9	147	11.0	97	10.1	11.3
Անցերեն	2138	14.4	1732	14.4	1004	14.9	818	13.7	114	14.1	87	13.8	14.4
Հայր լեզու և հայ գրականություն	2109	12.9	1754	12.9	138	13.9	1443	12.9	203	12.7	151	12.3	12.9
Ֆիզիկա	878	11.6	736	11.6	354	12.6	319	11.7	35	12.5	33	10.9	11.5
Կենսաբանություն	550	13.4	431	13.2	310	14.4	303	13.0	38	12.3	36	14.2	13.4

⁶ Ստիմուլները բնակավայրերի ցանկը 2017 թ. պետական միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման և նկատարանային տվյալների բազաներում քարտեզվել է համապատասխան «22 առնումները համայնքների ցանկը հաստատելու մասին» 22 Կառավարության 17.11.1998 թ. N 713 որոշման 31.07.03 N 940-Ն, 14.04.04 N 492-Ն, 01.09.05 N 1490-Ն, 21.06.07 N727-Ն լրացումների:

Հայր պատմություն	498	12.7	407	12.6	279	13.4	332	11.7	48	12.0	35	10.1	12.1
Քիմիա	497	12.7	389	12.4	285	13.6	231	12.8	27	13.0	28	14.3	12.7
Ռուսաց լեզու	160	9.4	124	8.6	109	11.7	124	10.7	20	9.7	4	7.3	10.2
Մշտարևադարձային	74	11.6	53	11.7	49	13.6	138	12.2	34	12.2	6	15.0	12.1
Տրանսլերեն	46	14.9	43	15.0	40	16.3	40	15.8	7	15.1	3	14.0	15.6
Պերսերեն	22	15.6	20	15.3	27	16.0	69	15.7	8	16.3	6	14.0	15.6
Համաշխարհային պատմություն	20	15.1	8	13.8	9	12.9	46	15.2	4	17.4	9	11.6	14.7
Իտալերեն	6	14.3	6	14.3									14.3
Իսպաներեն	1	17.25*	1	17.25*			1	17.0*					17.1

* - քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ նրա ցուցանիշը որպես միջին միավոր չի ներկայացվում:

Աղյուսակ 8-ից երևում է, որ բարձր են հատկապես միջին և փոքր քաղաքների դիմորդների հավաքած միջին միավորները: Ինչպես նախորդ տարում, 2017 թ. նույնպես, բոլոր առարկաներից հավաքած միջին միավորները, բացի աշխարհագրության և համաշխարհային պատմության միջիններից, գերազանցում են համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Առարկաների մեծ մասի միջին միավորներով առաջատար են միջին և փոքր քաղաքների դիմորդները:

Գյուղաբնակ դիմորդների հավաքած միջին միավորներից, ընդհանուր հաշվով, միայն մաթեմատիկայի, անգլերենի, կենսաբանության և

հայոց պատմության միջիններն են այդ առարկաների քննությունների ընդհանուր միջին միավորներից ցածր: Համաշխարհային պատմության միջին միավորով, ըստ բնակավայրերի տիպերի, առաջատարը գյուղերն են: Սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերն առանձին դիտարկելու դեպքում երևում է, որ գերմաներենից ամենաբարձր միջին միավորը հավաքել են սահմանամերձ և հեռավոր գյուղերից միասնական քննություններին մասնակցած դիմորդները, իսկ քիմիայից և աշխարհագրությունից՝ բարձր լեռնային գյուղերից մասնակցածները:

9-րդ և 10-րդ աղյուսակներում ներկայացված են միասնական քննություններից 18-20 միջին միավորներ հավաքած շրջանավարտներ ունեցած սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերի դպրոցների վերաբերող տվյալներ:

Աղյուսակ 9. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած սահմանամերձ և հեռավոր գյուղերի դպրոցները

Վարչատարածքային միավորը	Ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Քննության մասնակիցների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն				
Սյունիք	Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց	10	2	18.0
	Ագարակի միջնակարգ դպրոց	34	11	18.1
Անգլերեն				
Արարատ	Ռանչպարի միջնակարգ դպրոց	9	2	19.9
Արմավիր	Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջն. դպրոց	14	2	18.4
Սյունիք	Ագարակի միջնակարգ դպրոց	34	7	19.4
Տավուշ	Խաշթառակի միջնակարգ դպրոց	12	2	18.3
	Կոթիի միջնակարգ դպրոց	16	2	18.0
Ֆրանսերեն				
Տավուշ	Աչաջրի միջնակարգ դպրոց	32	2	18.9
Ֆիզիկա				
Արարատ	Արմաշի միջնակարգ դպրոց	12	2	18.6
Տավուշ	Բերդավանի միջնակարգ դպրոց	33	5	18.1
Հայոց պատմություն				
Տավուշ	Նորաշենի միջնակարգ դպրոց	14	2	18.1

Աղյուսակում ներկայացված սահմանամերձ և հեռավոր գյուղերի դպրոցներից 18-ից բարձր միջին միավոր հավաքած դիմորդների ամենամեծ թվերով աչքի են ընկել Սյունիքի մարզի Ագարակի միջնակարգ դպրոցը (հայոց լեզվից և անգլերենից) և Տավուշի մարզի Բերդավանի միջնակարգ դպրոցը (ֆիզիկայից):

Աղյուսակ 10. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած բարձր լեռնային գյուղերի դպրոցները

Վարչատարածքային միավորը	Ուսումնական հաստատությունը	Շրջանակարտների թիվը	Քննության մասնակիցների թիվը	Միջին միավորը
Մաթեմատիկա				
Գեղարքունիք	Ծովագյուղի միջնակարգ դպրոց	35	2	19.4
Աշխարհագրություն				
Գեղարքունիք	Գեղիովտի թիվ 2 միջնակարգ դպրոց	52	3	19.0
Քիմիա				
Գեղարքունիք	Վաղաշենի միջնակարգ դպրոց	43	2	18.8
Կենսաբանություն				
Արագածոտն	Նորաշենի միջնակարգ դպրոց	14	2	19.6
Գեղարքունիք	Վաղաշենի միջնակարգ դպրոց	43	2	19.4

3.3. Միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների

Աղյուսակ 11-ում ներկայացված են 2017 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների (ավագ և միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ և այլն) և այդ քննությունների ընդհանուր միջին միավորները: Հաստացված շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը ըստ ուսումնական հաստատության տեսակի: Տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորին հավասար կամ դրանից բարձր միջին միավորների վանդակները գունավորված են: Այն դեպքում, երբ միջին միավորը ներկայացված է մեկ դիմորդով, նրա միավորը աղյուսակում որպես միջին միավոր հաշվի չի առնվել:

Աղյուսակ 11. 2017 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների

Ֆնտական առարկաները	Ավագ դպրոցներ		Միջնակարգ դպրոցներ		Վարժարաններ		Կրթամոտիվներ		Այլ ուսումնական հաստատություններ		Ընդամենը միջին միավորը
	նասնակցների քիվը	միջին միավորը	նասնակցների քիվը	միջին միավորը	նասնակցների քիվը	միջին միավորը	նասնակցների քիվը	միջին միավորը	նասնակցների քիվը	միջին միավորը	
Պետական ուսումնական հաստատություններ											
Հարց լեզու և հայ գրականություն	2683	13.2	1714	12.9	308	12.8	23	14.1	11	11.4	12.9
Անգլերեն	2399	14.5	1016	13.8	349	14.5	40	16.2	12	13.5	14.4
Մաթեմատիկա	2138	11.5	1284	10.9	703	11.6	43	13.4	12	11.0	11.3
Կենսաբանություն	693	13.7	337	12.9	81	13.8	7	15.0	1	16.5'	13.4
Ֆիզիկա	654	12.4	409	11.3	429	11.1	16	14.0	3	10.8	11.5
Քիմիա	639	12.9	254	12.7	76	12.8	7	12.3	1	15.75'	12.7
Հարց պատմություն	623	12.9	383	11.8	57	12.9	4	11.1	1	6.25'	12.1
Ռուսաց լեզու	159	11.5	146	11.0	85	7.5	1	10.5'			10.2
Սիտությունագրություն	97	12.4	143	12.2	15	12.4	1	16.25'	1	14.75'	12.1
Տրամաբան	69	15.7	50	15.7	3	11.0	1	19.75'			15.6
Գեոմետրիկա	32	16.0	79	15.7	3	11.7					15.6
Համաշխարհային պատմություն	19	14.0	52	15.3	3	13.8					14.7
Բաղանդան	4	11.9			1	18.0'					14.3
Բաղանդան	1	17.25'	1	17.0'							17.1

Ոչ պետական ուսումնական հաստատություններ											
Հարց լեզու և հայ գրականություն	11	15.2			31	15.6	3	16.4	76	13.8	12.9
Անգլերեն	12	14.9			37	16.4	2	16.3	93	14.8	14.4
Մաթեմատիկա	6	10.6			28	14.3	9	11.7	75	12.6	11.3
Կենսաբանություն	7	19.5			9	17.8	1	18.0'	27	14.3	13.4
Ֆիզիկա					13	16.0	5	14.1	22	13.9	11.5
Քիմիա	7	19.2			7	15.1	1	19.5'	21	13.2	12.7
Հարց պատմություն	4	17.6			13	14.6	1	5.75'	23	13.6	12.1
Ռուսաց լեզու									2	10.4	10.2
Սիտությունագրություն	2	13.5							3	9.2	12.1
Տրամաբան									3	17.3	15.6
Գեոմետրիկա							2	15.3	2	19.8	15.6
Համաշխարհային պատմություն									1	11.75'	14.7
Բաղանդան					1	20.0'					14.3

* - քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ նրա ցուցանիշը որպես միջին միավոր չի ներկայացվում:

Առյուսակ 11-ից երևում է, որ **պետական ուսումնական հաստատությունները** ներկայացրած դիմորդներից ավագ դպրոցների շրջանավարտները քիմիայից, հայոց պատմությունից, ռուսաց լեզվից, աշխարհագրությունից, ֆրանսերենից և գերմաներենից հավաքել են ամենաբարձր միջին միավորները: Այս դպրոցներից հայտագրված դիմորդների հավաքած գրեթե բոլոր միջին միավորները, բացի համաշխարհային պատմության, իսպաներենի և իտալերենի միջիններից, գերազանցել են համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Պետական ավագ դպրոցների ամենաբարձր միջին միավորը եղել է գերմաներենից (16.0), ամենացածրը՝ մաթեմատիկայից և ռուսաց լեզվից (11.5):

Հայոց լեզվից և հայ գրականությունից, քիմիայից, ռուսաց լեզվից, աշխարհագրությունից, ֆրանսերենից, գերմաներենից և համաշխարհային պատմությունից միջնակարգ դպրոցների շրջանավարտ դիմորդների հավաքած միջին միավորները բարձր (հավասար) են եղել համապատասխան քննության ընդհանուր միջին միավորից: Ամենաբարձր միջին միավորը դիտարկվել է գերմաներենից և ֆրանսերենից (15.7), ամենացածրը՝ մաթեմատիկայից (10.9):

Ընդհանուր միջին միավորներից բարձր միջին միավորներ պետական վարժարանների դեպքում դիտարկվել են անգլերենից, մաթեմատիկայից, կենսաբանությունից, քիմիայից, հայոց պատմությունից և աշխարհագրությունից: Այդ հաստատություններից ներկայացած դիմորդների ամենաբարձր միջին միավորը եղել է անգլերենից (14.5), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (7.5):

Իտալերենի քննությանը վարժարանների շրջանավարտները չեն մասնակցել:

Պետական կրթահամալիրներից ներկայացած դիմորդների հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի, մաթեմատիկայի, կենսաբանության և ֆիզիկայի քննությունների միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Ամենաբարձր միջին միավորը եղել է անգլերենից (16.2), ամենացածրը՝ հայոց պատմությունից (11.1): Գերմաներենի, իսպաներենի, իտալերենի և համաշխարհային պատմության քննություններին այս հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել:

Բոլոր առարկաների միասնական քննություններին պետական հանրակրթական այլ ուսումնական հաստատություններից (հատուկ դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և այլն) հայտագրված դիմորդների հավաքած միջին միավորները ցածր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Ամենաբարձր միջին միավորը դիտարկվել է անգլերենից (13.5), ամենացածրը՝ ֆիզիկայից (10.8): Բացի անգլերենից, մյուս օտար լեզուների և համաշխարհային

պատմության քննություններին այդ հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել:

Օտար լեզուների (բացի անգլերենից), քիմիայի, աշխարհագրության և հայոց պատմության քննություններից ըստ ուսումնական հաստատության տեսակի դիտարկված ամենաբարձր միջին միավորները հավաքել են պետական ավագ դպրոցներից հայտագրված դիմորդները: Միջնակարգ դպրոցներից հայտագրվածներն աչքի են ընկել ֆրանսերենի և համաշխարհային պատմության, վարժարանները՝ հայոց պատմության և աշխարհագրության, կրթահամալիրները՝ հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի, մաթեմատիկայի, կենսաբանության և ֆիզիկայի ամենաբարձր միջին միավորներով:

Ոչ պետական ավագ դպրոցների շրջանավարտները մասնակցել են հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի, մաթեմատիկայի, կենսաբանության, քիմիայի, հայոց պատմության և աշխարհագրության միասնական քննություններին, որոնցից հավաքած բոլոր միջին միավորները (բացի մաթեմատիկայից) գերազանցել են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորին: Ոչ պետական ուսումնական հաստատություններից ավագ դպրոցների շրջանավարտները հավաքել են կենսաբանության, քիմիայի, հայոց պատմության և աշխարհագրության ամենաբարձր միջին միավորները (համապատասխանաբար՝ 19.5, 19.2, 17.6 և 13.5): Ոչ պետական ավագ դպրոցների դեպքում դիտարկված ամենաբարձր միջին միավորը եղել է կենսաբանությունից (19.5), ամենացածրը՝ մաթեմատիկայից (10.6):

Ոչ պետական վարժարանները ներկայացրած դիմորդները մասնակցել են հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի, մաթեմատիկայի, կենսաբանության, քիմիայի, հայոց պատմության և իսպաներենի քննություններին: Անգլերենի, մաթեմատիկայի և ֆիզիկայի քննություններից ըստ ուսումնական հաստատության տեսակի դիտարկված ամենաբարձր միջին միավորները (համապատասխանաբար՝ 16.4, 14.3 և 16.0) հավաքել են ուսումնական այս հաստատություններից հայտագրված դիմորդները: Վերջիններիս հավաքած ամենաբարձր միջին միավորը եղել է կենսաբանությունից (17.8), ամենացածրը՝ մաթեմատիկայից (14.3):

Ոչ պետական կրթահամալիրները ներկայացրած դիմորդները մասնակցել են հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի, մաթեմատիկայի, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի, հայոց պատմության և գերմաներենի քննություններին: Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից հայոց լեզվի և հայ գրականության միասնական քննությանը մասնակցած դիմորդների հավաքած ամենաբարձր միջին միավորն (16.4) արձանագրվել է կրթահամալիրների շրջանավարտների արդյունքներում: Համապատասխան ընդհանուր միջին միա-

վորից բարձր են եղել նաև անզլերենի, մաթեմատիկայի և ֆիզիկայի միջին միավորները: Ամենաբարձր միջին միավորը եղել է հայոց լեզվից և հայ գրականությունից (16.4), ամենացածրը՝ մաթեմատիկայից (11.7): Ռուսաց լեզվի, ֆրանսերենի, իսպաներենի, համաշխարհային պատմության և աշխարհագրության քննություններին ոչ պետական կրթահամալիրների շրջանավարտները չեն մասնակցել:

Ոչ պետական հանրակրթական այլ ուսումնական հաստատություններից միասնական քննություններին մասնակցած դիմորդների հավաքած միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորներից (բացի աշխարհագրության և համաշխարհային պատմության միջիններից): Ամենաբարձր միջին միավորը եղել է գերմաներենից (19.8), ամենացածրը՝ աշխարհագրությունից (9.2):

Համեմատելով պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ցուցանիշները՝ նկատում ենք, որ հիմնականում ավելի բարձր են եղել ոչ պետական հաստատություններից ներկայացած դիմորդների հավաքած միջին միավորները: Կրթահամալիրների դեպքում մաթեմատիկայի միջին միավորով առաջատար են եղել պետական, իսկ հայոց լեզվի և հայ գրականության, անզլերենի և ֆիզիկայի միջիններով՝ ոչ պետական կրթահամալիրները:

Հանրագումարի բերելով աղյուսակ 11-ի տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ հիմնականում բարձր են եղել ավագ դպրոցներից, վարժարաններից, պետական կրթահամալիրներից և ոչ պետական հանրակրթական ուսումնական այլ հաստատություններից հայտագրված դիմորդների միջին միավորները:

Կենսաբանության, քիմիայի, հայոց պատմության և աշխարհագրության ամենաբարձր միջին միավորները (համապատասխանաբար՝ 19.5, 19.2, 17.6 և 13.5) հավաքել են ոչ պետական ավագ դպրոցներից հայտագրված դիմորդները, ռուսաց լեզվինը (11.5)՝ պետական ավագ դպրոցներից, համաշխարհային պատմությանը (15.3)՝ միջնակարգ դպրոցներից, անզլերենինը (16.4), մաթեմատիկայինը (14.3) և ֆիզիկայինը (16.0)՝ ոչ պետական վարժարաններից, հայոց լեզվինը և հայ գրականությանը (16.4)՝ ոչ պետական կրթահամալիրներից, ֆրանսերենինը (17.3) և գերմաներենինը (19.8)՝ ոչ պետական այլ ուսումնական հաստատություններից հայտագրվածները: Պետք է նշել, որ ոչ պետական ուսումնական հաստատություններից միասնական քննություններին մասնակցած դիմորդների թիվն անհամեմատ փոքր է եղել պետական հաստատություններից մասնակցածների թվից:

Աղյուսակ 12-ում ներկայացված են միասնական քննություններից 18-ից բարձր միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները: 19-20 միավորների վանդակները գունավորած են:

Աղյուսակ 12. Միասնական քննությունների 18-ից բարձր միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Երջանակաբաների թիվը	Ֆինանսյան ստանդարտների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն				
Երևան	«Գերմինոս» կրթահամալիր	4	3	18.7
	«Շ. Շահամիրյան» վարժարան	9	2	18.3
Արմավիր	Նոր Արտագերսի միջն. դպրոց	13	2	18.3
	Հայթաղի միջնակարգ դպրոց	12	2	18.3
	Այգեշատի միջնակարգ դպրոց	9	4	18.1
Գեղարքունիք	Վարսերի միջնակարգ դպրոց	12	2	20
	Լճաշենի միջնակարգ դպրոց	35	3	19.9
	Դղնաշենի միջնակարգ դպրոց	11	2	19.1
	Նորատուսի թիվ 1 միջն. դպրոց	20	4	18.4
Կոտայք	Լեռնահիստի միջնակարգ դպրոց	23	6	18.6
Շիրակ	Փանինի միջնակարգ դպրոց	23	7	18.1
	Կապանի թիվ 10 միջն. դպրոց	11	2	19.3
	Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց	10	2	18
Ռուսաց լեզու				
Երևան	Թիվ 109 ավագ դպրոց	68	2	20
Կոտայք	Լեռնահիստի միջն. դպրոց	23	2	19.5
Շիրակ	Գյումրու «Ավադեմիական» վարժ.	68	2	18.1
Անգլերեն				
Երևան	«Գերմինոս» կրթահամալիր	4	3	19.9
	«Մաշտոց» երկարօրյա դպրոց	9	3	19.2
	Թիվ 97 ավագ դպրոց	54	8	18
Արագածոտն	Ագարակի միջնակարգ դպրոց	18	3	19.5
	Ներքին Բազմաբերդի միջն. դպր.	17	5	18.4
	Զարինջայի միջնակարգ դպրոց	7	3	18

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Երջանակաբաների թիվը	Ֆինանսյան ստանդարտների թիվը	Միջին միավորը
Մաթեմատիկա				
Երևան	«Գերմինոս» կրթահամալիր	4	2	20
Արարատ	Մխչյանի միջն. դպրոց	34	2	18.1
Գեղարքունիք	Մովսեսգուղի միջնակարգ դպրոց	35	2	19.4
Տավուշ	Հայթաղի միջնակարգ դպրոց	9	2	18.5
Կենսաբանություն				
Երևան	«Ակադեմիական» ավագ դպրոց	32	6	19.4
	Թիվ 112 ավագ դպրոց	84	4	18.2
Արագածոտն	Նորաշենի միջնակարգ դպրոց	14	2	19.6
Արարատ	Վերին Արաաշատի միջն. դպրոց	39	3	19.8
Արմավիր	«Էօրնեկեան» միջնակարգ դպրոց	32	7	19.8
Գեղարքունիք	Վաղաշենի միջնակարգ դպրոց	43	2	19.4
	Մովսեսի միջնակարգ դպրոց	43	2	19
	Վարսերի միջնակարգ դպրոց	12	2	18.6
Շիրակ	Թորոսգյուղի միջնակարգ դպրոց	5	2	19.4
Սյունիք	Կապանի թիվ 2 ավագ դպրոց	84	5	19.7
	Քաջարանի թիվ 1 միջն. դպրոց	38	2	18.1
Վայոց ձոր	Մալիշյայի թիվ 1 միջնակարգ դպրոց	21	2	19.1
Տավուշ	Դիլիջանի թիվ 5 միջնակարգ դպրոց	13	2	18.1
Քիմիա				
Երևան	«Ակադեմիական» ավագ դպրոց	32	6	19
Արագածոտն	Նորաշենի միջնակարգ դպրոց	14	2	18.8
Արմավիր	«Էօրնեկեան» միջնակարգ դպրոց	32	5	19.2
Գեղարքունիք	Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոց	43	2	18.8
Կոտայք	Գեղաշենի միջնակարգ դպրոց	38	2	19

Արարատ	Ռանսպար գույի միջև. դպրոց	9	2	19.9
	Մարմարաշենի միջև. դպրոց	30	2	19.1
	Մխչյանի միջնակարգ դպրոց	34	4	18.1
Արմավիր	Ջրառատի միջնակարգ դպրոց	21	2	19.1
	Այգեվանի միջնակարգ դպրոց	15	2	18.9
	Արաբոյի միջնակարգ դպրոց	14	2	18.4
	Հայկաշենի միջնակարգ դպրոց	13	2	18.1
	Լուկաշիի միջնակարգ դպրոց	16	2	18
Վերաբրանիք	Լորատուսի թիվ 1 միջև. դպրոց	20	3	18.8
Լոռի	Լեռնապատի միջնակարգ դպրոց	21	2	19.1
	Վանաձորի սնթ. և բնագ. առարկ. խոր. ուսուց. հասունկ դպրոց	25	5	18.1
Կոտայք	Լեռնանիարի միջնակարգ դպրոց	23	5	18.6
	Ալավերտի միջնակարգ դպրոց	17	2	18.1
Մյանիք	Կապանի թիվ 10 միջև. դպրոց	11	2	19.8
	Ագարակի միջնակարգ դպրոց	34	7	19.4
Վարդ ձոր	Վարչի քաղաք. հանրակրթ. վարժ.	25	6	19.1
Տավուշ	Խաչաբուսի միջնակարգ դպրոց	12	2	18.3
	Կոթիի միջնակարգ դպրոց	16	2	18
Տրանսերեն				
Երևան	Թիվ 189 ավագ դպրոց	124	2	19.3
	Թիվ 2 ավագ դպրոց	121	2	18.3
Արտաշատ	Ապարանի ավագ դպրոց	51	2	19.9
	Մաստարայի միջնակարգ դպրոց	35	2	19
	Վարդենուտի միջև. դպրոց	13	2	18.4
Արարատ	Այնթապի թիվ 2 միջև. դպրոց	42	2	18.1
Կոտայք	Քասախի թիվ 1 միջև. դպրոց	29	2	19.4
	Մեղրաձորի միջնակարգ դպրոց	34	2	19.1
Տավուշ	Գանձաքարի միջնակարգ դպրոց	32	2	19
	Ալաշքի միջնակարգ դպրոց	32	2	18.9

Շիրակ	Փոքր Մանաշի միջնակարգ դպրոց	21	2	19.8
Մյանիք	Կապանի թիվ 2 ավագ դպրոց	84	5	19.2
Տիգրիկ				
Երևան	«Երևակ» կրթահամալիր	25	3	18.9
Արարատ	Արմաշի միջնակարգ դպրոց	12	2	18.6
Տավուշ	Բերդավանի միջնակարգ դպրոց	33	5	18.1
Աշխարհագրություն				
Արմավիր	Սեճանրի թիվ 2 ավագ դպրոց	58	2	19.6
Վերաբրանիք	Մարտունու ավագ դպրոց	59	4	19.1
	Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոց	52	3	19
Կոտայք	Աբովյանի թիվ 4 ավագ դպրոց	93	2	18
Շիրակ	«Տոտո» վարժարան	98	2	18.4
Մյանիք	Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոց	20	3	18.5
Հայրց պատմություն				
Երևան	«Ալադինիական» ավագ դպրոց	32	3	19.4
Արմավիր	Քարակերտի թիվ 1 միջնակարգ դպրոց	17	2	18
Կոտայք	Արինջի միջնակարգ դպրոց	40	2	18.1
Տավուշ	Լորաշենի միջնակարգ դպրոց	14	2	18.1
Գերաներեն				
Երևան	«Մաշտոց» երկարօրյա դպրոց	9	2	19.4
Արմավիր	Մարդաբապատի միջնակարգ դպրոց	27	2	18.5
Վերաբրանիք	Մանի Խ. Աբովյանի անվ. ավան դպր.	102	2	19.3
	Ն. Գեղաշենի թիվ 1 միջև. դպրոց	73	5	18.4
Շիրակ	Գյումրու թիվ 3 ավագ դպրոց	56	2	19
	Փանկի միջնակարգ դպրոց	23	3	18.5
Մյանիք	Կապանի թիվ 2 ավագ դպրոց	84	2	18.5

Այդուսակից երևում է, որ դիտարկված ուսումնական հաստատություններում 19-20 միավորներ չեն արձանագրվել միայն ֆիզիկայից:

3.4. Միջին միավորները ըստ սեռերի

Այդուսակ 13-ում ըստ սեռերի ներկայացված են 2017 թ. միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Յուրաքանչյուր սեռին համապատասխանող սյունակում գունավորած վանդակներում ներկայացված են միասնական քննությունների համապատասխան ընդհանուր միջին միավորին հավասար կամ դրան գերազանցող միջին միավորները:

Աղյուսակ 13. 2017 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ սեռերի

Քննական առարկաները	Ընդհանուր		Աղջիկներ		Տղաներ	
	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն	5307	12.9	4089	13.2	1218	11.9
Մաթեմատիկա	4586	11.3	1762	11.7	2824	11.0
Անգլերեն	4158	14.4	2922	14.8	1236	13.4
Ֆիզիկա	1683	11.5	357	12.9	1326	11.2
Կենսաբանություն	1265	13.4	796	13.2	469	13.6
Հայոց պատմություն	1248	12.1	739	12.2	509	12.0
Քիմիա	1098	12.7	661	12.4	437	13.2
Ռուսաց լեզու	544	10.2	326	11.7	218	8.0
Աշխարհագրություն	282	12.1	169	12.2	113	12.0
Ֆրանսերեն	126	15.6	107	15.9	19	14.1
Գերմաներեն	119	15.6	88	16.0	31	14.6
Համաշխարհային պատմություն	79	14.7	54	14.5	25	15.1
Իսպաներեն	6	14.3	6	14.3		
Իտալերեն	2	17.1			2	17.1

Աղյուսակ 13-ից երևում է, որ բացի կենսաբանության, քիմիայի և համաշխարհային պատմության քննություններից, մյուսներից աղջիկների հավաքած միջին միավորները հավասար կամ բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Իսպաներենի քննությանը մասնակիցները եղել են միայն աղջիկներ, իտալերենինը՝ տղաներ:

Կենսաբանության, քիմիայի և համաշխարհային պատմության քննություններից տղաների հավաքած միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորներից:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների միասնական քննություններից աղջիկների ամենաբարձր միջին միավորը եղել է գերմաներենից (16), տղաներինը՝ համաշխարհային պատմությունից (15.1):

Աղջիկների ամենացածր միջին միավորը եղել է մաթեմատիկայից և ռուսաց լեզվից (11.7), տղաներինը՝ ռուսաց լեզվից (8):

4. Թեստեր և թեստային առաջադրանքներ

4.1. Թեստերի կառուցվածքը և գնահատումը

2017 թ. միասնական քննությունների թեստերում կատարվել են մասնակի փոփոխություններ: Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների միասնական քննությունների թեստերի որոշ առաջադրանքներում փոխվել են թվային տվյալները: Օտար լեզուների թեստերի մի քանի ընտրովի պատասխանով առաջադրանքներ փոխարինվել են կարճ պատասխան պահանջող առաջադրանքներով:

2017 թ. պետական միասնական քննություններ հանձնած դիմորդները ավարտական քննություններ են հանձնել միայն «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից:

Միասնական քննությունների թեստերը կազմված են եղել ընտրովի, կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից:

Ընտրովի պատասխանով առաջադրանքի պատասխանի 4 հնարավոր տարբերակներից (դիստրակտորներից) ճիշտ է միայն մեկը: Կարճ պատասխանով առաջադրանքները 2 տիպի են: Դրանցից մեկի դեպքում պատասխանը մեկ թիվ է կամ մի քանի թվեր, որոնց հաջորդականությունը պահպանելը պարտադիր է: Մյուս տիպի դեպքում թվային հաջորդականության պահպանումը պարտադիր չէ: Պնդումների փունջը կազմվում է 6 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի հնարավոր պատասխաններն են՝ «Ճիշտ է», «Միայն է», «Չգիտեմ», և դրանցից պետք է ընտրել միայն մեկը:

Բոլոր թեստերի առավելագույն միավորը 80 է (50 միավոր՝ Ա, 30 միավոր՝ Բ մակարդակներից): Գնահատման 80 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է՝

$$U=0.25 * U_{80}$$

բանաձևով, որտեղ U -ն միավորն է 20 միավորանոց սանդղակում, U_{80} -ը՝ 80 միավորանոց սանդղակում:

Դրական են համարվել 7.5 և ավելի միավորները:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց համակարգի տրվել է 0.25 միավոր (ըստ 80 միավորանոց համակարգի՝ 1 միավոր):

Պնդումների փնջերը կազմված են եղել 6 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար, ըստ գնահատման 20 միավորանոց համակարգի, տրվել է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի համար՝ 0.125 միավոր:

տասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվել է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվել և չի հանվել: Ամբողջ փնջին միավոր չի տրվել նաև պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում: Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորները չեն ազդել:

4.2. Պետական միասնական քննությունների թեստերի բարդությունը և հուսալիությունը

Աղյուսակ 14-ում ներկայացված են թեստերի բարդության և հուսալիության գործակիցները: Մասնակիցների փոքրաթիվ լինելու պատճառով իսպաներենի և իտալերենի թեստերը, ինչպես նաև մի քանի այլ առարկաների լրացուցիչ փուլի թեստերը վերլուծության չեն ենթարկվել, քանի որ սակավաթիվ մասնակիցների դեպքում ըստ որակական բնութագրիչների վերլուծության արդյունքները հավաստի չեն համարվում: Աղյուսակի մզեցված վանդակներում ներկայացված են հեշտ թեստերի բարդության գործակիցները:

Աղյուսակ 14. 2017 թ. պետական միասնական քննությունների թեստերի բարդությունը⁷ և հուսալիությունը⁸

Ֆննական ստորական	Թեստի համարը	Մտանովիցների բնիվ	Ֆննաթրահը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը	Ֆննական ստորական	Թեստի համարը	Մտանովիցների բնիվ	Ֆննաթրահը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը			
Հարցը Լեզու և հայր գրավանդարան	1	1252	միասնական	13.4	0.69	0.947	Ֆրանսիական	1	240	միասնական	13.2	0.68	0.966			
			ավարտական	14.8	0.71	0.914					13.4	0.68	0.967			
	2	1240	միասնական	12.9	0.67	0.951					13.1	0.67	0.967			
			ավարտական	14.4	0.68	0.918					12.7	0.65	0.971			
	3	1247	միասնական	13.3	0.69	0.949	Անգլոսալոնացիական	1	283	միասնական	13.3	0.69	0.966			
			ավարտական	14.7	0.7	0.916								13.5	0.7	0.967
	4	1246	միասնական	13.1	0.68	0.953								13.9	0.72	0.968
			ավարտական	14.5	0.69	0.922								14.1	0.72	0.973
	5-8	311	միասնական	10	0.52	0.953	5-8	139	10.7	0.55	0.954					
			ավարտական	12.1	0.54	0.93	Ալբանացիական	1	68	միասնական	12.8	0.66	0.959			
1	295	միասնական	12.3	0.64	0.961	13.1								0.68	0.928	
		ավարտական	14.3	0.69	0.928	12.3								0.64	0.959	
2	292	միասնական	12.3	0.64	0.964	4								67	11.2	0.59

⁷ Բարդություն: Թեստը համարվում է շատ հեշտ, երբ բարդության գործակիցը (P) գտնվում է 0.9-1.0 սահմաններում: $0.75 \leq P \leq 0.89$ սահմաններում թեստը հեշտ է, $0.30 \leq P \leq 0.74$ սահմաններում՝ միջին բարդության, $0.20 \leq P \leq 0.29$ սահմաններում՝ բարդ, $P \leq 0.19$ դեպքում՝ շատ բարդ:

⁸ Հուսալիություն: Հուսալիության գործակից՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Կատեգորիա	Կոդ	Վիճակ	Միջին ցուցանիշներ			Կատեգորիա	Կոդ	Վիճակ	Միջին ցուցանիշներ			
			Միջին	Ստանդարտ շեղում	Կորելացիոն գործակից				Միջին	Ստանդարտ շեղում	Կորելացիոն գործակից	
Մտքեռևակներ	3	288	ավարտական	14.3	0.68	0.935	Մեղմ- բնի	1	983	14.8	0.74	0.968
			միասնական	12.2	0.64	0.964		2	969	14.6	0.73	0.968
	ավարտական	14.1	0.67	0.935	3	976		14.5	0.73	0.965		
	միասնական	12.1	0.63	0.96	4	964		14.2	0.71	0.968		
	4	292	ավարտական	14.1	0.68	0.931	5-8	263	12	0.59	0.964	
			միասնական	11.6	0.61	0.971	Ծառայ- վելու	1	124	10.1	0.51	0.952
	ավարտական	14	0.66	0.959	2	130		10.4	0.52	0.959		
	միասնական	11.8	0.64	0.948	3	127		10.2	0.51	0.952		
ավարտական	15.9	0.78	0.922	4	120	10.4		0.52	0.938			
Մտքեռևակներ	1	1072	միասնական	11.2	0.61	0.948	Տրամա- բնի	1	33	16.1	0.8	0.969
			ավարտական	15.5	0.76	0.924		2	30	16.2	0.81	0.955
	միասնական	11.2	0.61	0.943	3	32		15	0.75	0.961		
	ավարտական	15.3	0.76	0.918	4	30		15.2	0.76	0.966		
	2	1042	միասնական	11.6	0.63	0.948	Չկարգ- ված	1	29	16	0.8	0.976
			ավարտական	15.7	0.77	0.920		2	29	16.9	0.84	0.964
	միասնական	9.8	0.53	0.967	3	27		14.3	0.67	0.938		
	ավարտական	13.2	0.62	0.956	4	28		15.7	0.76	0.958		
	3	1067	միասնական	11.6	0.63	0.948	Համազի- պար- մաբան	1	23	14.9	0.75	0.961
			ավարտական	15.7	0.77	0.920		2	19	13.8	0.69	0.957
միասնական	9.8	0.53	0.967	3	17	14.5		0.73	0.976			
ավարտական	13.2	0.62	0.956	4	18	15.4		0.77	0.946			
Տեղեկներ	345	միասնական	12.2	0.63	0.968							
		ավարտական	11.2	0.59	0.971							
		միասնական	12.1	0.63	0.969							
		ավարտական	11.6	0.61	0.967							
		միասնական	9	0.44	0.954							

Աղյուսակ 14-ից երևում է, որ 2017 թ. միասնական քննությունների թեստերի մեծ մասն ունեցել է միջին բարդություն և մեծ հուսալիություն: Ամենափոքր բարդության գործակից (0.44) ունեցել են ֆիզիկայի լրացուցիչ փուլի թեստերը, ամենամեծ բարդության գործակից (0.84)՝ գերմաներենի քննության 2-րդ թեստը:

Միասնական քննությունների բոլոր թեստերի հուսալիությունը եղել է մեծ:

5. Բուհերի ընդունելության մրցույթը

5.1. Ընդունելության մրցույթի կազմակերպումը

2017 թ. բուհերի ընդունելության մրցույթն անցկացվել է ԳԹԿ-ում՝ համակարգչային ծրագրերի միջոցով: Մրցույթին չեն մասնակցել զուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերի դիմորդները: Բացառություն են կազմում միայն ներբուհական քննություններ պահանջող մասնագիտություններով ՀԱՊՀ-ում և ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղում, ՀՊՍՀ-ում, ՃՇՀԱՀ-ում, Գյումրու մանկավարժական ինստիտուտում, Վանաձորի պետական համալսարանում և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հայտագրված դիմորդները:

Մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Բուհերում հայտագրված 9789 դիմորդներից 9738-ը դիմել են ՀՀ պետական, 51-ը՝ ոչ պետական բուհեր: Հայտագրվածներից 50 դիմորդ բուհի դիմում-հայտում նշած մասնագիտությունների համար անցողիկ միավորներից պակաս

միավոր ունենալու պատճառով մրցույթից դուրս է մնացել, 95-ը ատեստատ չներկայացնելու պատճառով չի մասնակցել մրցույթին:

Մրցույթի առաջին փուլին, որն ամփոփվել է հուլիսի 15-ին, համաձայն իրենց դիմում-հայտերում նշած մասնագիտությունների, մասնակցել է դրական միավորներ հավաքած 9030 դիմորդ: Նրանցից 267-ը (3%) մրցույթին մասնակցել են միայն ներբուհական քննությունների արդյունքներով:


Մրցույթի երկրորդ փուլն ամփոփվել է հուլիսի 25-ին: Այս փուլին մասնակցելու համար հայտագրվել է 529 դիմորդ: Միայն ներբուհական քննությունների արդյունքներով մրցույթին մասնակցել են 42-ը (8%): Թափուր մնացած տեղերի համար հայտագրվել է 230 դիմորդ:

2017 թ. բուհերում հայտագրված 9789 դիմորդների 86.8%-ը (8495 դիմորդ) ընդունվել է ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված այս կամ այն բուհ: Նրանցից 1310-ը (15.4%) ընդունվել են անվճար, 6993-ը (82.3%)՝ վճարովի հիմունքներով, 81-ը (1%)՝ արտոնություններով և 111-ը (1.3%)՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հատկացված տեղերով: Բանակից զորացրվածների համար նախատեսված տեղերով ընդունվել է 32 դիմորդ: Նրանց նախընտրած բուհերն են ԵՊՀ-ն, ՀԱՊՀ-ն, ՀՊՏՀ-ն, ԵՊԲՀ-ն, ԵՊԼՀ-ն և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը: Անվճար հիմունքներով բոլոր ընդունվածներն ընդունվել են մրցույթի առաջին փուլում: Վճարովի հիմունքներով ընդունվածներից 6764-ը (96.7%) ընդունվել են առաջին, 229-ը (3.3%)՝ երկրորդ փուլում: Բուհ ընդունվածներից 8459-ն ընդունվել են պետական բուհեր, 36-ը՝ ոչ պետական:

Մրցույթին մասնակցելով միայն հանրակրթական ուսումնական հաստատության ավարտական կամ տարեկան գնահատականներով՝ վճարովի հիմունքներով Հայաստանի ազգային ազրարային համալսարան է ընդունվել է 513 դիմորդ:

5.2 2017 թ. ՀՀ բուհեր ընդունված դիմորդների հանրակրթական ուսումնական հաստատության ավարտական վկայականների միջին միավորները ըստ խմբերի

Դիագրամ 10. Ավարտական վկայականների միջին միավորների միջին թվաքանականը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների



Դիագրամ 11. Ավարտական վկայականների միջին միավորների միջին թվաքանականը ըստ բնակավայրերի տիպերի




Վերլուծության այս ենթաբաժնում համառոտ անդրադարձ է կատարվել 2017 թ. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից բուհեր ընդունված դիմորդների ավարտական վկայականների միջին միավորներին: Այդ ցուցանիշի միջին թվաքանականը դիտարկվել է ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի, հանրակրթական ուսումնական հաստատությունների և բուհերի կտրվածքով:

Ըստ դիագրամ 10-ի՝ ավարտական վկայականների միջին միավորների միջին թվաքանականը եղել է 14.6-16.4 սահմաններում: Ամենացածր միջին ցուցանիշ է արձանագրվել Երևանից բուհեր ընդունվածների տվյալներում (14.6): Այս տեսանկյունից ՀՀ մարզերից առաջատարը Լոռին է (14.9): Ամենաբարձր միջին ցուցանիշով առանձնացել է Վայոց ձորի մարզը:

Դիագրամ 11-ից երևում է, որ ըստ բնակավայրերի տիպերի ավարտական վկայականների միջին ցուցանիշները եղել են


Դիագրամ 12. Ավարտական վկայականների միջին միավորների միջին թվաքանականը ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների



14.7-15.7 սահմաններում: Ամենացածր միջին միավորն (14.7) արձանագրվել է խոշոր քաղաքներում, ամենաբարձրը՝ փոքր քաղաքներում (15.7):

Ավարտական վկայականների միջին միավորների միջին թվաքանականով մյուս հաստատություններից զգալիորեն տարբերվել են քոլեջները (դիագրամ 12). արձանագրված ամենացածր ցուցանիշից տարբերությունը կազմել է 5.2 միավոր: Կրթահամալիրներից բուհեր ընդունվածների միջին ցուցանիշը եղել է ամենաբարձրը (17):

Դիագրամ 13. Ավարտական վկայականների միջին միավորների միջին թվաքանականը ըստ դիմորդների ընդունված բուհերի



Դիմորդների ընդունված բուհերի կտրվածքով դիտարկումից հետևում է, որ ավարտական վկայականների ցածր միջին միավորներով դիմորդները հիմնականում ընդունվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարան: Դրան նպաստել է տարեկան կամ ավարտական գնահատականներով, առանց միասնական քննությունների ՀԱԱՀ ընդունվելու հնարավորությունը: Ավարտական վկայականների միջին միավորների նշանակալիորեն ամենաբարձր միջին ցուցանիշով (16.6) աչքի են ընկել Բժշկական համալսարան ընդունվածները: «Գլաձոր» համալսարանի ցուցանիշը (17) նշանակալի չէ, թեև ամենաբարձրն է, որովհետև այդ բուհ ընդունվել է ընդամենը 3 դիմորդ:

5.3 Հայտագրված և ընդունված դիմորդների թվերը ըստ բուհերի և ՀՀ վարչատարածքային միավորների (երկրների)

Աղյուսակ 15-ում ներկայացված են բուհ ընդունվածների տոկոսները՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և ՀՀ-ում միասնական քննություններին մասնակցած դիմորդներ ունեցած երկրների:

Աղյուսակ 15. Բուհ ընդունվածների թվերը և տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և բուհերում այլ երկրներից հայտագրվածների

		ՀՀ											ԼՂ	Վրաստան	ԱՊՀ երկրներ
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ			
Հայտագրվածների	թիվը	3515	456	587	723	634	735	846	871	618	238	454	62	40	10
	տոկոսը	35.9	4.7	6.0	7.4	6.5	7.5	8.6	8.9	6.3	2.4	4.6	0.6	0.4	0.1
Ընդունվածների	թիվը	3004	385	530	629	555	612	784	765	555	201	408	38	24	5
	տոկոսը	35.4	4.5	6.2	7.4	6.5	7.2	9.2	9.0	6.5	2.4	4.8	0.4	0.3	0.1

Ընդունվածների 99.2%-ը եղել են ՀՀ քաղաքացիներ: Ընդունված երևանցի դիմորդները կազմել են բոլոր դիմորդների 35.4%-ը:

Աղյուսակ 16. 2017 թ. բուհերի ընդունելության մրցույթի 2-րդ փուլով ընդունվածների թիվը

Բուհը	Ընդունվածների թիվը
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	141
Երևանի պետական համալսարան	57
Հայկական պետական մանկավարժական համալսարան	11
Շիրակի պետական համալսարան	5
Վանաձորի պետական համալսարան	3
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	3
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	3
Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան	2
Հայկական բժշկական ինստիտուտ	2
Երևանի «Գլաձոր» համալսարան	1
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Երևանի կրթահամալիր)	1
Ընդամենը	229

Աղյուսակ 16-ից հետևում է, որ 2017 թ. բուհերի ընդունելության մրցույթի երկրորդ փուլով ընդունված դիմորդների գրեթե 2/3-ն ընդունվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարան: Դրան նպաստել է ավարտական կամ տարեկան գնահատականներով ՀԱԱՀ ընդունվելու հնարավորությունը:

Աղյուսակ 17-ում ներկայացված են ՀՀ վարչատարածքային միավորներից և այլ երկրներից բուհեր դիմած և ընդունված դիմորդների թվերը ըստ բուհերի: Տվյալ վարչատարածքային միավորից կամ երկրից ըստ բուհերի հայտագրվածների (ընդունվածների) տոկոսները հաշվարկված են ՀՀ բուհերում այդ վարչատարածքային միավորից կամ երկրից հայտագրվածների (ընդունվածների) ընդհանուր թվից: Հայտագրված դիմորդների թիվը ներկայացված է ըստ դիմում-հայտում նշված առաջին հայտի, ընդունվածներինը՝ նաև ըստ մյուս հայտերի: Մգեցված են հայտագրվածների թվով առաջատար բուհերի ցուցանիշների վանդակները:

Շրջանակներ	Հոբանքներ	2812	959	1004	895	765	512	505	873	62	9	14	18	3	3	3	76	320	352	173	78	89	48	35	69	111	1	9789
	Հոբանքներ	28.73	9.80	10.26	9.14	7.81	5.23	5.16	8.92	0.63	0.09	0.14	0.18	0.03	0.03	0.03	0.78	3.27	3.60	1.77	0.80	0.91	0.49	0.36	0.70	1.13	0.01	100
	Որոշումներ	2579	851	837	711	714	443	462	719	55	5	6	22	3			58	273	278	146	67	65	39	23	50	89		8495
	Որոշումներ	30.36	10.02	9.85	8.37	8.40	5.21	5.44	8.46	0.65	0.06	0.07	0.26	0.04			0.68	3.21	3.27	1.72	0.79	0.77	0.46	0.27	0.59	1.05		100

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ՀԱԱՀ - Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ՀՊՏՀ - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

ԵՊՀ - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

ԵՊԲՀ - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

ՃՇՀԱՀ - Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

ՀՊՄՀ - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

ԵԿՏԱ հիմնադրամ - Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա հիմնադրամ

ՀԱՊՀ - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Երևանի կրթահամալիր)

Աղյուսակ 17-ից երևում է, որ ՀՀ վարչատարածքային միավորների մեծ մասից բուհերում հայտագրվածների և ընդունվածների թվերով առաջատարը ԵՊՀ-ն է: Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում գործող որոշ բուհերի և խոշոր բուհերի մասնաճյուղերի առկայությամբ պայմանավորված՝ այդ բուհեր դիմած և ընդունված դիմորդների տոկոսը բավական բարձր է: Դրանով մասամբ բեռնաթափվում են մայրաքաղաքում գործող բուհերը և լուծվում են սովորողների որոշ սոցիալական խնդիրներ:

Վերոհիշյալ մարզերից հայտագրվածների և ընդունվածների շրջանում 2-րդ տեղում դարձյալ ԵՊՀ-ն է:

Աղյուսակ 18-ում ներկայացված է տվյալ բուհ ընդունվածների տոկոսային կազմը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և ՀՀ բուհերի ընդունելության մրցույթին մասնակցած երկրների: Աղյուսակի մզեցված վանդակներով ընդգծված է տվյալ բուհ ընդունվածների ընդհանուր թվում ՀՀ վարչատարածքային միավորներից ընդունվածների ամենաբարձր տոկոսը:

Աղյուսակ 18. Տվյալ բուհում հայտագրված և ընդունված դիմորդների տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և ՀՀ բուհերի ընդունելության մրցույթին մասնակցած երկրների

Վարչատարածքային միավորներ (երկրներ)	Բարձրագույն ուսումնական հաստատությունները																											
	ԵՊՀ	ԵՊՀ (Բջիտակ)	ՀԱՊՀ (Երևան)	ՀԱՊՀ (Գյումրի)	ՀԱՊՀ (Վանաձոր)	ՀԱՊՀ (Երասխա)	ՀՀՀԱՀ	ՀՊՀՀ	ՀՊՀՀ (Գյումրի)	ՀՊՀՀ (Եղեղնաձոր)	ՀՊՀՀ	ԵՊՀ	ԵՊՀ (Գյումրի)	ՎՊՀ (Վանաձոր)	ՊՊՀ (Շատախ)	ԵՊՀ	ՀԱՊՀ	ՊՊՀ (Շարխա)	Հայ-ստալինյան համալսարան	Երևանի «Չրական» ակադեմիա	Մերձարևելյան «Հայրենասեր» համալսարան	Ազգայնական բնիկաբնակչության համալսարան	Հայրենական պատերազմի խաղաղության համալսարան	Հայկական բժշկական յուսուսկանաբանական ինստիտուտ	Հեռուստա- և տարվալիստի ակադեմիա	ԵՊՀԱԼ Երևան	Շտապուհներ	
Երևան	Հայր. քին	1137		490			293	451	1		170	203	1			357	352		40	3	4		2	2	3		6	3515
	Հայր. սովորող	40.43		51.09			57.23	44.92	1.32		19.47	40.20	0.31			39.89	46.01		64.52	100	28.57		66.67	66.67	16.67		66.67	35.9
	Օրացն. քին	1017		424			250	359	1		128	189	1			256	324		38	3	2				9	3	3004	
	Օրացն. սովորող	39.43		49.82			56.43	42.89	1.72		17.80	40.91	0.37			36.01	45.38		69.09	100	33.33				40.91		60	33.36
Արարատ	Հայր. քին	154		37			25	41			93	25	4			33	41								1	1	1	456
	Հայր. սովորող	5.48		3.86			4.88	4.08			10.65	4.95	1.14			3.69	5.36				7.14				5.56	100		4.66
	Օրացն. քին	137		34			20	31			74	20	3			28	38											385
	Օրացն. սովորող	5.31		4.00			4.51	3.70			10.29	4.33	1.08			3.94	5.32											4.53
Արարատ	Հայր. քին	184		78			15	75			95	34				42	39		1						3	1		587
	Հայր. սովորող	6.54		8.13			2.93	7.47			10.88	6.73				4.69	7.71		1.61						16.67	11.11		6
	Օրացն. քին	180		69			13	64			81	30				34	56		1						2			530
	Օրացն. սովորող	6.98		8.11			2.93	7.65			11.27	6.49				4.78	7.84		1.82						9.09			6.24
Արմավիր	Հայր. քին	201		74			19	88			142	43				80	73								2	1		723
	Հայր. սովորող	7.15		7.72			3.71	8.76			16.27	8.51				8.94	9.54								14.29	5.56		7.39
	Օրացն. քին	191		67			14	76			108	38				65	68								2			629
	Օրացն. սովորող	7.41		7.87			3.16	9.08			15.02	8.23				9.14	9.52								9.09			7.40
Օճապարանից	Հայր. քին	205	1	48			31	63			91	31			69	51	42										1	634
	Հայր. սովորող	7.29	0.58	5.01			6.05	6.27			10.42	6.14			100	5.70	5.49										11.11	6.48
	Օրացն. քին	181	1	45			27	50			82	28			50	47	41								1	1	1	555
	Օրացն. սովորող	7.02	0.68	5.29			6.09	5.97			11.40	6.06			100	6.61	5.74								16.67	4.55	20	6.53
Լոռի	Հայր. քին	121	1	28	1	88	7	43	1		27	20	2	339		38	15		1						3			755
	Հայր. սովորող	4.30	0.58	2.92	1.28	98.88	1.37	4.28	1.32		3.09	3.96	0.63	96.31		4.25	1.96		1.61						16.67			7.51
	Օրացն. քին	110	1	26	1	65	7	41	1		20	19	2	270		33	14								2			612
	Օրացն. սովորող	4.27	0.68	3.06	1.49	100	1.58	4.90	1.72		2.78	4.11	0.73	97.12		4.64	1.96								9.09			7.20
Նուբար	Հայր. քին	275	1	89			58	95			106	54				50	105		8						1			846
	Հայր. սովորող	9.78	0.58	9.23			11.33	9.46			12.14	10.69				5.59	13.73		12.90						28.57	5.56		8.64
	Օրացն. քին	262		82			57	84			95	50				47	99		6						2			784
	Օրացն. սովորող	10.16		9.64			12.87	10.04			13.21	10.82				6.61	13.87		10.91						33.33			9.23
Շիրակ	Հայր. քին	173		76			8	30	74		19	20	317	1		98	28		5								1	871
	Հայր. սովորող	6.15		2.19	97.44		1.56	2.99	97.37		2.18	3.96	99.06	0.28		10.95	3.66		8.06							11.11		8.9
	Օրացն. քին	170		20	66		7	27	56		18	18	270	1		79	27		5							1	765	
	Օրացն. սովորող	6.59		2.35	98.51		1.58	3.23	96.59		2.50	3.90	98.90	0.36		11.11	3.78		9.09							20		9.01

Մյուսերից	Հարցաբնիկ	168	35			48	18	58			52	41			63	22	109	1			1	2			618			
	Հարցառավար	5.97	3.65			100	3.52	5.78			5.96	8.12			7.04	2.88	98.20	1.61			33.33	11.11			631			
	Օպորտիստ	164	33			39	15	52			46	38			55	22	87	1		1			2		555			
	Օպորտիստ	6.36	3.88			100	3.39	6.21			6.40	8.23			7.74	3.08	97.75	1.82		16.67			9.09		653			
Վարչակազմ	Հարցաբնիկ	64	29				19	12		35	32	8			27	10		1		1					238			
	Հարցառավար	2.28	3.02				3.71	1.20		100	3.67	1.58			3.02	1.31		1.61		7.14					2.43			
	Օպորտիստ	55	27				18	10		23	25	8			25	9		1							201			
	Օպորտիստ	2.13	3.17				4.06	1.19		100	3.48	1.73			3.52	1.26		1.82							2.37			
Տարածք	Հարցաբնիկ	93	170	19		1	11	37			39	16		8	37	17		1		1	1		3		454			
	Հարցառավար	3.31	98.27	1.98		1.12	2.15	3.69			4.47	3.17		2.27	4.13	2.22		1.61		7.14	33.33		16.67		4.64			
	Օպորտիստ	86	144	19			10	37			37	17		4	35	15		1					3		408			
	Օպորտիստ	3.33	98.63	2.23			2.26	4.42			5.15	3.68		1.44	4.92	2.10		1.82					13.64		4.80			
Արտադրող	Հարցաբնիկ	19		6			4	9			3	7			9		2	3							62			
	Հարցառավար	0.68		0.63			0.78	0.90			0.34	1.39			1.01		1.80	4.84							0.63			
	Օպորտիստ	12		2			4	5			3	6			2		2	2							38			
	Օպորտիստ	0.47		0.24			0.90	0.60			0.42	1.30			0.28		2.25	3.64							0.45			
Վարչակազմ	Հարցաբնիկ	17		4			2	2			3	3			6	1		1					1		40			
	Հարցառավար	0.60		0.42			0.39	0.20			0.34	0.59			0.67	0.13		1.61					5.56		0.41			
	Օպորտիստ	13		3				1			1	1			3	1							1		24			
	Օպորտիստ	0.50		0.35				0.12			0.14	0.22			0.42	0.14							4.55		0.28			
Արտադրող	Հարցաբնիկ	1		1	1			2				1			4										10			
	Հարցառավար	0.04		0.10	1.28			0.39				0.11			0.45										0.1			
	Օպորտիստ	1						1				1			2										5			
	Օպորտիստ	0.04						0.23				0.14			0.28										0.06			
Օպորտիստ	Հարցաբնիկ	2812	173	959	78	89	48	512	1004	76	35	873	505	320	352	69	895	765	111	62	3	14	3	3	18	1	9	9789
	Օպորտիստ	2579	146	851	67	65	39	443	837	58	23	719	462	273	278	50	711	714	89	55	3	6			22		5	8495

Աղյուսակ 18-ից նույնպես երևում է, որ Երևանում գործող բուհեր ընդունվածների թվում ամենաբարձր տոկոս են կազմել երևանաբնակները: Այն մարզերում, որտեղ գործում են բուհեր, ընդունվածների ամենաբարձր տոկոսը տվյալ մարզից է: Այդ բուհերում 1-ին հայտով հայտագրվածել է ընդհանուր հաշվով 1351 դիմորդ: Տարբեր հայտերով ընդունվել է 1088-ը: Դա կազմում է 2017 թ. ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թվի 12.8%-ը:

ՀՀ ոչ պետական բուհերում հայտագրվել է 51 դիմորդ, ընդունվել՝ 36-ը:

5.4 Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 19-ում ներկայացված է 2017 թ. բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը: Ուսումնասիրվել են են 10 և ավելի շրջանավարտ ունեցած հաստատությունները:

Աղյուսակ 19. Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը

Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Վարչատարածքային միավորը	Շրջանավարտների թիվը	Ընդունվածների	
			թիվը	տոկոսը
Վանաձորի մաթեմ. և բնագիտ. առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց	Լոռի	25	22	88.0
ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	Երևան	240	208	86.7
Նոյեմբերյանի ավագ դպրոց	Տավուշ	30	24	80.0
Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց	Շիրակ	20	16	80.0
Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց	Սյունիք	43	34	79.1
«Ֆոտոն» վարժարան	Շիրակ	98	77	78.6
Կապանի թիվ 2 ավագ դպրոց	Սյունիք	84	65	77.4
Գյումրու թիվ 3 ավագ դպրոց	Շիրակ	56	43	76.8
Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	Կոտայք	80	61	76.3
Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ դպրոց	Երևան	111	84	75.7

Ըստ աղյուսակի տվյալների՝ բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առաջատար հանրակրթական ուսումնական հաստատությունը Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցն է, որի 25 շրջանավարտներից 22-ը (88%) ընդունվել են ՀՀ բուհեր: Տասնյակում բուհ ընդունվածների ամենամեծ թիվ ապահովածը եղել է ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը, որի 240 շրջանավարտներից ընդունվել են 208-ը (86.7%): Այդ տեսանկյունից 2-րդ տեղում է Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցը, որի 111 շրջանավարտներից ՀՀ բուհեր են ընդունվել 84-ը (75.7%):

Հնարավոր է, որ շրջանավարտների այն մասը, որը ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված որևէ բուհ չի ընդունվել, ընդունվել է այդ ցանկում չընդգրկված այլ բուհ:

Աղյուսակ 20-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները: Այս-

տեղ ևս ուսումնասիրվել են 2017 թ. 10 և ավելի շրջանավարտներ ունեցած հաստատությունները:

Աղյուսակ 20. Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավոր	Հանրակրթական ուսումնական հաստատություն	Ընդունվողների թիվը	Բուհ ընդունվածների		Վարչատարածքային միավոր	Հանրակրթական ուսումնական հաստատություն	Ընդունվողների թիվը	Բուհ ընդունվածների	
			թիվ	տոկոսը				թիվ	տոկոսը
Երևան	ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	240	208	86.7	Վասպուր	Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	80	61	76.3
	Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ դպրոց	111	84	75.7		Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց	65	44	67.7
	ՃՀՀԱՀ հիմնադր. ավագ դպրոց	123	93	72.4		Արթուրյանի թիվ 6 ավագ դպրոց	36	22	61.1
	ԵՊՔՀ-ի «Հերացի» ավագ դպրոց	152	110	72.4		Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց	106	64	60.4
	Թիվ 118 ավագ դպրոց	65	45	69.2		Քասախի թիվ 1 միջնակարգ դպրոց	29	17	58.6
Այրարատ	Թալինի ավագ դպրոց	30	21	70.0	Եջմաշ	Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց	20	16	80.0
	Աղտարանի ավագ դպրոց	129	80	62.0		«Չոտոն» վարժարան	98	77	78.6
	Վաթնադրյուրի միջնակարգ դպրոց	11	6	54.5		Փյունրու թիվ 3 ավագ դպրոց	36	43	76.8
	Ալարանի ավագ դպրոց	51	23	45.1		Փյունրու«Ավադեմիական» վարժարան	68	41	60.3
	Օջականի միջնակարգ դպրոց	34	15	44.1		«Պրոգրես» համալս. քաղախն դպրոց	10	6	60.0
Արարատ	Արարատի ավագ դպրոց	62	39	62.9	Այրարատ	Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց	43	34	79.1
	Արտաշատի ավագ դպրոց	56	33	58.9		Վալայանի թիվ 2 ավագ դպրոց	84	65	77.4
	Այգավանի միջնակարգ դպրոց	28	15	53.6		Միսիանի ավագ դպրոց	123	90	73.2
	Արգավանդի միջնակարգ դպրոց	17	9	52.9		Վալայանի թիվ 10 միջնակարգ դպրոց	11	8	72.7
	Տափերականի միջնակարգ դպրոց	23	12	52.2		Փոքիսի թիվ 4 ավագ դպրոց	117	83	70.9
Արմավիր	Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց	101	70	69.3	Վայոց ձոր	Եղեգնաձորի ավագ դպրոց	72	53	73.6
	Լեռնագոգի միջնակարգ դպրոց	11	7	63.6		Ձերուկի կրթահամալիր	39	21	53.8
	Մեծամորի թիվ 2 ավագ դպրոց	58	36	62.1		Վայքի ավագ դպրոց	36	17	47.2
	Թախրովի միջնակարգ դպրոց	12	7	58.3		Արենիի միջնակարգ դպրոց	17	8	47.1
	Այգեկի միջնակարգ դպրոց	15	8	53.3		Ձերուկի թիվ 3 միջնակարգ դպրոց	13	6	46.2
Օձնուրբեղ	Մարտունու ավագ դպրոց	59	37	62.7	Տավուշ	Լոյնսբերյանի ավագ դպրոց	30	24	80.0
	Չավոտի ավագ դպրոց	47	29	61.7		Իջևանի ավագ դպրոց	107	79	73.8
	Մեանի Ծ. Արթուրյանի անվան ավագ դպրոց	102	59	57.8		Վոդրի թիվ 2 միջնակարգ դպրոց	17	12	70.6
	Չավոտի թիվ 2 միջնակարգ դպրոց	30	16	53.3		Բերդի ավագ դպրոց	41	26	63.4
	Մեանի թիվ 6 միջնակարգ դպրոց	15	8	53.3		Ղիլիջանի ավագ դպրոց	47	29	61.7
Լոռի	Վանաձորի մաթ. և քննադատ. առարկաների խորացված ուսուցմանը հատուկ դպրոց	25	22	88.0					
	Լեռնացի միջնակարգ դպրոց	16	12	75.0					
	Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց	75	50	66.7					
	Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոց	43	27	62.8					
	Ալավերդու թիվ 8 ավագ դպրոց	24	15	62.5					

5.5 Սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային բնակավայրերից բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցները

Աղյուսակ 21-ում և 22-ում ըստ սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղեր ունեցող վարչատարածքային միավորների ներկայացված են 2017 թ. բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցները: Դիտարկվել են ընդունվածների մեծ թիվ ապահոված, 5 և ավելի շրջանավարտ ունեցած դպրոցները: Աղյուսակում գումարներ են 10-ից պակաս շրջանավարտ ունեցած դպրոցներին վերաբերող տողերը:

Աղյուսակ 21. 2017թ. բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցների եռյակները ըստ սահմանամերձ և հեռավոր գյուղերի

Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների			
			Թիվը	Տոկոսը	առ թվում՝ անվճար ընդունվածների	
					թիվը	տոկոսը ընդունվածների թվից
Արարատ	Ընդունվածների միջնակարգ դպրոց	9	4	44.4	1	25.0
	Արմաշի միջնակարգ դպրոց	12	5	41.7	1	20.0
	Ջանգալատան միջնակարգ դպրոց	11	4	36.4		
Արմավիր	Արագածի միջնակարգ դպրոց	16	4	25	1	25.0
	Արաբսի Ջ. Ավետիսյանի անվ. վիճել. դպր.	14	3	21.4		
	Բերքաշատի միջնակարգ դպրոց	5	1	20	1	100.0
Գեղարքունիք	Թթուջրի միջնակարգ դպրոց	15	5	33.3	2	40.0
	Վահանի միջնակարգ դպրոց	20	5	25		
	Շատվանի միջնակարգ դպրոց	10	2	20	1	50.0
Շիրակ	Բազումականի միջնակարգ դպրոց	7	4	57.1		
	Շիրակականի միջնակարգ դպրոց	11	4	36.4	1	25.0
	Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց	6	2	33.3		
Սյունիք	Կռոնիձորի միջնակարգ դպրոց	18	6	33.3		
	Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց	10	3	30	1	33.3
	Շինուհայրի միջնակարգ դպրոց	34	10	29.4	1	10.0
Վայոց ձոր	Արենիի միջնակարգ դպրոց	17	8	47.1	1	12.5
	Ելիկի միջնակարգ դպրոց	21	4	19		
	Ռինգի միջնակարգ դպրոց	11	2	18.2		
Տավուշ	Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոց	17	12	70.6	1	8.3
	Բերդավանի միջնակարգ դպրոց	33	19	57.6	5	26.3
	Աչաջրի միջնակարգ դպրոց	32	11	34.4	4	36.4

Աղյուսակ 21-ից երևում է, որ դիտարկված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Տա-

վուշի մարզի Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոցում (70.6%՝ 17 շրջանավարտներից 12-ը), իսկ ընդունվածների ամենամեծ թիվը՝ նույն մարզի Բերդավանի միջնակարգ դպրոցում (33 շրջանավարտներից 19-ը (57.6%))։ Առաջին հայտով անվճար ընդունվածների ամենամեծ թիվ ապահովել են Բերդավանի և Աչաջրի միջնակարգ դպրոցները (համապատասխանաբար՝ 5 և 4 դիմորդ)։

Աղյուսակ 22. 2017 թ. բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցների եռյակները ըստ բարձր լեռնային գյուղերի

Մարզը	Հանդուրդրական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների			
			Թիվը	Պատկանում	այդ թվում՝ անվճար ընդունվածների	
					թիվը	տոկոսը ընդունվածների թվից
Արագածոտն	Մելիքցյուղի միջնակարգ դպրոց	19	7	36.8		
	Նորաշենի միջնակարգ դպրոց	14	5	35.7		
	Արագածի թիվ 1 միջնակարգ դպրոց	17	5	29.4		
Գեղարքունիք	Վաղաշենի միջնակարգ դպրոց	43	16	37.2	1	6.3
	Վարդենիկի ավագ դպրոց	71	23	32.4		
	Ծովինարի միջնակարգ դպրոց	33	10	30.3	1	10
Կոտայք	Հատիսի միջնակարգ դպրոց	5	2	40.0		
	Սևաբերդի միջնակարգ դպրոց	5	1	20.0	1	100
Շիրակ	Թավշուտի միջնակարգ դպրոց	8	4	50.0		
	Մուսայելյանի միջնակարգ դպրոց	10	4	40.0	1	25
	Նահապետավանի միջնակարգ դպրոց	11	3	27.3		
Մյանիք	Սպանդարյանի միջնակարգ դպրոց	7	3	42.9		
	Սարնակունքի միջնակարգ դպրոց	7	1	14.3		
	Ծղուկի միջնակարգ դպրոց	5	2	40.0		

Աղյուսակ 22-ում դիտարկված բարձր լեռնային գյուղերի դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոս արձանագրվել է Շիրակի մարզի Թավշուտի միջնակարգ դպրոցում (50%՝ 8 շրջանավարտներից 4-ը), իսկ ընդունվածների ամենամեծ թիվը՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի ավագ դպրոցում (71 շրջանավարտներից 23-ը՝ 32.4%-ը)։ Առաջին հայտով անվճար ընդունված 1-ական դիմորդ են ունեցել Գեղարքունիքի մարզի Վաղաշենի և Ծովինարի, Կոտայքի մարզի Սևաբերդի և Շիրակի մարզի Մուսայելյանի միջնակարգ դպրոցները։

5.4 Ամենապահանջված մասնագիտությունները

Աղյուսակ 23-ում ներկայացված են ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ամենապահանջված մասնագիտությունները: Երևանում գործող բուհերի տվյալներում ընդգրկված չեն մարզերում գործող մասնաճյուղերի տվյալները:

Աղյուսակից հետևում է, որ մասնագիտություններից, ըստ անվճար ուսուցման հիմունքներով հայտագրվածների թվի, ամենապահանջվածը եղել է Երևանի պետական բժշկական համալսարանի «Բուժական գործ» մասնագիտությունը: Ուսուցման վճարովի հիմունքներով հայտագրվածների թվով առաջատարը նույնպես եղել է այդ մասնագիտությունը:

Աղյուսակ 23. 2017 թ. ամենապահանջված մասնագիտությունները ըստ բուհերի

Բուհ	Մտնողությունը	Միասնական քննություն				Բուհ	Մտնողությունը	Վճարովի ուսուցում			
		Միասնական քննության թվով	Տեղերի թվով	ԷՄԿ անվճար ուսուցումը ընդգրկված թվով	Տեղերի թվով			Միասնական քննության թվով	Տեղերի թվով	ԷՄԿ անվճար ուսուցումը ընդգրկված թվով	Տեղերի թվով
Անվճար ուսուցում						Վճարովի ուսուցում					
ԵՊՀ	Բուժական գործ	539	60	9	5.5	ԵՊՀ	Բուժական գործ	562	313	2	5.7
ԵՊՀ	Բնֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	283	32	9	2.9	ԵՊՀ	Ֆարմացիա	551	91	6	5.6
	Բրավազիտություն	233	2	117	2.4		Ստոմատոլոգիա	504	141	4	5.1
ՀՊՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	215	12	18	2.2	ՀՊՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	364	188	2	3.7
	Կառավարում (ըստ ոլորտի)	206	10	21	2.1		Կառավարում (ըստ ոլորտի)	320	190	2	3.3
ԵՊՀ	Ստոմատոլոգիա	162	8	20	1.7	ԵՊՀ	Բրավազիտություն	291	142	2	3.0
ՀՊՀ	Տնտեսագիտություն	162	13	12	1.7		Բնֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	277	176	2	2.8
ՃՀՀ	Դիզայն	151	12	13	1.5	ՀՊՀ	Միջազգային հարաբերություններ	264	141	2	2.7
ՀՊՀ	Հաշվապահ, հաշվառում և հարկում (ըստ լորտի)	144	9	16	1.5		Հաշվապահ, հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	255	194	1	2.6
ԵՊՀ	Միջազգային հարաբերություններ	136	2	68	1.4	ՀՊՀ	Շուկայագիտություն (մաթեմիկ) (ըստ ոլորտի)	253	76	3	2.6

Դիագրամ 14-ում ներկայացրած է 2014-2017 թթ. ժամանակահատվածում ԵՊՀ-ի, ՀՊՀ-ի և ԵՊԲՀ-ի մի քանի պահանջված մասնագիտությունների անցողիկ միավորների դինամիկան: Անցողիկ միավորների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները տեղադրված են Գնահատման և թեստավորման կենտրոնի **atc.am** կայքում:

Ինչպես երևում է դիագրամից, անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները 2014-2017 թթ. ակնհայտ աճման կամ նվազման միտում չունեն: Առանձնանում է ՀՊՀ-ի «Շուկայագիտություն» մասնագիտության անցողիկ միավորը (2015-17 թթ. նվազել է 2.5 միավորով) և ԵՊԲՀ-ի «Ֆարմացիայինը» (նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 5.75 միավորով):

Դիագրամ 14. Բարձր պահանջարկ ունեցող մի քանի մասնագիտությունների անցողիկ միավորները 2014-2017 թթ.



ԵՊՀ-ի «Իրավագիտություն» և «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությունների անվճար հիմունքներով ուսուցման հնարավորություն առաջին անգամ տրվել է 2017 թ., և նախատեսված տեղերի սղությամբ պայմանավորված (2-ական տեղ)՝ անցողիկ միավորները եղել են բարձր (համապատասխանաբար՝ 60 և 59.5):

Այլ պատկեր է վճարովի հիմունքներով ընդունելության անցողիկ միավորների դեպքում: Դիտարկված մասնագիտությունների մեծ մասի անցողիկ միավորների նվազման միտումն ակնհայտ է հատկապես վերջին 1 կամ 2 տարում:

Նշված ժամանակահատվածում բարձրացել է ԵՊՀ-ի «Բուժական գործ» մասնագիտության անցողիկ միավորը:

Անփոփում

2017 թ. պետական միասնական քննությունների արդյունքների վերլուծությունից հետևում է, որ քննությունների մասնակիցների թվի նվազման միտումը պահպանվել է: Նախորդ տարվա համեմատությամբ, 2017 թ. հայտագրվածների թիվը (10396) պակասել է 1667-ով (13.8%-ով):

➤ **Միասնական քննություններ:** 2017 թ. միասնական քննությունների հիմնական փուլում հայտագրվել է 9944, լրացուցիչ փուլում՝ 1042 դիմորդ, որոնց մի մասը հայտագրված է եղել նաև հիմնական փուլում: ՀՀ դիմորդներից 9279-ը, ԼՂՀ-ից 667-ը և արտերկրից 60-ը եղել են 2017 թ. շրջանավարտներ:

Միասնական քննություններից բացակայությունները հիմնականում չեն գերազանցել մասնակիցների թվի 5%-ը: Հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է 3 դիմորդ, 7 դիմորդ հեռացվել է քննությունից:

2017 թ. միասնական քննությունների միջին միավորները տատանվել են 10.2-ից (ռուսաց լեզու) մինչև 17.1 (իտալերեն) սահմաններում:

Միասնական քննությունների միջին միավորների աճ է արձանագրվել հիմնականում օտար լեզուներից, կենսաբանությունից և համաշխարհային պատմությունից: Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների տոկոսը բարձր է եղել հատկապես ֆիզիկայի, ռուսաց լեզվի, քիմիայի և հայոց պատմության քննություններից:

Միասնական քննությունների արդյունքների բողոքարկման 148 դիմումներից դրական լուծում է ստացել 52-ը (35.1%-ը): 2016 թ. 221-ից 49-ն է դրական լուծում ստացել (22.2%-ը):

ՀՀ վարչատարածքային միավորներից ամենաբարձր միջին միավորների թվով առաջատարը եղել է Կոտայքի մարզը, իսկ ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի՝ միջին և փոքր քաղաքները: Սահմանամերձ և հեռավոր գյուղերից միասնական քննություններին մասնակցած դիմորդների հավաքած միջին միավորների վերլուծությունից երևում է, որ 18-ից բարձր միջին միավորներ են արձանագրվել հայոց լեզվից և հայ գրականությունից, անգլերենից, ֆրանսերենից, հայոց պատմությունից և ֆիզիկայից: Բարձր լեռնային գյուղերից մասնակցածների դեպքում այդպիսիք դիտարկվել են մաթեմատիկայից, աշխարհագրությունից, քիմիայից և կենսաբանությունից:

Ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի կատարված վերլուծությունից երևում է, որ 2017 թ. միասնական քննություններից բարձր միջին արդյունքներ են ունեցել առավելապես կրթահամալիրների, ավագ դպրոցների և ոչ պետական վարժարանների

ու ավագ դպրոցների շրջանավարտները: Կրթության որակի բարձրացման ուղղությամբ աշխատանք կատարելու անհրաժեշտություն կա հատկապես միջնակարգ դպրոցներում և պետական վարժարաններում: Նկատենք, որ ավագ դպրոցները և կրթահամալիրները հիմնականում տեղաբաշխված են քաղաքներում, միջնակարգ դպրոցները՝ գյուղերում:

➤ **Կենտրոնացված քննություններ:** Կենտրոնացված քննությունների միջին միավորները տատանվել են 10.1-ից (հայոց լեզու) մինչև 19 (իտալերեն) սահմաններում: Հայոց լեզվի, ռուսաց լեզվի, անգլերենի և ստեղծագործական աշխատանքի կենտրոնացված քննությունների մասնակիցների 1.3-12.6%-ը չի հաղթահարել դրական միավորի շեմը, իսկ կենտրոնացված մյուս քննություններից «անբավարար» գնահատականներ չեն արձանագրվել: 20 միավոր հավաքածների ամենաբարձր տոկոսը բաժին է ընկել իսպաներենի բանավոր քննություն հանձնածներին (20%), իսկ ստեղծագործական աշխատանքից, գերմաներենից և իտալերենից 20 միավորներ չեն եղել:

Գերմաներենի, ֆրանսերենի, ռուսաց լեզվի և իսպաներենի բանավոր քննությունների միջին միավորները նախորդ տարվա համեմատությամբ նվազել են, իսկ ֆրանսերենի և ռուսաց լեզվի բանավոր քննություն հանձնածների՝ նույն առարկաների միասնական քննություններից հավաքած միջին միավորները՝ աճել:

➤ **Բուհերի ընդունելության մրցույթը:** Բուհերի ընդունելության մրցույթի առաջին փուլում հայտագրվել է 9030 դիմորդ, երկրորդ փուլում՝ 529-ը: Թափուր մնացած տեղերի համար հայտագրվել է 230 դիմորդ: Հայտագրված 9789 դիմորդներից 9738-ը դիմել է պետական բուհ, 51-ը՝ ոչ պետական:

Բուհ ընդունված 8495 դիմորդներից 1310-ն ընդունվել է անվճար հիմունքներով (մրցույթի 1-ին փուլում), 6993-ը՝ վճարովի (6764-ը՝ մրցույթի 1-ին փուլում, 229-ը՝ 2-րդ փուլում), 111-ը՝ ՊՆ կողմից հատկացված տեղերով և 81-ը՝ արտոնություններով: 32 դիմորդ ընդունվել է բանակից զորացրվածների համար նախատեսված տեղերով:

Մրցույթին մասնակցելով միայն ավարտական կամ տարեկան գնահատականներով՝ վճարովի հիմունքներով ընդունվել է 513 դիմորդ:

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից 2017 թ. բուհեր ընդունված դիմորդների ավարտական վկայականների միջին միավորների միջին թվաբանականը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների եղել է 14.6-ից (Երևան) մինչև 16.4 (Վայոց ձոր) սահմաններում: Այդ ցուցանիշն ըստ բնակավայրերի տիպերի եղել է 14.7-ից (խոշոր քաղաքներ) մինչև 15.7 (փոքր քաղաքներ), ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների՝ 9.1-ից (քոլեջներ) մինչև 17 (կրթահամալիրներ): Ամենացածր ցուցանիշով (13.5) դիմորդներն ընդունվել են

ՀԱԱՀ, ամենաբարձրով՝ (17) «Գլաձոր» համալսարան: Երևանում գործող բուհերից ավարտական վկայականների միջին միավորների ամենացածր միջին թվաքանականով (14.2) երկրորդ տեղն են զբաղեցրել ՃՇՀԱՀ ընդունվածները: Պետական բուհեր ընդունվածների ամենաբարձր ցուցանիշը եղել է ԵՊԲՀ ընդունվածներինը (16.6), ոչ պետականներինը՝ «Գլաձոր» համալսարանինը (17):

2017 թ. 10 և ավելի շրջանավարտներ ունեցած ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից բուհ ընդունվածների բարձր տոկոս ապահովածների լավագույն տասնյակում տեղ են գտել 75.7-88% արձանագրածները (3-ը Շիրակի մարզից, 2-ական դպրոց Երևանից և Սյունիքի մարզերից և մեկական դպրոց՝ Լոռու, Տավուշի և Կոտայքի մարզերից): Այդ տասնյակում առաջատարը եղել է Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցը:

Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած սահմանամերձ և հեռավոր գյուղերի դպրոցներից ընդունվածների մեծ թվով աչքի են ընկել Տավուշի մարզի Կողբի թիվ 2 և Բերդավանի միջնակարգ դպրոցները, իսկ բարձր լեռնային գյուղերից՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի, Վաղաշենի և Ծովինարի միջնակարգ դպրոցները:

Դիմորդների նախընտրած մասնագիտություններիցմ, ըստ անվճար և վճարովի ուսուցման հիմունքներով հայտագրվածների թվի, 2017 թ. ամենապահանջվածը եղել է Երևանի պետական բժշկական համալսարանի «Բուժական գործ» մասնագիտությունը:

2014-2017 թթ. ԵՊՀ-ի, ՀՊՏՀ-ի և ԵՊԲՀ-ի ամենապահանջված մասնագիտությունների անցողիկ միավորների անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները ակնհայտ աճման կամ նվազման միտում հիմնականում չեն ունեցել: Առանձնացել են ՀՊՏՀ-ի «Շուկայագիտություն» մասնագիտության անցողիկ միավորը (2015-17 թթ. նվազել է 2.5 միավորով) և ԵՊԲՀ-ի «Ֆարմացիայինը» (2016 թ. համեմատությամբ նվազել է 5.75 միավորով):

Դիտարկված մասնագիտությունների մեծ մասի վճարովի հիմունքներով ուսուցման անցողիկ միավորների նվազման միտումն ակնհայտ է հատկապես վերջին 1-2 տարում: Այդ ժամանակահատվածում բարձրացել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտության անցողիկ միավորը:

Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական

աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ

12-րդ դասարանում սովորողների պետական ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն (2016-2017 ուսումնական տարի)

1. Ընդհանուր տեղեկություններ

Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ դեկտեմբերի 24-30-ը և/կամ հունիսի 1-24-ը: Դեկտեմբեր ամսին սովորողը հանձնում է միայն այն առարկա(ներ)ի պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: Սովորողն ինքն է ընտրում, թե որ քննություն(ներ)ը հանձնի դեկտեմբերին, որ(ոնք)ը՝ հունիսին:

2016 թվականի դեկտեմբերին (1-ին փուլ) կամ 2017 թվականի հունիսին (2-րդ փուլ) անցկացված պետական ավարտական քննություններին մասնակցելու համար ուսումնական հաստատությունների տնօրենները դեկտեմբերի 1-ից մինչև 10-ը (1-ին փուլ) կամ փետրվարի 1-ից մինչև մարտի 15-ը (2-րդ փուլ) ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում են Գնահատման և թեստավորման կենտրոն (այսուհետև՝ ԳԹԿ):

Քննական առարկաների թեստերը կազմվել են ԳԹԿ-ի կողմից: Առաջադրանքների նյութն ընտրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված և հանրակրթական ուսումնական

հաստատությունում գործածվող դասագրքերից, ձեռնարկներից և շտեմարաններից:

Քննությունների կազմակերպումը, անցկացումը, ինչպես նաև գրավոր աշխատանքների ստուգումը իրականացրել են ուսումնական հաստատությունները:

2016-2017 ուսումնական տարվա գրավոր պետական ավարտական քննություններն անցկացվել են ստորև ներկայացված ժամանակացույցով.

Աղյուսակ 1

Քննական առարկան	Քննության օրը		Քննության տևողությունը
	1-ին փուլ	2-րդ փուլ	
Հայոց լեզու և հայ գրականություն	26.12.2016 թ.	07.06.2017 թ.	120 րոպե
Մաթեմատիկա	28.12.2016 թ.	14.06.2017 թ.	120 րոպե
Հայոց պատմություն	29.12.2016 թ.	21.06.2017 թ.	120 րոպե

Վերլուծությունը կատարվել է 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքների հիման վրա՝ բացառությամբ այն դպրոցների, որոնք ուշացրել են գնահատականների մուտքագրումը: Այդ դպրոցների արդյունքները չեն վերլուծվել:

Սանդղակավորումը

Թեստերի առաջադրանքների կատարումը գնահատվել է առավելագույնը 50 միավորով: Գնահատման 50 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ դրական (8 և ավելի) միավորները համապատասխանում են 14 և ավելի թվով առաջադրանքների ճիշտ կատարմանը:

Նախնական միավորը (0-50)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-50)	Միավորը 20 միավորանոց համակարգում
49-50	20	19-20-21	10
46-47-48	19	16-17-18	9
43-44-45	18	14-15	8
40-41-42	17	12-13	7
37-38-39	16	10-11	6
34-35-36	15	8-9	5
31-32-33	14	6-7	4
28-29-30	13	4-5	3
25-26-27	12	2-3	2
22-23-24	11	0-1	1

2. 2016-2017 ուստարվա պետական ավարտական քննությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

2.1. Շրջանավարտների մասնակցությունը պետական ավարտական քննություններին

2016-2017 թթ. ուսումնական տարվա դեկտեմբերին անցկացված պետական ավարտական քննությունների արդյունքների նախնական վերլուծության մեջ նշվել էր այդ պահի դրությամբ 19598 շրջանավարտների մասին: Պետական ավարտական քննությունների երկրորդ փուլի արդյունքների մուտքագրումից հետո շրջանավարտների ընդամուր թիվը դարձել է 19847, քանի որ տվյալների ամփոփումից հետո հատկացվել է հավելյալ ժամանակահատված, որպեսզի որոշ դպրոցներ ամբողջացնեն իրենց շրջանավարտների արդյունքները:

Այսպիսով, 1-ին փուլում* հայտագրվել են շրջանավարտների 55.3 տոկոսը, 2-րդ փուլում՝ 44.7 տոկոսը: 4926 շրջանավարտներ մասնակցել

* 1-ին փուլի նախնական վերլուծությունը տե՛ս http://www.atc.am/files/verlucutyunner/2017/Avartakan_12_2017_MAS_1.pdf

են ն՝ 1-ին, ն՝ 2-րդ փուլերին: Վերլուծությունից պարզվել է, որ 1-ին փուլում այդ շրջանավարտները հիմնականում հանձնել են մեկ քննություն, 2-րդ փուլում՝ երկու:

Ստորև ներկայացված է երեք առարկաների քննություններին շրջանավարտների մասնակցության աղյուսակը: Հարկ է նշել, որ 1-ին փուլում հայտագրված, սակայն քննությանը չմասնակցած, ինչպես նաև անբավարար գնահատական ստացած շրջանավարտները մասնակցել են 2-րդ փուլի քննություններին:

Աղյուսակ 3


Քննական առարկան	Հայտագրված շրջանավարտների	1-ին փուլ		2-րդ փուլ		2-րդ փուլ			
		Մասնակցած շրջանավարտների				Չմասնակցած շրջանավարտների		Անբավարար գնահատական ստացած շրջանավարտների	
		թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու և հայ գրականություն	152 52	3724	24.4 %	1138 6	74.7 %	142	0.9 %	43	0.4 %
Հայոց պատմություն	187 69	8380	44.6 %	1022 2	54.5 %	167	0.9 %	38	0.4 %
Մաթեմատիկա	158 20	5766	36.4 %	9890	62.5 %	164	1.03 %	13	0.1 %

Ինչպես արդեն նշվել է՝ 1-ին փուլում հայտագրված, սակայն քննությանը չմասնակցած, ինչպես նաև անբավարար գնահատական ստացած շրջանավարտները մասնակցել են 2-րդ փուլի քննություններին, այդ պատճառով աղյուսակում նրանց մասին տեղեկատվությունը ներառված չէ: Շրջանավարտների ընդամենը մեկ տոկոսը չի մասնակցել 2-րդ փուլի պետական ավարտական քննություններին, 0.1-0.4 տոկոսը ստացել է անբավարար գնահատական:


2.2. Պետական ավարտական քննությունների միավորների բաշխման հիստոգրամները

Ստորև ներկայացված են 2-րդ փուլի պետական ավարտական քննությունների միավորների բաշխման հիստոգրամները (1-ին փուլի հիստոգրամները ներկայացված են նախնական վերլուծության մեջ): Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը (Mean), ստանդարտ շեղումը (St.Dev) և մասնակիցների թիվը (N):


Հայոց լեզու և հայ գրականություն



Հայոց պատմություն



Մաթեմատիկա



Վերը ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը հիմնականում համաչափ են, թեև անբավարար ստացածների թիվը բոլոր առարկաներից կազմել է ընդամենը 0.1-0.4 տոկոս, իսկ 8 միավոր ստացածների թիվը զգալիորեն բարձր է մյուս միավորների թվից: Ակնհայտ է, որ անբավարար միավորներն արհեստականորեն բարձրացվել են դպրոցների կողմից:

2.3. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների երկու փուլերի արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են յուրաքանչյուր առարկայից պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների թվերը, միջին միավորները, ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները:

Աղյուսակ 4

Առարկան	Փուլը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	1-ին	3724	13.53	0.061	3.77
	2-րդ	11386	12.60	0.032	3.40
Հայոց պատմություն	1-ին	8380	14.13	0.037	3.37
	2-րդ	10222	12.48	0.033	3.29
Մաթեմատիկա	1-ին	5766	13.62	0.045	3.47
	2-րդ	9890	12.38	0.034	3.37

Աղյուսակ 4-ում տեսնում ենք, որ երեք առարկաներից էլ 1-ին փուլի մասնակիցների միջին միավորները բարձր են 2-րդ փուլի մասնակիցների միջին միավորներից: Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են:


Աղյուսակ 5-ում միասին ներկայացված են պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների ընդհանուր թվերը, միջին միավորները և ստանդարտ շեղումները:

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու	15110	12.84	3.51
Հայոց պատմություն	18602	13.23	3.42
Մաթեմատիկա	15656	12.84	3.46

2.4. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են պետական ավարտական քննությունների երկու փուլերի արդյունքներն ըստ առաջադիմության՝ անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերի: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:

Դիագրամ 1



Ինչպես արդեն նկատել ենք նախորդ ենթաբաժնում՝ շրջանավարտները պետական ավարտական քննությունների 1-ին փուլում ցուցաբերել են ավելի բարձր արդյունքներ: Վերջինս հաստատվում է նաև ըստ առաջադիմության խմբերի վերլուծության մեջ. երեք առարկաներից էլ 1-ին


փուլի քննություններին մասնակցած շրջանավարտները աչքի են ընկել բարձր՝ 18-20 միավորներ հավաքած մասնակիցների խմբով, իսկ երկրորդ փուլի մասնակիցները՝ առաջադիմության ցածր՝ 8-13 միավորներ հավաքած խմբով:

3. 12-րդ դասարանի պետական միասնական քննությունների ավարտական մասի և ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

3.1. 2013-2017 թվականների 12-րդ դասարանի պետական ավարտական և միասնական քննությունների մասնակիցների քանակական տվյալների համեմատությունը

Ստորև բերված դիագրամում ներկայացված է 2013-2017 թվականներին պետական ավարտական և միասնական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունը՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից:

Դիագրամ 2



Հինգ տարիների համեմատության դիագրամում տեսնում ենք, որ պետական միասնական և ավարտական քննությունների մասնակիցների թվերը տարեց տարի նվազել են:

3.2. 2017 թվականի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների համեմատությունը

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են վիճակագրական տվյալներ 2017 թվականի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների վերաբերյալ:

Այս բաժնի մեկնաբանությունը և քննությունների արդյունքների համեմատությունները պահանջում են որոշակի զգուշություն և սահմանափակումներ, քանի որ դրանք տարբեր քննություններից և տարբեր թեստերից են, թեև երկու դեպքում էլ միավորները միջնակարգ կրթության ատեստատում անցկացնելու համար համապատասխանեցվել են 20 միավորանոց սանդղակին:

Աղյուսակ 6


<u>Առարկան</u>		<u>Մասնակիցների թիվը</u>	<u>Միջին միավորը</u>	<u>Ստանդարտ սխալը</u>	<u>Ստանդարտ շեղումը</u>
Հայոց լեզու և հայ գրականություն	Ավարտական	15110	12.8	0.029	3.51
	Միասնականի ավարտական մաս	5307	14.4	0.048	3.50
Հայոց պատմություն	Ավարտական	18602	13.2	0.025	3.42
	Միասնականի ավարտական մաս	1248	14.2	0.112	3.95
Մաթեմատիկա	Ավարտական	15656	12.8	0.028	3.46
	Միասնականի ավարտական մաս	4586	15.4	0.048	3.24

Աղյուսակ 6-ում տեսնում ենք, որ միասնական քննություն հանձնող շրջանավարտների միջին միավորները 1-ից 2.6 միավորով բարձր են եղել ավարտական քննություն հանձնող շրջանավարտների միջին միավորներից:

3.3. Պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Դիագրամ 3-ում ներկայացված է 2017 թվականի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասերից մասնակիցների ստացած միավորների տոկոսային թվերը ըստ առաջադիմության խմբերի, «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից:

Դիագրամ 3



Պետական ավարտական և միասնական քննությունների ավարտական մասի միավորների ընդհանուր բաշխվածությունը խիստ տարբեր է: Ինչպես տեսնում ենք դիագրամում պետական ավարտական քննությունների մասնակիցների 52-57.1 տոկոսը ստացել է 8-13 գնահատական, մինչդեռ միասնական քննությունների ավարտական մասի մասնակիցների համապատասխան խումբը բավական փոքր է: Եվ հակառակը, միասնական քննությունների ավարտական մասից 18-ից բարձր միավոր հավաքած մասնակիցների խումբը մոտ երկու անգամ մեծ է պետական ավարտական քննությունների մասնակիցների համապատասխան խմբից:

4. 2017 թ. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ սեռերի


Աղյուսակ 7-ում ըստ սեռերի ներկայացված է նշված առարկաներից մասնակիցների թիվը, միջին միավորը և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 7

Առարկան	Տղա			Աղջիկ		
	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	8380	12.33	3.52	6730	13.47	3.39
Հայոց պատմություն	9021	12.46	3.39	9581	13.96	3.28
Մաթեմատիկա	6977	11.94	3.38	8679	13.56	3.34

Վերը ներկայացված աղյուսակում տեսնում ենք, որ գրեթե բոլոր առարկաներից աղջիկները ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները: Դա ավելի պարզ է երևում դիագրամ 4-ում, որտեղ ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորների համեմատություններն ըստ առարկաների:


Դիագրամ 4




Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկները տղաներից 1.2-1.7 միավորով ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերել:

Ստորև ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:


Հայոց լեզու և հայ գրականություն



Հայոց պատմություն



Մաթեմատիկա



Ինչպես նշվել է 3.3 ենթաբաժնում՝ պետական ավարտական քննությունների մասնակիցների մեծ մասը ստացել է 8-13 գնահատական, հիատոգրամներում տեսնում ենք, որ այդ խմբում մեծամասնություն են կազմում տղաները: Այնուամենայնիվ, աղջիկների բարձր միավորները բարձրացնում են ընդհանուր միջին միավորը:

5. Պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ դպրոցների տիպերի

Աղյուսակ 8-ում երեք առարկաներից ներկայացված են պետական ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ ըստ դպրոցների տիպերի:

Աղյուսակ 8

Դպրոցների տիպը	Մասնակիցների ընդհանուր թիվը	Միջին միավորը	Մտանդարտ շեղումը	Նվազագույն միավոր	Առավելագույն միավորը	Կորված մասնակիցների թիվը
Հայոց լեզու և հայ գրականություն						
Ավագ	4975	13.40	3.71	1	20	8
Հիմնական	4	12.00	4.274	8	19	-
Միջնակարգ	8398	12.41	3.285	2	20	22
Հենակետային	718	11.74	3.07	8	20	-
Հատուկ	26	11.46	3.075	8	20	-
Վարժարան	523	13.91	3.91	2	20	13
Կրթահամալիր	153	15.39	2.81	9	20	-
Մասնագիտացված	85	13.67	2.859	8	19	-
ՄՊԸ	228	15.47	3.504	8	20	-
Հայոց պատմություն						
Ավագ	6788	13.70	3.469	6	20	2
Հիմնական	4	12.25	4.119	8	19	-
Միջնակարգ	9713	12.75	3.271	3	20	20
Հենակետային	902	12.79	3.02	8	20	-
Հատուկ	32	12.28	3.656	8	19	-
Վարժարան	611	14.53	3.802	1	20	16
Կրթահամալիր	174	16.45	2.981	9	20	-
Մասնագիտացված	89	12.61	3.322	8	19	-

ՄՊԸ	289	15.56	3.389	8	20	-
Մաթեմատիկա						
Ավագ	5495	13.37	3.553	3	20	2
Հիմնական	3	9.33	1.342	8	11	-
Միջնակարգ	8834	12.30	3.244	3	20	11
Հենակետային	481	13.15	3.084	8	20	-
Հատուկ	30	11.47	3.267	8	19	-
Վարժարան	361	14.86	4.031	8	20	-
Կրթահամալիր	127	15.63	3.466	8	20	-
Մասնագիտացված	82	12.30	3.204	8	20	-
ՄՊԸ	243	15.57	3.499	8	20	-

6. 2016-2017 ուսումնական տարվա 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 10-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ վարչատարածքային միավորների: Մգեցված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են:


Աղյուսակ 9

Վարչատարածքային միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Լավագույն միավոր	Առավելագույն միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն					
Շիրակ	1524	12.71	3.49	3	20
Երևան	3844	13.40	3.72	2	20
Լոռի	1292	12.45	3.39	1	20
Արագածոտն	901	12.43	3.23	4	20
Սյունիք	721	12.60	3.44	7	20
Արարատ	1327	12.42	3.42	2	20
Գեղարքունիք	1605	12.10	3.33	4	20
Արմավիր	1520	13.18	3.40	5	20
Տավուշ	707	12.52	3.48	8	20
Վայոց ձոր	409	13.59	3.54	8	20

Կոտայք	1260	12.99	3.30	5	20
Հայոց պատմություն					
Շիրակ	1813	13.31	3.47	6	20
Երևան	4989	13.74	3.47	1	20
Լոռի	1559	12.88	3.21	3	20
Արագածոտն	1095	12.67	3.08	5	20
Սյունիք	973	13.00	3.21	8	20
Արարատ	1554	12.45	3.25	8	20
Գեղարքունիք	1852	12.76	3.39	5	20
Արմավիր	1797	13.51	3.53	8	20
Տավուշ	913	13.11	3.49	4	20
Վայոց ձոր	490	14.47	3.41	8	20
Կոտայք	1567	13.12	3.32	8	20
Մաթեմատիկա					
Շիրակ	1599	12.70	3.42	3	20
Երևան	3794	13.59	3.66	3	20
Լոռի	1300	12.42	3.25	3	20
Արագածոտն	976	12.54	3.11	4	20
Սյունիք	799	12.34	3.41	8	20
Արարատ	1385	12.05	3.19	8	20
Գեղարքունիք	1704	12.39	3.28	8	20
Արմավիր	1583	13.32	3.52	8	20
Տավուշ	800	12.38	3.51	8	20
Վայոց ձոր	405	13.20	3.47	8	20
Կոտայք	1311	12.78	3.18	8	20

Շրջանավարտների միջին միավորների համեմատություններն ըստ վարչատարածքային միավորների ավելի ակնառու են դիագրամ 5-ում:

Դիագրամ 5



Ըստ վարչատարածքային միավորների վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ շրջանավարտների միջին միավորները նշանակալիորեն չեն տարբերվում և գտնվում են 12.1-13.7 միջակայքում, ամենաբարձր՝ 14.5 միջին միավորը գրանցել են Վայոց ձորի շրջանավարտները՝ «Մաթեմատիկա» առարկայից:

7. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքներն ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 9-ում ներկայացված են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից քննությունների մասնակիցների թիվը, տոկոսը, միջին միավորը և ստանդարտ շեղումն ըստ բնակավայրերի տիպերի: Մգեցված են այն միջին միավորները, որոնք մեծ կամ հավասար են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից:

Աղյուսակ 10

Բնակավայրի տիպը	Հայոց լեզու և հայ գրականություն			Հայոց պատմություն			Մաթեմատիկա		
	Մասնակիցների		Միջին միավորը (ստ. շեղ.)	Մասնակիցների		Միջին միավոր (ստ. շեղ.)	Մասնակիցների		Միջին միավորը (ստ. շեղ.)
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	
Խոշոր քաղաքներ	4890	32.36 %	13.3 (3.7)	6306	33.90 %	13.7 (3.5)	4809	30.72 %	13.5 (3.6)
Միջին քաղաքներ	1465	9.70 %	13.4 (3.6)	1996	10.73 %	13.6 (3.5)	1575	10.06 %	13.3 (3.5)
Փոքր քաղաքներ	1240	8.21 %	13.6 (3.6)	1693	9.10 %	14.1 (3.5)	1350	8.62 %	13.2 (3.6)
Գյուղեր	5723	37.88 %	12.5 (3.2)	6538	35.15 %	12.8 (3.3)	6010	38.39 %	12.4 (3.2)
Մահմանամերձ և հեռավոր գյուղեր	853	5.65 %	11.9 (3.2)	1011	5.43 %	12.4 (3.2)	914	5.84 %	11.8 (3.4)
Բարձրալեռնային գյուղեր	894	5.92 %	11.6 (3.3)	1010	5.43 %	12.1 (3.2)	953	6.09 %	11.9 (3.2)
<u>Մահմանամերձ և բարձրալեռնային գյուղեր</u>	45	0.30 %	13.1 (2.9)	48	0.26 %	13.7 (3.3)	45	0.29 %	12.5 (2.6)
	15110	100 %		18602	100 %		15656	100 %	

Աղյուսակում տեսնում ենք, որ քաղաքային բնակավայրերի շրջանավարտները երեք առարկաներից էլ ցուցաբերել են ընդհանուր միջին միավորից բարձր արդյունքներ, գյուղական բնակավայրերի շրջանավարտները՝ ցածր արդյունքներ, բացառությամբ սահմանամերձ և բարձրալեռնային գյուղերի շրջանավարտների, որոնց միջին միավորը ցածր է եղել միայն «Մաթեմատիկա» առարկայից:

Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
գլխավոր մասնագետ

Մարիամ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
առաջին կարգի մասնագետ

2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր
ամիսներին Հայաստանի
Հանրապետության հանրակրթական
ուսումնական հաստատությունների 10-
րդ դասարաններում անցկացված
արտաքին ընթացիկ գնահատման
արդյունքների վերլուծություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պարբերաբար անցկացվում է արտաքին ընթացիկ գնահատում, որը հնարավորություն է տալիս արձանագրելու այդ հաստատությունների ավագ դասարաններում սովորողների առաջադիմությունը և պարզելու դրա դինամիկան: 2016 թվականի նոյեմբերի 7-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 73 հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում բոլոր հանրակրթական առարկաներից իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում:

Նպատակը

2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման նպատակն աշակերտների 9-րդ դասարանի գիտելիքների ստուգումն է, որով նրանք մուտք են գործել ավագ դպրոց:

Ընտրանքը

Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գտնվող ուսումնական հաստատությունների 10-րդ դասարանի աշակերտներն են. ընդհանուր հաշվով՝ 42 ավագ, 22 միջնակարգ և 4 ոչ պետական դպրոցների, ինչպես նաև 5 վարժարանների 4109 աշակերտ:

Առարկաների ընտրությունը

Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցները հնարավորություն են ունեցել ընտրել երկու առարկա: Այդ ընտրությունը կատարվել է ստորև ներկայացված երեք տարբերակներից մեկով.

1. պարտադիր առարկաներից մեկը (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն) և մեկ բնագիտական առարկա (ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն)
2. պարտադիր առարկաներից մեկը (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն) և մեկ օտար լեզու (ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն)
3. պարտադիր առարկաներից երկուսը (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն)

Արտաքին ընթացիկ գնահատում անցկացնելու համար կազմվել են 9-րդ դասարանի ընդհանուր հոսքի առարկայական ծրագրերին համապատասխան թեստեր, որոնցով ստուգվել է աշակերտի մուտքը ավագ դպրոց՝ 10-րդ դասարան:

Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումը

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Գրավոր աշխատանքների տևողությունը եղել է 60 րոպե: Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար կիրառվել է թեստերի 4 տարբերակ:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ: Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները ստուգվել են առարկայական մաս-

նագետների կողմից, արդյունքները անցկացվել են ձևաթղթերի համապատասխան դաշտերում, որից հետո ձևաթղթերը ենթարկվել են համակարգչային ստուգման:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները դասամատյաններում գրանցելու համար տրվել են համապատասխան դպրոցներին:

Վերլուծության իրականացումը

Վերլուծությունն ամբողջությամբ իրականացվել է IATA, Excel, ACCESS, SPSS ծրագրերի միջոցով: Արտաքին և ներքին գնահատման համակարգերի արդյունքների, ինչպես նաև հանրակրթական առարկաների համեմատությունները, իսկ հաջորդ տարիներին նաև աշակերտների առաջադիմության դինամիկան համեմատելու համար, որոնք բնութոյով և սանդղակավորմամբ տարբեր են, միավորները ներկայացված են առաջադրանքի պատասխանի ժամանակակից տեսությամբ (Item response theory-IRT), մինչդեռ հանրակրթական ուսումնական հաստատություններին արդյունքները տրամադրվել են Z-սանդղակով՝ ներքին գնահատմանը համադրելի դարձնելու համար: Առաջադրանքի պատասխանի ժամանակակից տեսությունը, այսուհետև՝ IRT*, դասական տեսության բարելավված մոդելն է, որը հնարավորություն է տալիս ստանալու առավել ճկուն և հավաստի տեղեկություններ:

Արտաքին ընթացիկ գնահատականներից բացի ստեղծվել է նաև ներքին գնահատականների տվյալների բազա՝ աշակերտի 9-րդ դասարանի տարեկան գնահատականների հիման վրա:

* IRT տեսության մանրամասն նկարագրությունը տրված է նախորդ վերլուծության մեջ http://www.atc.am/files/verlucutyunner/2016/2016_petrvar_yntacik.pdf (էջ 4)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ամփոփ տեղեկություն 2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է աշակերտների մասնակցությունը 2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատմանը:

Աղյուսակ 1

Առարկան	Հայտագրված աշակերտների թիվը	Մասնակցած աշակերտների		Զմասնակցած աշակերտների		Անբավարար գնահատական ստացած աշակերտների	
		թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու	2977	2743	92.1	234	7.9	518	18.9
Հանրահաշիվ	1305	1196	91.7	109	8.3	198	16.5
Հայոց պատմություն	968	890	91.9	78	8.1	72	8.1
Ֆիզիկա	547	498	91.0	49	9.0	70	14.1
Քիմիա*	127	114	89.8	13	10.2	22	19.3
Կենսաբանություն	605	558	92.2	47	7.8	37	6.6
Աշխարհագրություն	478	443	92.7	35	7.3	96	21.6
Անգլերեն	624	560	89.7	64	10.3	46	8.2
Ռուսաց լեզու	555	496	89.4	59	10.6	35	7.0
Ֆրանսերեն*	11	11	100	0	0	3	27.3
Գերմաներեն*	19	17	89.5	2	10.5	8	47.1

*-ով նշված են վերլուծության մեջ չներառված առարկաները

Աղյուսակ 1-ում տեսնում ենք, որ աշակերտները պարտադիր առարկաներից (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն) ընտրություն կատարելիս նախապատվությունը տվել են «Հայոց լեզու» առարկային (66.8 %): Բնագիտական առարկաներից ընտրությունը կատարվել է գրեթե համաչափ, բացառությամբ «Քիմիա» առարկայից, որը ընտրել են քիչ թվով աշակերտներ: Հաշվի առնելով այն, որ գնահատման անցկացվել է թեստերի 4 տարբերակներով, «Քիմիա» առարկայի մասնակիցների թիվը բավարար չի եղել հետագա վերլուծության մեջ ներառելու համար, քանի որ ստացված արդյունքները չեն կարող համարվել հուսալի: Նույն տրամաբանությամբ վերլուծության մեջ չեն ներառվել նաև «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առարկաների արդյունքները:

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը

Արտաքին ընթացիկ գնահատման թեստերի կառուցվածքը բոլոր առարկաների համար ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2

Առարկան	Առաջադրանքների քանակը			Առավելագույն միավորը
	ընտրովի	կարճ	ընդարձակ	
Հայոց լեզու	13	7	-	20
Հանրահաշիվ	9	3	2	16
Հայոց պատմություն	13	5	-	20
Ֆիզիկա	14	4	2	20
Քիմիա	16	3	1	20
Կենսաբանություն	15	4	1	20
Աշխարհագրություն	15	4	1	20
Օտար լեզու (անգլերեն, ռուսաց լեզու ֆրանսերեն, գերմաներեն)	12	5	1	20

Բոլոր առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորներով, բացառությամբ օտար լեզուների ընդարձակ պատասխանով 18-րդ առաջադրանքից և հայոց պատմության 17-րդ կարճ պատասխանով առաջադրանքից, որոնք գնահատվել են 0-3 միավորներով, իսկ «Հանրահաշիվ» առարկայի 13-րդ և 14-րդ ընդարձակ պատասխանով առաջադրանքները գնահատվել են 0-2 միավորներով:

Գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակների:









Աղյուսակ 3

Քննությունների արդյունքների գնահատման սանդղակներ			
Նախնական միավորը (0-16)	Գնահատականը (1-10)	Նախնական միավորը (0-20)	Գնահատականը (1-10)
0-1	1	0-1	1
2	2	2-3	2
3	3	4-5	3
4	4	6-7	4
5-6	5	8-10	5
7-8	6	11-13	6
9-11	7	14-15	7
12-13	8	16-17	8
14-15	9	18-19	9
16	10	20	10

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների

Ստորև ներկայացված են հանրակրթական առարկաների միավորների բաշխման հիստոգրամները:



Վերը ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը համաչափ են, հիմնականում գերակշռում են 5 և 6 միավորները, բացառություն է կազմում «Անգլերեն» առարկայի միավորների բաշխման կորը, որը շեղված է դեպի բարձր միավորները:

Միավորների բաշխման բնութագրիչները

Աղյուսակ 4

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը ⁹	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը) ¹⁰	Հուսալիությունը ¹¹
Հայոց լեզու	2743	4.99	0.035	1.84	0.80
Հանրահաշիվ	1196	5.13	0.053	1.84	0.79
Հայոց պատմություն	890	5.53	0.055	1.65	0.73
Ֆիզիկա	498	5.57	0.092	2.06	0.80
Կենսաբանություն	558	5.40	0.083	2.0	0.82
Աշխարհագրություն	443	5.33	0.081	1.70	0.73
Անգլերեն	560	6.35	0.095	2.25	0.81
Ռուսաց լեզու	496	5.69	0.071	1.58	0.82

Ի տարբերություն նախորդ տարիների՝ 2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցները հնարավորություն են ունեցել ընտրելու իրենց նախընտրած երկու առարկաները: Քանի որ միավորները ներկայացված են IRT տեսությամբ, կարող ենք դրանք համեմատել նախորդ տարիներին անցկացված արտաքին գնահատումների հետ: Նկատելի է, որ այս դեպքում հայոց լեզվից միջին միավորն իջել է և գրանցվել է ամենացածրը, իսկ հանրահաշիվից միջին միավորը բարձրացել է: Մյուս առարկաներից միջին միավորները մոտ են 1-10 գնահատականների սանդղակի միջին միավորին (5.5): Համեմատելով նաև հանրակրթական առարկաների միջին միավորները՝ տեսնում ենք, որ ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից: Եթե հաշվի առնենք, որ պետական միասնական քննություն-

⁹Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:

¹⁰10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1,5-ից:

¹¹ Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

ների ժամանակ էլ անգլերենի միջին միավորն է բարձր, կարող ենք ասել, որ երեխաներն ավելի մոտիվացված են այս առարկան սովորելու:

Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են, հուսալիությունները՝ ընդունելի:

2.2. Վիճակագրական տվյալներ ընդհանուր վերլուծության մեջ չներառված առարկաներից


Այս ենթաբաժնում դասական տեսությամբ ներկայացված են որոշ վիճակագրական տվյալներ «Քիմիա», «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առարկաներից, որոնք հնարավոր չի եղել ներկայացնել IRT տեսությամբ:

Աղյուսակ 5

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Քիմիա	114	5.45	0.20	2.11
Ֆրանսերեն	11	4.73	0.41	1.34
Գերմաներեն	17	4	0.47	1.94

Թեև «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առարկաներն ընտրել են քիչ թվով աշակերտներ, այնուամենայնիվ, միջին միավորները նկատելի ցածր են: Գնահատման ստանդարտ սխալները մյուս առարկաների համեմատ մեծ են, ինչը կարելի է բացատրել աշակերտների փոքր թվով:


Հիստոգրամում ներկայացված է «Քիմիա» առարկայի միավորների բաշխումը:



2.3. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների

Գնահատականների խմբերի բաշխման ուսումնասիրությունը և համեմատությունն իրականացվել է IRT մաթեմատիկական մոդելի կիրառմամբ, որով գնահատվել է սովորողների պատրաստվածության մակարդակը՝ հիմնվելով տարբեր բարդության առաջադրանքների ճիշտ պատասխանի հավանականության գնահատման վրա: IRT-ն թույլ է տալիս գնահատականները ստանդարտացնել և բերել գնահատման ընդհանուր համակարգի, որը համեմատելի է դարձնում արտաքին ընթացիկ գնահատման առարկաների գնահատականները: Սույն վերլուծության մեջ գնահատականները խմբավորված են ըստ առաջադիմության չորս խմբերի (1-3, 4-5, 6-8 և 9-10), որոնց տոկոսային թվերը ներկայացված են ստորև բերված դիագրամում:

Դիագրամ 1



Դիագրամում տեսնում ենք, որ «գերազանց» (9 և 10 գնահատականներ) պատրաստվածության ամենամեծ՝ 22.7 տոկոս կազմել են «Անգլերեն» առարկայի արտաքին գնահատմանը մասնակցած աշակերտները: Այս տեսանկյունից 2-րդ և 3-րդ տեղերում են ֆիզիկայի՝ 10.4 տոկոս, և կենսաբանության՝ 9.1 տոկոս, մասնակիցները: Իսկ ըստ առարկաների «գերազանց» պատրաստվածության ամենափոքր՝ 3.6 տոկոսը դիտարկվել է «Աշխարհագրություն» առարկան ընտրած աշակերտների շրջանում: «Անբավարար» (1-3 գնահատականներ) պատրաստվածության ամենա-

մեծ տոկոսները դիտարկվել են հայոց լեզվից՝ 18.9 տոկոս, և հանրահաշվից՝ 17.3 տոկոս:

Զուգահեռներ տանելով պետական միասնական քննությունների հետ՝ կարելի է ասել, որ աշխարհագրությունից միասնական քննություն հանձնում են մասնակիցների մինչև 3 տոկոսը, իսկ ուսումնասիրվող արտաքին ընթացիկ գնահատման դեպքում այդ ցուցանիշը կազմել է 11 տոկոս: Մասնակցության տոկոսային տարբերությունը կարող է բացատրվել նրանով, որ արտաքին գնահատման երկրորդ առարկայի ընտրության մեջ չկողմնորոշված որոշ աշակերտներ պարզապես ընտրել են «Աշխարհագրություն» առարկան:

2.4. Արտաքին և ներքին գնահատումների համեմատությունը

Արտաքին և ներքին գնահատումների միավորները միմյանց հետ համեմատելիս կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներքին գնահատման 10 միավորանոց համակարգը արհեստականորեն կրճատվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 4-ը (սանդղակի միջին միավորը՝ 7,0), մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները (սանդղակի միջին միավորը՝ 5,5): Թեև ներքին գնահատման ժամանակ կիրառվում են բազմաբնույթ գործիքներ՝ ի տարբերություն արտաքին գնահատման, սակայն ներքին գնահատման մեջ մեծ է սուբյեկտիվության գործոնը:

Աղյուսակ 6

Առարկան	Գնահատումը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Հայոց լեզու	Արտաքին	4.99	0.035	1.84
	Ներքին	7.01	0.032	2.78
Հանրահաշիվ	Արտաքին	5.13	0.053	1.84
	Ներքին	7.54	0.047	1.78
Հայոց պատմություն	Արտաքին	5.53	0.055	1.65
	Ներքին	7.18	0.053	1.80
Ֆիզիկա	Արտաքին	5.57	0.092	2.06
	Ներքին	7.62	0.068	1.78
Կենսաբանություն	Արտաքին	5.40	0.083	2.00
	Ներքին	7.25	0.071	1.82
Աշխարհագրություն	Արտաքին	5.33	0.081	1.70
	Ներքին	7.06	0.075	1.98

Անգլերեն	Արտաքին	6.35	0.095	2.25
	Ներքին	7.42	0.059	2.48
Ռուսաց լեզու	Արտաքին	5.69	0.071	1.58
	Ներքին	7.37	0.066	1.74


Աղյուսակում տեսնում ենք, որ ներքին գնահատման միջին միավորները 7.01-ից (հայոց լեզու) 7.62 (ֆիզիկա) միջակայքում են: Երկու գնահատումների դեպքում էլ ամենացածր միջին միավորը գրանցվել է «Հայոց լեզու» առարկայից: Ինչպես արդեն նշել ենք, արտաքին գնահատման ժամանակ ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից, հետևաբար, այս առարկայից ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունը ամենափոքրն է՝ 1.1 միավոր: Այս տեսանկյունից ամենամեծ տարբերությունը գրանցվել է հանրահաշվից՝ 2.4 միավոր: Ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունները ակնառու երևում են դիագրամ 2-ում:

Դիագրամ 2



Դիագրամ 3-ում ներկայացված են 2016 թ. ներքին և արտաքին գնահատումների միավորների խմբերի տոկոսային թվերի համադրությունները:

Դիագրամ 3



Դիագրամ 3-ում տեսնում ենք, որ ի տարբերություն արտաքին գնահատման՝ սերբիացի գնահատման դեպքում 1-3 գնահատականներ գրեթե չկան, իսկ 9-10 գնահատականների խմբերը նշանակալիորեն մեծ են:

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ


Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարանի աշակերտների 54 %-ը աղջիկներ են, 46 %-ը՝ տղաներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են բոլոր առարկաներից վիճակագրական տվյալներ ըստ սեռերի:

Աղյուսակ 7

Առարկան	Սեռը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու	աղջիկ	1625	5.32	0.045	1.80
	տղա	1118	4.51	0.054	1.79
Հանրահաշիվ	աղջիկ	473	5.27	0.080	1.74
	տղա	723	5.04	0.071	1.90
Հայոց պատմություն	աղջիկ	525	5.81	0.066	1.50
	տղա	365	5.13	0.093	1.77
Ֆիզիկա	աղջիկ	140	5.69	0.165	1.95
	տղա	358	5.53	0.111	2.10
Կենսաբանություն	աղջիկ	351	5.66	0.104	1.95
	տղա	207	4.95	0.132	1.90
Աշխարհագրություն	աղջիկ	198	5.60	0.115	1.62
	տղա	245	5.11	0.111	1.74
Անգլերեն	աղջիկ	390	6.58	0.114	2.25
	տղա	170	5.82	0.167	2.18
Ռուսաց լեզու	աղջիկ	270	6.06	0.097	1.60
	տղա	226	5.24	0.095	1.43

Ստորև բերված դիագրամում ներկայացված է բոլոր առարկաներից աշակերտների միջին միավորների համեմատությունն ըստ սեռերի:

Դիագրամ 4




Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկների միջին միավորներն ավելի բարձր են տղաների միջին միավորներից: Միայն «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաներից են տղաների և աղջիկների միջին միավորները մոտ «Հանրահաշիվ» առարկայի դեպքում տարբերությունը կազմում է 0.3 միավոր, «Ֆիզիկա» առարկայի դեպքում՝ 0.2 միավոր, իսկ մյուս առարկաներում այդ տարբերությունը կազմում է 0.5-0.8 միավոր:

4. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ

4.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի

Դիագրամ 5-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների տոկոսային թվերն ըստ հոսքերի:

Դիագրամ 5



Միջնակարգ դպրոցում ուսուցումն իրականացվում է միայն ընդհանուր հոսքի ծրագրերով: Մյուս տիպերի հանրակրթական ուսումնական հաստատություններում, պարզվում է, ընտրելու հնարավորության դեպքում աշակերտները գերապատվությունը տալիս են հումանիտար հոսքին, այնուհետև բնագիտական և տնտեսագիտական հոսքերին, ֆիզմաթ հոսքն ընտրում են փոքր թվով աշակերտներ:

4.2. Հանրակրթական առարկաների միջին միավորներն ըստ հոսքերի

Աղյուսակ 8-ում ներկայացված են ըստ հոսքերի մասնակիցների թիվը և միջին միավորները բոլոր առարկաներից: Մզեցված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ են կամ հավասար:


Աղյուսակ 8

Հոսքը	Բնագիտական		Հումանիտար		Ընդհանուր		Տնտեսագիտական		Ֆիզմաթ	
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը
<i>Հայոց լեզու</i>	518	5.20	1132	4.90	644	4.89	429	5.21	20	5.49
<i>Հանրահաշիվ</i>	485	5.38	83	3.75	85	4.03	388	4.87	155	6.38
<i>Հայոց պատմություն</i>	80	5.49	565	5.53	194	5.48	48	5.58	3	5.70
<i>Ֆիզիկա</i>	294	5.44	8	3.80	33	4.73	41	3.92	122	6.84
<i>Գեոմետրիա</i>	277	5.66	93	4.78	147	5.39	35	5.18	6	4.91
<i>Աշխարհագրություն</i>	64	6.07	161	5.03	125	5.22	89	5.17	4	7.31
<i>Անգլերեն</i>	50	6.99	313	6.17	60	6.60	135	6.45	2	4.92
<i>Ռուսաց լեզու</i>	39	6.36	210	5.80	154	5.19	88	6.02	5	5.34

Աղյուսակ 8-ում տեսնում ենք, որ ամենաշատ մզեցված միջին միավորները բնագիտական և ֆիզմաթ հոսքերում են: Ֆիզմաթ հոսքի մասնակիցները կազմել են ընդհանուր մասնակիցների 4.2 տոկոսը և հիմնականում ընտրել են «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաները, որոնցից էլ գրանցել են ամենաբարձր միջին միավորները, այսինքն, այս հոսքում աշակերտների ընտրությունն ավելի նպատակաուղղված է: Հումանիտար հոսքում ընդհանուր միջին միավորից բարձր են «Հայոց պատմություն» և «Ռուսաց լեզու» առարկաների, տնտեսագիտական հոսքում՝ «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաների միջին միավորները: Ընդհանուր հոսքն առանձնանում է միայն մեկ մզեցված միջին միավորով՝ «Անգլերեն» առարկայից:

Դիագրամ 6-ում ներկայացված են բոլոր առարկաների միջին միավորներն ըստ հոսքերի: Առարկաները խմբավորված են ըստ պարտադիր առարկաների, բնագիտական առարկաների և օտար լեզուների:

Դիագրամ 6



Վերլուծությունից պարզվել է, որ պարտադիր «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաներից աշակերտների միջին միավորներն ըստ հոսքերի նշանակալիորեն չեն տարբերվել, ինչը չի կարելի ասել «Հանրահաշիվ» առարկայի մասին, որտեղ հումանիտար և ընդհանուր հոսքերի աշակերտների միջին միավորները նշանակալիորեն ցածր են, թեև այս հոսքերում միայն 7 տոկոսն է ընտրել «Հանրահաշիվ» առարկան:

Բնագիտական առարկաներից ամենացածր միջին միավորները, գրեթե բոլոր հոսքերում, գրանցվել են ֆիզիկայից, միայն ֆիզմաթ հոսքի նշանակալի մեծ միջին միավորն է բարձրացնում այս առարկայի ընդհանուր միջին միավորը: Կենսաբանությունից և աշխարհագրությունից ֆիզմաթ հոսքում մասնակիցների փոքրաթիվ լինելու պատճառով (6 և 4) միջին միավորների նկատելի մեծ տարբերությունը չի մեկնաբանվել, մյուս հոսքերում այս առարկաներից աշակերտների միջին միավորները նշանակալիորեն չեն տարբերվել:

Օտար լեզուներից միջին միավորները բարձր են բնագիտական հոսքում: Այս առարկաներից ֆիզմաթ հոսքին չենք անդրադառնա մասնակիցների փոքրաթիվ լինելու պատճառով: Այսպիսով, ամենացածր միջին միավորը անգլերենից դիտարկվել է հումանիտար հոսքում, իսկ ռուսերենից ընդհանուր հոսքում:

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

5.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 72 տոկոսը ավագ դպրոցների աշակերտներ են, միջնակարգ դպրոցների և վարժարանների աշակերտները կազմել են 13-ական տոկոս, ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտները՝ 2 տոկոս: Աղյուսակ 9-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի: Սգեցված են այն միջին միավորները, որոնք մեծ կամ հավասար են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից:

Աղյուսակ 9

Առարկան	Առարկայի ընդհանուր միջին միավորը	Ավագ դպրոց			Միջնակարգ դպրոց			Վարժարան			Ոչ պետական դպրոց		
		Մտնունկիցների թիվը	Միջին միավորը	Մտնունդարտ շեշտումը	Մտնունկիցների թիվը	Միջին միավորը	Մտնունդարտ շեշտումը	Մտնունկիցների թիվը	Միջին միավորը	Մտնունդարտ շեշտումը	Մտնունկիցների թիվը	Միջին միավորը	Մտնունդարտ շեշտումը
Հայոց լեզու	4.99	2116	4.93	1.77	431	5.13	2.07	120	4.82	1.77	76	6.24	2.06
Հանրահաշիվ	5.13	736	4.63	1.64	51	4.49	2.08	373	6.25	1.64	36	4.56	2.21
Հայոց պատմություն	5.53	700	5.54	1.66	149	5.30	1.61	24	5.88	1.75	17	6.65	0.93
Ֆիզիկա	5.57	150	4.43	1.79	30	4.83	2.28	308	6.23	1.91	10	4.60	1.17
Կենսաբանություն	5.40	404	5.37	1.86	73	5.40	2.07	76	5.34	2.23	5	8.60	1.52
Աշխարհագրություն	5.33	366	5.14	1.66	60	6.07	1.60	5	5.40	1.34	12	7.33	1.56
Անգլերեն	6.35	475	6.30	2.27	38	6.00	2.16	29	6.69	1.89	18	7.94	2.07
Ռուսաց լեզու	5.69	351	5.80	1.64	132	5.31	1.34	12	6.50	1.17	1	6.00	-


Ինչպես արդեն նշել ենք, արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների գերակշիռ մասը եղել է ավագ դպրոցներից, հետևաբար, բոլոր առարկաներից նրանց թիվը կազմել է 62-85 տոկոս, միայն «Ֆիզիկա» առարկայից է, որ մասնակիցների թիվը եղել է 30 տոկոս: Հետաքրքիր է, որ վարժարանների աշակերտների 61.8 տոկոսն ընտրել է «Ֆիզիկա» առարկան և գրանցել է ամենաբարձր միջին միավորը: Վարժարաններում, բացի «Հայոց լեզու» և «Կենսաբանություն» առարկաներից, մյուս բոլոր առարկաների միջին միավորները բարձր են տվյալ առարկաների ընդհանուր միջին միավորներից: Միջնակարգ դպրոցներում ամենաբարձր միջին

միավորը «Աշխարհագրություն» և «Հայոց լեզու» առարկաներից է, ավագ դպրոցներում՝ «Հայոց պատմություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնակիցների թիվը զգալի փոքր է, միջին միավորներն էլ, բացի «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաներից, բարձր են ընդհանուր միջին միավորներից:

5.2. Արտաքին ընթացիկ գնահատման միավորների խմբերի բաշխումը ըստ առարկաների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Հետևյալ դիագրամում ներկայացված է աշակերտների պատրաստվածությունը գնահատականների խմբերի տոկոսային բաշխվածությամբ՝ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի:

Դիագրամ 7



Ոչ պետական դպրոցների, որոշ դեպքերում նաև վարձարանների հայոց պատմության, բնագիտական առարկաների և ռուսաց լեզվի արտաքին գնահատման փոքրաթիվ մասնակիցների գնահատականների խմբերը եղել են մինչև 100%

Հաշվի առնելով ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտների փոքրաթիվ լինելը՝ ավելի մանրամասն անդրադառնանք ավագ, միջնակարգ դպրոցների և վարձարանների գնահատականների բաշխմանը:

Դիագրամում տեսնում ենք, որ «գերազանց» պատրաստվածության ամենամեծ տոկոսներով առանձնանում են անգլերենից և ռուսաց լեզվից

ավագ դպրոցների, հայոց լեզվից, կենսաբանությունից և աշխարհագրությունից՝ միջնակարգ դպրոցների, հանրահաշվից և ֆիզիկայից՝ վարժարանների աշակերտները: Ռուսաց լեզվից «գերազանց» պատրաստվածություն են ցուցաբերել միայն ավագ դպրոցների աշակերտները: «Անբավարար» պատրաստվածության ամենամեծ տոկոսը ֆիզիկայից ունեցել են ավագ դպրոցների, հանրահաշվից, հայոց պատմությունից և անգլերենից՝ միջնակարգ դպրոցների, հայոց լեզվից, կենսաբանությունից և աշխարհագրությունից՝ վարժարանների աշակերտները: Անգլերենից և ռուսաց լեզվից «անբավարար» պատրաստվածություն չի դիտարկվել միայն վարժարաններում:


Ավագ և միջնակարգ դպրոցներում հայոց լեզվից, հանրահաշվից և ֆիզիկայից «անբավարար» (1, 2 և 3 գնահատականներ) պատրաստվածություն ցուցաբերած աշակերտները կազմել են այդ առարկաների արտաքին գնահատմանը մասնակցածների 18.4-32 տոկոսը: Վարժարաններում այդ ցուցանիշը բարձր է եղել հայոց լեզվից (25 %), կենսաբանությունից (18.4 %) և աշխարհագրությունից (20 %):

Ոչ պետական դպրոցներում «գերազանց» պատրաստվածություն դիտարկվել է հայոց լեզվից, հանրահաշվից, կենսաբանությունից, աշխարհագրությունից և անգլերենից, իսկ «Անբավարար» պատրաստվածություն՝ միայն հայոց լեզվից, հանրահաշվից և ֆիզիկայից:

6. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դիագրամ 8-ում ներկայացված է 2016 թ. արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակից հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների միջին միավորների դիրքերը սանդղակի միջին միավորի նկատմամբ՝ պարտադիր առարկաներից: Դիագրամի յուրաքանչյուր ուղղահայաց գծի վրա գտնվում են տվյալ ուսումնական հաստատության միջին միավորները այն առարկաներից, որոնք ընտրել են այդ ուսումնական հաստատությունում. կապույտով նշված է հայոց լեզվի, կարմիրով՝ հայոց պատմության, կանաչով՝ հանրահաշվի միջին միավորները, իսկ մանուշակագույն կետագիծը սանդղակի միջին միավորն է (5.5): Քանի որ «Հայոց լեզու» առարկան գրեթե բոլոր ուսումնական հաստատություններն են ընտրել, հետևաբար, միջին միավորները դասավորված են այդ առարկայի միջին միավորների աճման կարգով:

Դիագրամ 8



Դիագրամ 8-ում տեսնում ենք, որ հայոց լեզվից ցածր արդյունքներ գրանցած ուսումնական հաստատությունները ցածր արդյունք են գրանցել նաև մյուս առարկաներից: Նույն համաչափությունը նկատվել է նաև բարձր արդյունքներ գրանցած ուսումնական հաստատություններում: Մասնավորապես, բարձր միջին միավորներով աչքի են ընկել ստորև ներկայացված ուսումնական հաստատությունները:

Աղյուսակ 10-ում ներկայացված են այն ուսումնական հաստատությունների միջին միավորները, որոնց հայոց լեզվի միջին միավորն ընկած է սանդղակի միջին միավորից վերև:

Աղյուսակ 10

Ուսումնական հաստատությունը	Միջին միավորը		
	Հայոց լեզու	Հայոց պատմություն	Հանրահաշիվ
Կապանի թիվ 10 միջն. դպրոց	7.87	-	7.33
Գուգարքի ավագ դպրոց	7.19	-	6
«Էօրնեկեան» միջն. դպրոց	7.06	6.85	5.77
«Հայ կրթություն» կրթ. հիմնադրամ	6.59	6.50	5.60
Մրգաշատի թիվ 2 միջն. դպրոց	6.30	-	-
«Ուսում» հանրակրթական դպրոց	6.14	5.50	6.20
Նորատուսի թիվ 1 միջն. դպրոց	6.14	5.70	-
Վանաձորի թիվ 24 միջն. դպրոց	5.97	4.35	8
Կապանի թիվ 2 ավագ դպրոց	5.66	6.60	5.32

Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	5.63	5.42	4.87
Իջևանի ավագ դպրոց	5.61	7.45	5.25
Մասիսի թիվ 5 ավագ դպրոց	5.60	5.92	3.33

Աղյուսակ 11-ում ներկայացված են այն ուսումնական հաստատությունների միջին միավորները, որոնց հանրահաշվի միջին միավորն է ընկած սանդղակի միջին միավորից վերև:

Աղյուսակ 11

Ուսումնական հաստատությունը	Միջին միավորը		
	Հայոց լեզու	Հայոց պատմություն	Հանրահաշիվ
Վանաձորի թիվ 24 միջն. դպրոց	5.97	4.35	8
Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ հատուկ դպրոց	-	-	7.42
Կասպանի թիվ 10 միջն. դպրոց	7.87	-	7.33
Երևանի թիվ 54 ավագ դպրոց	5.26	7.56	6.65
Վայքի քաղաք. պետ. հանրակրթական վարժարան	4.32	5	6.50
Գավառի թիվ 2 միջն. դպրոց	5.28	6.67	6.50
«Ուսում» հանրակրթ. դպրոց	6.14	5.5	6.20
Իջևանի վարժարան	4.87	7	6
Արարատի ավագ դպրոց	5.29	6	6
Գուգարքի ավագ դպրոց	7.19	-	6
ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	5.23	5	5.86
«Էօրնեկեան» միջն. դպրոց	7.06	6.85	5.77
Երևանի թիվ 139 ավագ դպրոց	5.37	-	5.75
Արթիկի թիվ 7 ավագ դպրոց	4.18	5.62	5.60
«Հայ կրթություն» կրթ. հիմնադրամ	6.59	6.5	5.60


Հետաքրքիր է, որ Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցում ոչ ոք չի ընտրել «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաները, իսկ «Հանրահաշիվ» առարկայից այդ դպրոցը գրանցել է երկրորդ ամենաբարձր միջին միավորը (7.42) Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոցից հետո:

7. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

7.1. Աշակերտների պատրաստվածությունն ըստ վարչատարածքային միավորների

Ստորև բերված դիագրամներում ներկայացված են աշակերտների միջին միավորները և քանակները՝ ըստ վարչատարածքային միավորների: Յուրաքանչյուր դիագրամում առարկաները խմբավորված են ըստ պարտադիր առարկաների, բնագիտական առարկաների և օտար լեզուների:


Դիագրամ 9



Դիագրամ 9-ում տեսնում ենք, որ Շիրակի մարզում երեք պարտադիր առարկաներից էլ գրանցվել են ցածր արդյունքներ: Ցածր արդյունքներ են գրանցվել նաև հայոց լեզվից՝ Վայոց ձորի մարզում, մաթեմատիկայից՝ Արարատի մարզում, հայոց պատմությունից՝ Կոտայքի մարզում: Արդյունքները բարձ են եղել՝ հայոց լեզվից՝ Լոռվա մարզում, հայոց պատմությունից՝ Տավուշի մարզում, մաթեմատիկայից՝ Երևանում:

Դիագրամ 10

Մասնակիցների միջին միավորները և քանակները ըստ մարզերի (բնագիտական առարկաներ)




Թիրակ	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Արագածոտն	Վայոց ձոր	Կոտայք	Լոռի	Սյունիք	Տավուշ	Երևան
Ֆիզիկա	10	12	21	22	16	11	15	4	32	19
Կենսաբանություն	36	57	51	33	37	64	38	58	23	68
Աշխարհագրություն	71	50	19	13	91	18	59	11	21	19

Բնագիտական առարկաներից որոշ մարզերում աշակերտների միջին միավորները ցածր են եղել դրական միավորի շեմից. Վայոց ձորի մարզում՝ ֆիզիկայից և աշխարհագրությունից, Լոռվա մարզում՝ ֆիզիկայից: Լավագույն արդյունք են ցուցաբերել աշխարհագրությունից՝ Տավուշի մարզում, կենսաբանությունից՝ Սյունիքի մարզում, ֆիզիկայից՝ Երևանում:

Դիագրամ 11

Մասնակիցների միջին միավորները և քանակները ըստ մարզերի (օտար լեզուներ)




Թիրակ	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Արագածոտն	Վայոց ձոր	Կոտայք	Լոռի	Սյունիք	Տավուշ	Երևան
Անգլերեն	18	16	26	7	47	10	20	4	-	14
Ռուսաց լեզու	36	30	47	70	1	13	51	4	45	15

Օտար լեզուներից Սյունիքի մարզում ընտրել են միայն ռուսաց լեզուն: Ամենացածր միջին միավորն անգլերենից գրանցվել է Շիրակի մարզում, ռուսաց լեզվից՝ Գեղարքունիքի մարզում: Ամենաբարձր միջին միավորը անգլերենից գրանցվել է Կոտայքի մարզում, ռուսաց լեզվից՝ Երևանում:

8. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած 73 հանրակրթական ուսումնական հաստատություններից 26-ը եղել են խոշոր քաղաքների, 16-ը՝ միջին քաղաքների, 15-ը՝ փոքր քաղաքների, 14-ը՝ գյուղերի և 2-ը բարձրլեռնային գյուղերի (Չորագյուղի ավագ դպրոց և Արագածի թիվ 1 միջնակարգ դպրոց) ուսումնական հաստատություններ:

Դիագրամ 12



Բարձրլեռնային գյուղերի աշակերտները կազմել են ընդհանուր մասնակիցների 2.85 տոկոսը: Այստեղ չեն ընտրել «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» և «Անգլերեն» առարկաները, իսկ մյուս առարկաներից ցուցաբերել են նշանակալիորեն ցածր արդյունքներ:

Գյուղական բնակավայրերի աշակերտները «Աշխարհագրություն» առարկայից ցուցաբերել են ամենաբարձր արդյունքը՝ «Ֆիզիկա» առարկայից մասնակցել է միայն մեկ աշակերտ, որը չի հաղթահարել դրական միավորի շեմը (2.6 IRT միավոր): Մյուս առարկաներից այս տիպի բնակավայրի աշակերտների միջին միավորները քիչ տարբերությամբ մոտ են փոքր քաղաքների աշակերտների արդյունքներին:

Փոքր քաղաքների աշակերտները, մյուս բնակավայրերի համեմատ, լավագույն արդյունքը գրանցել են «Կենսաբանություն» առարկայից, իսկ ամենացածր արդյունքը՝ «Հանրահաշիվ» առարկայից:

Միջին քաղաքների աշակերտները լավագույն արդյունքը գրանցել են «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Անգլերեն» առարկաներից, իսկ

«Աշխարհագրություն» առարկայից, մյուս բնակավայրերի համեմատ, ամենացածր արդյունքն են գրանցել:

Խոշոր քաղաքների աշակերտները հիմնականում ցուցաբերել են լավ արդյունքներ, հատկապես «Ֆիզիկա» և «Հանրահաշիվ» առարկաներից արդյունքները նշանակալի տարբերվում են մյուս բնակավայրերի աշակերտների արդյունքներից:

Այսպիսով, բարձրլեռնային գյուղերի աշակերտները բոլոր առարկաներից ցուցաբերել են նշանակալի ցածր արդյունքներ, իսկ մյուս տիպերի բնակավայրերի աշակերտների միջին միավորները «Հայոց լեզու», «Հայոց պատմություն» և «Կենսաբանություն» առարկաներից նշանակալիորեն չեն տարբերվել: Հետաքրքիր է, որ «Անգլերեն» առարկայից բարձր ընդհանուր միջին միավորը պայմանավորված է խոշոր և միջին քաղաքների աշակերտների նշանակալի բարձր արդյունքներով: «Հանրահաշիվ» առարկայի դեպքում միջին միավորներն աստիճանաբար նվազում են խոշոր քաղաքներից մինչև բարձրլեռնային գյուղեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի նոյեմբերի 7-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 73 հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում: Գնահատման նպատակը աշակերտների 9-րդ դասարանի գիտելիքների ստուգումն էր, որով նրանք մուտք էին գործել ավագ դպրոց:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ այս տարի արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցները հնարավորություն են ունեցել պարտադիր առարկաներից, բնագիտական առարկաներից և օտար լեզուներից ընտրել երկու առարկա: Ընտրության հնարավոր տարբերակները մանրամասն ներկայացված են ներածության մեջ: Աշակերտների մեծ մասը՝ 66.8 տոկոսը, նախապատվությունը տվել է «Հայոց լեզու» առարկային: Համեմատած նախորդ տարիների արդյունքների հետ, այս տարի հայոց լեզվից աշակերտների միջին միավորն իջել է և եղել է ամենացածրը, իսկ ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից: Հաշվի առնելով այն, որ պետական միասնական քննությունների ժամանակ նույնպես անգլերենի միջին միավորն է բարձր եղել, կարող ենք ասել, որ երեխաներն ավելի մոտիվացված են այս առարկան սովորելու:

➤ **Գնահատականների խմբերի համեմատությունն ըստ առարկաների**

«Անբավարար» գնահատականների ամենամեծ տոկոսները դիտարկվել են հայոց լեզվից՝ 18.9 տոկոս, և հանրահաշվից՝ 17.3 տոկոս, ամենափոքրը՝ 7.1 տոկոս, ռուսաց լեզվից: Գերազանց գնահատականների ամենամեծ՝ 22.7 տոկոսը դիտարկվել է «Անգլերեն» առարկայից, ամենափոքրը՝ 3.6 տոկոսը, «Աշխարհագրություն» առարկայից: Համեմատելով պետական միասնական քննությունների հետ, որի ժամանակ աշխարհագրություն հանձնել են մասնակիցների մինչև 3 տոկոսը, իսկ ուսումնասիրվող արտաքին ընթացիկ գնահատման դեպքում այդ ցուցանիշը կազմել է 11 տոկոս, կարելի է եզրակացնել, որ արտաքին գնահատման ժամանակ երկրորդ առարկայի ընտրության մեջ չկողմնորոշված որոշ աշակերտներ պարզապես ընտրել են «Աշխարհագրություն» առարկան:

➤ **Արտաքին և ներքին գնահատումների համեմատությունը**

Ի տարբերություն արտաքին գնահատման՝ ներքին գնահատման դեպքում 1-3 գնահատականներ գրեթե չեն գրանցվել, իսկ 9-10 գնահատականների խմբերը նշանակալիորեն մեծ են: Երկու գնահատումների դեպքում էլ ամենացածր միջին միավորը գրանցվել է «Հայոց լեզու» առարկայից: Ինչպես արդեն նշել ենք, արտաքին գնահատման ժամանակ ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից, հետևաբար, այս առարկայից ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունը եղել է ամենափոքրը՝ 1.1 միավոր: Այս տեսանկյունից ամենամեծ տարբերությունը եղել է «Հանրահաշիվ» առարկայից՝ 2.4 միավոր:

➤ **Վերլուծություն ըստ սեռերի**

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտների 54 տոկոսը եղել են աղջիկներ, 46 տոկոսը՝ տղաներ: Համեմատելով տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկների միջին միավորները նշանակալիորեն բարձր են եղել տղաների միջին միավորներից, այդ տարբերությունը նշանակալի չի եղել միայն «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաներից:

➤ **Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ հոսքերի**

Վերլուծությունից պարզվել է, որ պարտադիր՝ «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաներից աշակերտների միջին միավորներն ըստ հոսքերի նշանակալիորեն չեն տարբերվում, ինչը չի կարելի ասել «Հանրահաշիվ» առարկայի մասին, որտեղ հումանիտար և ընդհանուր հոսքերի աշակերտների միջին միավորները նշանակալիորեն ցածր են, թեև այս հոսքերում միայն 7 տոկոսն է ընտրել «Հանրահաշիվ» առարկան:

Բնագիտական առարկաներից ամենացածր միջին միավորները, գրեթե բոլոր հոսքերում, գրանցվել են ֆիզիկայից, միայն ֆիզմաթ հոսքի աշակերտների նշանակալի մեծ միջին միավորն է բարձրացնում այդ առարկայից ընդհանուր միջին միավորը: Այս հոսքում աշակերտները հիմնականում ընտրել են «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաները, որոնցից էլ գրանցել են ամենաբարձր միջին միավորները, այսինքն, այս հոսքում աշակերտների ընտրությունն ավելի նպատակաուղղված է:

Օտար լեզուներից միջին միավորները բարձր են բնագիտական հոսքում, ամենացածր միջին միավորը անգլերենից դիտարկվել է հումանիտար հոսքում, իսկ ռուսերենից՝ ընդհանուր հոսքում:

➤ **Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների գերակշիռ մասը եղել է ավագ դպրոցներից, հետևաբար բոլոր առարկաներից նրանց թիվը կազմել է 62-85 տոկոս, միայն «Ֆիզիկա» առարկայից է, որ մասնակիցների թիվը եղել է 30 տոկոս: Հետաքրքիր է, որ վարժարանների աշակերտների 61.8 տոկոսն ընտրել է «Ֆիզիկա» առարկան և գրանցել է ամենաբարձր միջին միավորը: Վարժարաններում, բացի «Հայոց լեզու» և «Կենսաբանություն» առարկաներից, մյուս բոլոր առարկաների միջին միավորները բարձր են եղել տվյալ առարկաների ընդհանուր միջին միավորներից: Միջնակարգ դպրոցներում ամենաբարձր միջին միավորը «Աշխարհագրություն» և «Հայոց լեզու» առարկաներից է գրանցվել, ավագ դպրոցներում՝ «Հայոց պատմություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնակիցների թիվը զգալի քիչ է եղել, իսկ միջին միավորները, բացի «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաներից, բարձր են եղել ընդհանուր միջին միավորներից:

➤ **Աշակերտների պատրաստվածությունն ըստ վարչատարածքային միավորների**

Ըստ վարչատարածքային միավորների վերլուծությունից պարզ է դարձել, որ Շիրակի մարզում երեք պարտադիր առարկաներից էլ գրանցվել են ցածր արդյունքներ: Ցածր արդյունքներ են գրանցվել նաև հայոց լեզվից՝ Վայոց ձորի մարզում, մաթեմատիկայից՝ Արարատի մարզում, հայոց պատմությունից՝ Կոտայքի մարզում: Արդյունքները բարձ են եղել հայոց լեզվից՝ Լոռվա մարզում, հայոց պատմությունից՝ Տավուշի մարզում, մաթեմատիկայից՝ Երևանում:

Բնագիտական առարկաներից որոշ մարզերում աշակերտների միջին միավորները ցածր են եղել դրական միավորի շեմից. Վայոց ձորի մարզում՝ ֆիզիկայից և աշխարհագրությունից, Լոռվա մարզում՝ ֆիզիկայից: Լավագույն արդյունք են ցուցաբերել՝ աշխարհագրությունից՝ Տավուշի մարզում, կենսաբանությունից՝ Սյունիքի մարզում, ֆիզիկայից՝ Երևանում:

Օտար լեզուներից Սյունիքի մարզում ընտրել են միայն ռուսաց լեզուն: Ամենացածր միջին միավորն անգլերենից գրանցվել է Շիրակի մարզում, ռուսաց լեզվից՝ Գեղարքունիքի մարզում: Ամենաբարձր միջին միավորը անգլերենից գրանցվել է Կոտայքի մարզում, ռուսաց լեզվից՝ Երևանում:

➤ **Աշակերտների պատրաստվածությունը ըստ բնակավայրերի տիպերի**

Հետաքրքիր է, որ դիտարկելով աշակերտների պատրաստվածության արդյունքներն ըստ բնակավայրերի տիպերի՝ տեսնում ենք, որ բարձրլեռնային գյուղերի աշակերտները բոլոր առարկաներից ցույցաբերել են նշանակալի ցածր արդյունքներ, իսկ մյուս տիպերի բնակավայրերի աշակերտների միջին միավորները նշանակալիորեն չեն տարբերվել «Հայոց լեզու», «Հայոց պատմություն» և «Կենսաբանություն» առարկաներից: «Անգլերեն» առարկայի ընդհանուր միջին միավորի բարձր լինելը պայմանավորված է խոշոր և միջին քաղաքների աշակերտների նշանակալի բարձր արդյունքներով: «Հանրահաշիվ» առարկայի դեպքում միջին միավորներն աստիճանաբար նվազում են՝ խոշոր քաղաքներից մինչև բարձրլեռնային գյուղեր:

Գոհար ՉԱԼՈՒՄՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
առաջատար մասնագետ

2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր
ամիսներին ՀՀ հանրակրթական
ուսումնական հաստատություններում
իրականացված արտաքին ընթացիկ
գնահատման ժամանակ 10-րդ
դասարաններում դասավանդող
ուսուցիչների հարցման արդյունքները

Ներածություն

2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Գնահատման և թեստավորման կենտրոնը իրականացրել է ՀՀ հանրակրթական 60 ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների հարցում, որոնք լրացրել են ուսուցչի հարթաթերթ (տե՛ս հավելված 1): Հարցման նպատակն է եղել ուսումնասիրել ուսուցիչների մանկավարժական ստաժի, ատեստացիայի մասնակցության և որակավորման աստիճանների առկայության ազդեցությունը աշակերտների հանրակրթական ցուցանիշների վրա, ինչպես նաև հիմնվելով ուսուցիչների հարցման արդյունքների վրա ուսումնասիրել 10-րդ դասարաններում սովորողների թվի, դասավանդվող դասագրքերի և օժանդակ նյութերի, հոսքային ուսուցման պարագայում համապատասխան առարկայի ուսումնասիրությանը հատկացվող շաբաթական դասաժամերի, սովորողների արտադասարանային պարապմունքների մասնակցության, ուսումնական գործընթացներում ուսուցչի կողմից համակարգչային տեղեկատվական միջոցներից օգտվելու հաճախության, և, ուսուցիչների կարծիքով,

ուսումնական գործընթացներում ծնողների մասնակցության տարբեր դրսևորումների ազդեցությունները սովորողների հանրակրթական ցուցանիշների վրա:

Այս վերլուծության արդյունքները վերաբերվում են ուսումնասիրված հանրակրթական ուսումնական հաստատություններին և այդ հաստատություններում դասավանդող ուսուցիչներին:

Այդ նպատակով կիրառվել է ցրվածքային վերլուծության մեթոդը (ANOVA): Բազմակի գծային ռեգրեսիայի եղանակով իրականացվել է նաև ռեգրեսիոն վերլուծություն [1]: Կիրառվել է IBM SPSS, MS Excel, MS Access, IATA, MS SQL ծրագրային գործիքակազմը:

1. Ուսուցիչների հարցում

Հարցմանը մասնակցել են ՀՀ 60 հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդող 416 ուսուցիչներ՝ 90%-ը կանայք և 10%-ը տղամարդիկ: Ստորև ներկայացված են ընդհանուր վիճակագրական տվյալներ:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված ուսուցիչները, ըստ իրենց դասավանդած առարկայի, հետևյալ համամասնության են՝ 24%-ը հայոց լեզու և հայ գրականություն, 17%-ը՝ մաթեմատիկա, 12%-ը՝ հայոց պատմություն, 10%-ը՝ անգլերեն, 8%-ը՝ ռուսաց լեզու, 1%-ը՝ ֆրանսերեն, 6%-ը՝ քիմիա, 8%-ը՝ ֆիզիկա, 8%-ը՝ կենսաբանություն և 6%-ը՝ աշխարհագրություն:

Ուսուցիչների մեծ մասը (59%-ը) նշել է, որ իրենք դասավանդում են մեկ, 23%-ը՝ երկու, 6%-ը՝ երեք, 4%-ը՝ չորս, 2%-ը՝ հինգ, 2%-ը՝ վեց, 1%-ը՝ յոթ և 1%-ը՝ ութ դասարաններում, իսկ 2%-ը չի նշել որևէ պատասխան:

Ըստ հոսքերի ուսուցիչների բաշխումը հետևյալն է՝ 24%-ը՝ բնագիտական, 35%-ը՝ հումանիտար, 19%-ը՝ ընդհանուր, 14%-ը՝ տնտեսագիտական, 6%-ը՝ ֆիզմաթ հոսքերի ուսուցիչներ, իսկ 2%-ը՝ չի նշել, թե որ հոսքում է դասավանդում:

2. Դասարաններում աշակերտների թիվը


10-րդ դասարանում սովորողների միջին թիվը 17 է, նվազագույնը՝ 2, իսկ առավելագույնը՝ 31 աշակերտ: Դիտարկենք հանրակրթական ուսումնական հաստատության տիպից կախված դասարաններում սովորողների խտությունը և նրանց առաջադիմության միջին միավորները:

2.1 Ավագ դպրոցների 10-րդ դասարաններում սովորողների թիվը

Ավագ դպրոցներում սովորողների միջին թիվը դասարաններում 18 է: Ստորև բերված [«արկղանման դիագրամում»](#) ներկայացված է

տարբեր հոսքերում դասավանդող ուսուցիչների կողմից հարցաթերթում նշված իրենց դասարաններում սովորողների խտության բաշխումը [2]:

Դիագրամ 1




Այսպես, օրինակ, ուսումնասիրվածավագ դպրոցների բնագիտական հոսքերում սովորում են 2-29 աշակերտ, և այդ հոսքերում դասավանդող ուսուցիչների կողմից տրված հաճախ հանդիպող պատասխանը եղել է 18 աշակերտ:

Աշակերտների ամենամեծ խտությունը հումանիտար հոսքերում է: Այս հոսքերում դասավանդող ուսուցիչների պատասխաններում հաճախ հանդիպում է «<20 աշակերտ>> (տե՛ս տղիագրամ 1): Իսկ ֆիզկուլթ հոսքերում սովորողների թիվը դասարաններում տատանվում է՝ 11-21 աշակերտ, և ուսուցիչների հաճախ նշած պատասխանը եղել է 11 աշակերտ: Տնտեսագիտական հոսքերում սովորողների թիվը 6-27 է, սակայն եղել է դեպք, երբ ուսուցիչը նշել է 2 աշակերտ (Գյումրու թիվ 3 ավագ դպրոց):

2.2 Միջնակարգ դպրոցների 10-րդ դասարաններում սովորողների թիվը

Ըստ ուսուցիչների պատասխանների՝ միջնակարգ դպրոցներում աշակերտների միջին թիվը 10-րդ դասարաններում 17 է: Ամենաշատ թվով աշակերտները հումանիտար հոսքերում են (միջինը 18 աշակերտ):

Դիագրամ 2



Ուսումնասիրված միջնակարգ դպրոցների մյուս երկու հոսքերի վերաբերյալ ինֆորմացիայի բացակայությունը բացատրվում է ուսուցիչների փոքրաթիվ լինելով կամ այդ դպրոցներում սվյալ հոսքի բացակայությամբ:

2.3 Վարժարաններում 10-րդ դասարաններում սովորողների թիվը

Ուսումնասիրված վարժարաններում սովորողների միջին թիվը 10-րդ դասարաններում 22 է: Ամենամեծ թվով սովորողները ֆիզմաթ հոսքերում են՝ 25-31 աշակերտ:




Սակայն վերոնշյալ դիագրամում կան երեք եզակիություններ բնագիտական հոսքում (Վայքի քաղաքապետարանի հանրակրթական վարժարանում) սովորում է 8 աշակերտ, ընդհանուր հոսքում (Իջևանի վարժարանում)՝ 6 աշակերտ և ֆիզմաթ հոսքում (Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոցում)՝ 3 աշակերտ:

2.4 Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում սովորողների թիվը

Ուսումնասիրված ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում սովորողների միջին թիվը 13 է: Այս տիպի դպրոցներում սովորողների թիվը մեծ է հումանիտար (16 աշակերտ) և տնտեսագիտական (15 աշակերտ) հոսքերում: Այս երկու հոսքերում էլ ուսուցիչների հաճախ հանդիպող պատասխանը եղել է 15 աշակերտ:

Դիագրամ 4

Ոչ պետական ուս. հաստատությունների 10-րդ դասարաններում սովորողների թիվը ըստ հոսքերի



Ուսումնասիրված ոչ պետական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարանում սովորողների թիվը ներկայացնող դիագրամում կա եզակիություն. հունվարսար հոսքում (<<Հայ կրթություն>> կրթական հիմնադրամում) սովորողների թիվը 6 է:

Այսպիսով, դատելով սովորողների՝ դասարաններում առկա թվի միջին արժեքներից՝ ամենախիտը (միջինը 22 աշակերտ) վարժարանների դասարաններն են, ի տարբերություն ավագ դպրոցների (միջինը 18 աշակերտ), միջնակարգ դպրոցների (միջինը 17 աշակերտ) և ոչ պետական ուսումնական հաստատությունների (միջինը 13 աշակերտ):

Դիտարկենք միևնույն հոսքերում սովորողների հանրակրթական ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 1):

Միևույն հոսքերում սովորողների առաջադիմության ցուցանիշները ըստ ուսումնական հաստատության տիպի					
Հոսքեր	Բնագիտական	Հումանիտար	Ընդհանուր	Տնտեսագիտական	Ֆիզիկ
Դպրոցի տիպ					
Ավագ դպրոց	5.34	5.29	4.55	5.26	5.11
Միջնակարգ դպրոց	6.02	5.28	5.21	5.57	4.91
Վարժարան	5.87	4.57	5.21	-	7.37
Ոչ պետական ուս. հաստատություն	7.31	6.70	5.44	6.48	5.80

Բնագիտական և հումանիտար հոսքերում սովորողների առաջադիմությունը

Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում բնագիտական և հումանիտար հոսքերում սովորողների հանրակրթական ցուցանիշը¹ նշանակալիորեն բարձր է ավագ դպրոցների, միջնակարգ դպրոցների և վարժարանների հայր նույն հոսքերում սովորողների առաջադիմությունից²:

Ընդհանուր հոսքերում սովորողների առաջադիմությունը

Ինչպես նկատում ենք, ընդհանուր հոսքերում 10-րդ դասարանցիների ամենացածր միջին միավորները ավագ դպրոցներում սովորողների միջին միավորներն են: Ե՛վ միջնակարգ դպրոցներում, և՛ վարժարաններ-

¹Հանրակրթական ցուցանիշ ասելով՝ հասկանում ենք Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից 10-րդ դասարանցիների շրջանում իրականացված արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ աշակերտների՝ իրենց նախընտրած երկու առարկաներից թեստավորման ժամանակ ձևավորված ցուցանիշները: Այս ցուցանիշը նաև ցույց է տալիս հանրակրթության երրորդ աստիճան մուտք գործելիս աշակերտների նախկին կրթական բազան: Ցուցանիշը գնահատվում է 10 միավորային համակարգով:

²Աղյուսակներում մզեցված են խմբերում ցուցաբերված հանրակրթական ցուցանիշների միջին միավորների մեծագույն արժեքները: Միևույն գույնով նշված են քննարկվող այն խմբերի ցուցանիշները, որտեղ խմբերի հանրակրթական միջին միավորների միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են և առկա է 0.5 և ավելի միավորի տարբերություն:

րում, և՛ ոչ պետական ուսումնական հաստատություններում սովորողների առաջադիմությունը նշանակալիորեն բարձր է ավագ դպրոցներում սովորողների առաջադիմությունից: Սա, թերևս, բացատրվում է այն հանգամանքով, որ սովորողների մի մասը նախընտրում է այս հոսքում սովորել, քանի որ դեռևս կողմնորոշված չեն իրենց ապագա մասնագիտության ընտրության հարցում, առաջնորդվում է դպրոցը պարզապես ավարտելու ցանկությամբ:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված ընդհանուր հոսքերում սովորողների գրեթե կեսը սովորում են միջնակարգ դպրոցներում: Հարկավոր է նշել, որ գյուղական, բարձրլեռնայինն հեռավորու սահմանամերձ գյուղական միջնակարգ դպրոցներում աշակերտները սովորում են ընդհանուր հոսքերում:

Տնտեսագիտական հոսքերում սովորողների առաջադիմությունը

Տնտեսագիտական հոսքերում ոչ պետական ուսումնական հաստատություններում սովորողների առաջադիմությունը նշանակալիորեն բարձր է ավագ դպրոցում սովորողների առաջադիմության հանրակրթական ցուցանիշներից:

Ֆիզմաթ հոսքերում սովորողների առաջադիմությունը

Ֆիզմաթ հոսքում սովորողների առաջադիմության հանրակրթական ցուցանիշներից ամենաբարձրը եղել է վարժարաններում սովորողների ցուցանիշը, որը նշանակալիորեն բարձր է և՛ ավագ դպրոցներում, և՛ միջնակարգ դպրոցներում սովորողների ցուցանիշներից:

Այսպիսով, ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ում, ոչ պետական ուսումնական հաստատությունների բոլոր հոսքերում հանրակրթական ցուցանիշի միջին միավորները ամենաբարձր են բացառությամբ ֆիզմաթ հոսքերից:

Ֆիզմաթ հոսքերում սովորողների հանրակրթական ցուցանիշի ամենաբարձր միավորը վարժարաններում է: Իսկ ավագ դպրոցների ընդհանուր հոսքերում սովորողների ցուցանիշը ներկայացված աղյուսակում ամենացածրն է:

3. Ռեգրեսիոն վերլուծություն և ազդեցությունների դասակարգում

Իրականացվել է տվյալների ռեգրեսիոն վերլուծություն՝ ստորև ներկայացվող բազմակի գծային ռեգրեսիայի եղանակով: Պարզվել է, որ դասարաններում առկա աշակերտների թիվը և հոսքային ուսուցման եղանակը գործոններ են, որոնք 10-րդ դասարաններում սովորողների հանրակրթական ցուցանիշների վրա ազդում են նշանակալիորեն: Այդ ազդեցությունները առաջարկվող գծային բազմակի ռեգրեսիայի մոդելում հանդես են գալիս իրենց համապատասխան գործակիցներով (կշիռներով):

$$\begin{aligned}
 Y_{\text{հանրակրթ. ցուց.}} = & 3.108 + 0.633 * (1 - 10 - \text{ականաշակերտ}) + 0.298 \\
 & * (11 - 15 - \text{ականաշակերտ}) + \\
 & + 0.307 * (21 - 30 - \text{ականաշակերտ}) + 2.228 * (\text{բնագիտական հոսք}) + \\
 & + 1.891 * (\text{հումանիտար հոսք}) + 1.916 * (\text{ընդհանուր հոսք}) + \\
 & + 2.771 * (\text{ֆիզմաթ հոսք}) + 2.121 * (\text{տնտեսագիտական հոսք}) + \varepsilon
 \end{aligned}$$

$Y_{\text{հանրակրթ. ցուց.}}$ -ը սովորողների կանխատեսվող հանրակրթական ցուցանիշն է, որը վեռնյալ բանաձևում ձևավորվում է որպես դիտարկված դասարաններում առկա աշակերտների ունեցած թվի և աշակերտների բնագիտական, հումանիտար, ընդհանուր, տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում սովորելու ազդեցություններով: Քննարկված ազդեցությունների բացակայության դեպքում սովորողի ցուցանիշը կանխատեսվում է 3.1 միավոր: Նկատում ենք, որ բոլոր ազդեցությունները

դրականորեն են անդրադառնում սովորողների ցուցանիշների վրա (բանաձևում բոլոր ազդեցությունների գործակիցները դրական մեծություններ են): Այդ ազդեցությունները կարող ենք դասակարգել ըստ բանաձևում ազդեցությունների գործակիցների մեծության և ուղղության:

- Առավելագույն դրական ազդեցություն ունի ֆիզմաթ հոսքում, բնագիտական հոսքում, տնտեսագիտական հոսքում, ընդհանուր հոսքում, հումանիտար հոսքում սովորելը:
- Միջին դրական ազդեցություն ունի 1-10-ական և 21-30-ական աշակերտ ունեցող դասարաններում սովորելը:
- Որոշակի թույլ դրական ազդեցություն ունի 11-15-ական աշակերտ ունեցող դասարաններում սովորելը:

Դասարաններում աշակերտների թիվը խմբավորվել է 1-10, 11-15, 16-20 և 21-30 աշակերտ ունենալու սկզբունքով և վերոնշյալ կանխատես-

սումը իրականացվել է 16-20 աշակերտ ունեցող խմբի համեմատությամբ, որի ազդեցությունը կանխատեսման մոդելում բացակայում է վիճակագրորեն նշանակալի չլինելու պատճառով: Բերենք օրինակներ: Եթե աշակերտը սովորում է 11-15 աշակերտ ունեցող բնագիտական հոսքի դասարանում, ապա նրա հանրակրթական ցուցանիշը կանխատեսվում է 5.63:

$$Y_{\text{հանր.ցուցանիշ}_{աշ.1}} = 3.108 + 0.298 * 1 + 2.228 * 1 + \varepsilon_1 = 5.63 + \varepsilon_1$$

Իսկ ε_1 տվյալ աշակերտի ցուցանիշի կանխատեսման սխալն է:

Եթե մեկ այլ աշակերտը սովորում է 1-10-ական աշակերտ ունեցող տնտեսագիտական հոսքի դասարանում, ապա նրա ցուցանիշը 5.86 է:

$$Y_{\text{հանր.ցուցանիշ}_{աշ.2}} = 3.108 + 0.633 * 1 + 2.121 * 1 + \varepsilon_2 = 5.86 + \varepsilon_2$$

ε_2 -ը երկրորդ աշակերտի ցուցանիշի կանխատեսման սխալն է:

4. Դասագրքեր և օժանդակ նյութեր

Ուսուցչի հարցաթերը ներառել է մի հարց ուսուցիչների կողմից ուսումնական գործընթացում օգտագործվող դասագրքերի վերաբերյալ: Ուսուցիչները նշել են այն հեղինակների դասագրքերը, որոնք իրենք կիրառում են 10-րդ դասարաններում դասավանդելիս: Ուսուցիչների 95%-ը նշել է առարկայական դասագրքերի հեղինակների գրքերը, ինչպես նաև տվյալ հոսքերի համար նախատեսված դասագրքերը: Միայն ուսուցիչների 5%-ն է նշել լրացուցիչ որևէ հեղինակի դասագիրք կամ խնդրագիրք, որոնք կիրառում են ի հավելումն ծրագրային դասագրքերի: Լրացուցիչ գրականություն կիրառող ուսուցիչների 81%-ը մաթեմատիկայի և 4-ական տոկոսն էլ անգլերենի, քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության ուսուցիչներ են: Հետաքրքիր կլիներ դիտարկել լրացուցիչ դասագրքեր նշած և չնշած ուսուցիչների մոտ սովորողների առաջադիմության համեմատությունը, սակայն նրանց փոքր թվի պատճառով հնարավոր չէ արդյունքների մասին եզրակացություն անել:

Հետաքրքիր է ուսումնասիրել 10-րդ դասարանում դասավանդող ուսուցիչների կողմից նշված գրքերի ցանկը: <<Հայոց լեզու և հայ գրականություն>>, <<Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր>>, <<Երկրաչափություն>>, <<Աշխարհագրություն>> առարկաների դեպքում բոլոր ուսուցիչները մինևսյն հեղինակների գրքերով են դասավանդում, իսկ <<Կենսաբանություն>>, <<Քիմիա>>, <<Ֆիզիկա>> առարկաների դեպքում, բացի դասագրքից, ուսուցիչները նշել են նաև խնդրագրքեր և առարկայական շտեմարաններ:

Անգլերեն և ռուսաց լեզուդասավանդող ուսուցիչները նշել են հանրակրթական ուսումնական հաստատություններում կիրառվող երկու տարբեր հեղինակների դասագրքեր ըստ ուսուցչի (դպրոցի) նախընտրության: Այն ուսուցիչները, որոնք չեն նշել կոնկրետ հեղինակների անուններ, այլ նշել են պարզապես <<դասագիրք>> կամ <<հոսքային դասագիրք>>, փոքրաթիվ են: Այս ուսուցիչները կազմում են մանկավարժական որակավորման տարակարգերի համար դեռևս չդիմած ուսուցիչների 6%-ը և արդեն 1-ին տարակարգ ունեցող ուսուցիչների 2%-ը: 2-րդ տարակարգեր արդեն ունեցողների և տարակարգի համար արդեն դիմած, բայց դեռևս այն չստացած ուսուցիչների շրջանում 10-րդ դասարանում իրենց դասավանդած առարկաների դասագրքերի հեղինակները նշված են բարեխղճորեն:

Այս ուսուցիչների խումբը նաև դիտարկվել է ըստ իրենց մանկավարժական աշխատանքի ստաժի: 1-10 տարվա աշխատանքային ստաժ ունեցողների 3%-ը, 11-20 տարվա ստաժ ունեցողների 4%-ը, 21-30 աշխատանքային ստաժ ունեցողների 1 %-ը և 31 և ավելի տարվա մանկավարժական ստաժ ունեցողների 8%-ը չի նշել դասավանդման ժամանակ օգտագործվող դասագրքերի հեղինակների անունները:


5. Առարկաների դասավանդմանը հատկացվող շաբաթական դասաժամեր

<<Ձեր դպրոցում շաբաթական քանի դասաժամ է հատկացվում 10-րդ դասարանում Ձեր դասավանդած առարկայի ուսուցմանը(տարբեր հոսքերում դասավանդելու պարագայում նշել յուրաքանչյուր հոսքի դասաժամը)>> հարցին ուսուցիչների պատասխանները ներկայացվում է ստորև:

5.1 Բնագիտական հոսք

Դիագրամ 5ա

Բնագիտական հոսքում առարկայի ուսումնասիրությանը տրամադրվող շաբաթական դասաժամերը ըստ ուսուցիչների



Բնագիտական հոսքերում <<Հայոց լեզու և հայ գրականություն>> առարկայի ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 2-5 դասաժամ: Ուսուցիչները իրենց պատասխաններում հաճախ նշել են 3 դասաժամ: Հայոց պատմություն այս հոսքերում ուսուցիչները պարապում են շաբաթական 2-ական դասաժամով: Եղել է նաև մի ուսուցիչ, ով նշել է 4 դասաժամ: Քիմիայի ուսուցիչները այս հոսքերում պարապում են շաբաթական 3-5 դասաժամով, եղել են նաև եզակի դեպքեր, երբ ուսուցիչը նշել է 1 դասաժամ (Նոյեմբերյանի ավագ դպրոցում և Մասիսի թիվ 5 ավագ դպրոցում): Ֆիզիկա այս հոսքում դասավանդում են շաբաթական 1-4 դասաժամ: Կենսաբանություն դասավանդվում է շաբաթական 1-5 դասաժամ: Աշխարհագրություն դասավանդվում է շաբաթական 1-2 դասաժամ, հաճախ ուսուցիչները նշել են 1 դասաժամ: Մաթեմատիկա դասավանդվում է շաբաթական 3-8

դասաժամեր, հաճախ ուսուցիչները նշել են 7 դասաժամ: Ռուսաց լեզվի դասավանդմանը տրամադրվում է շաբաթական 1-2 դասաժամ: Անգլերենի ուսումնասիրմանը տրվում է շաբաթական 2-4 դասաժամ: Ֆրանսերենի համար նախատեսվում է շաբաթական 2 դասաժամ:

Բնագիտական հոսքերում շաբաթական դասաժամերը ըստ դպրոցի տիպերի


Ավագ դպրոցներում առարկայի դասավանդմանը շաբաթական տրամադրվում են հայոց լեզու և հայ գրականություն՝ 2-5, քիմիա՝ 3-5, կենսաբանություն՝ 3-5, ֆիզիկա՝ 1-4, մաթեմատիկա՝ 3-8, աշխարհագրություն՝ 1-2, ռուսաց լեզու՝ 1-2 և անգլերեն՝ 2-4 դասաժամ:

Վարժարաններում՝ հայոց լեզու և հայ գրականություն՝ 4, հայոց պատմություն՝ 2, ֆիզիկա՝ 4, կենսաբանություն՝ 2, մաթեմատիկա՝ 3-8 դասաժամ: Մյուս հանրակրթական առարկաների ուսուցիչները չեն մասնակցել ուսուցչի հարցմանը:

Ոչ պետական ուսումնական հաստատություններում այս հոսքում հայոց լեզու և հայ գրականությունը 2, ֆիզիկան շաբաթական 3 դասաժամով են ուսումնասիրում: Մյուս հանրակրթական առարկաների ուսուցիչները չեն մասնակցել ուսուցչի հարցմանը, ինչը նաև պայմանավորված է այդ դասարաններում այլ առարկաներից աշակերտների քննություն չհանձնելով:

5.2 Հումանիտար հոսք

Դիագրամ 5բ



Հումանիտար հոսքերում հայոց լեզվի և հայ գրականության ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 2-7 դասաժամ: Հայոց պատմություն այս հոսքերում ուսուցիչները պարապում են շաբաթական 1-4 դասաժամ: Քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն հոսքերում պարապում են շաբաթական 1-2 դասաժամով: Աշխարհագրությունը դասավանդվում է շաբաթական 1-3 դասաժամ: Մաթեմատիկան դասավանդվում է շաբաթական 3 դասաժամ: Թեպետ եղել են ուսուցիչներ, որոնք նշել են 1 (Մասիսի թիվ 5 ավագ դպրոցում, Սիսիանի ավագ դպրոցում, Վայք քաղաքի պետական հանրակրթական վարժարանում), 2 (Գուգարքի ավագ դպրոցում) և 4 (Հրազդանի թիվ 10 ավագ դպրոցում, թիվ 29 ավագ դպրոցում) դասաժամ: Ռուսաց լեզվի դասավանդմանը տրամադրվում է շաբաթական 2-4 դասաժամ: Անգլերենի ուսումնասիրմանը շաբաթական տրամադրվում է 2-5 դասաժամ, եղել է նաև դեպք, երբ ուսուցիչը պատասխանել է շաբաթա-

կան 1 (Գուգարքի ավագ դպրոց) դասաժամ: Ֆրանսերենի համար նախատեսվում է շաբաթական 4 դասաժամ:

Հումանիտար հոսքերում շաբաթական դասաժամերը ըստ դպրոցների տիպերի

Ավագ դպրոցներում հայոց լեզվի և հայ գրականության ուսումնասիրությանը տրամադրվում է 2-7, հայոց պատմությանը՝ 1-4, քիմիային, կենսաբանությանը, ֆիզիկային և աշխարհագրությանը 1-2-ական, մաթեմատիկային 1-4, անգլերենին 2-5, ռուսաց լեզվին 2-4, ֆրանսերենին 4 շաբաթական դասաժամ:

Միջնակարգ դպրոցներում հայոց լեզվին և հայ գրականությանը՝ 2, իսկ անգլերենին՝ 3 շաբաթական դասաժամ:


Վարժարաններում հայոց լեզվին և հայ գրականությանը 5, հայոց պատմությանը 3, կենսաբանությանը 1 և մաթեմատիկային 1 դասաժամ է տրամադրվում:

Ոչ պետական ուսումնական հաստատություններում առարկաների ուսումնասիրությանը շաբաթական տրամադրվում է՝ հայոց լեզու և հայ գրականությանը, հայոց պատմությանը, մաթեմատիկային 3-ական, քիմիային, ֆիզիկային 1-ական և աշխարհագրությանը՝ 2 դասաժամ:

5.3 Ընդհանուր հոսք

Դիագրամ 5գ

Ընդհանուր հոսքում առարկայի ուսումնասիրությանը տրամադրվող շաբաթական դասաժամերը ըստ ուսուցիչների



շաբաթական տրամադրվում են 2-ական դասաժամ, իսկ ֆիզիկայի ուսումնասիրությանը տրամադրվում է 3 դասաժամ բոլոր տիպի ուսումնական հաստատություններում:

Հայոց լեզու և հայ գրականության ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 1-5, իսկ մաթեմատիկայի ուսումնասիրությանը շաբաթական 1-4 դասաժամ՝ կախված դպրոցի տիպից:

Ընդհանուր հոսքերում շաբաթական դասաժամերը ըստ դպրոցների տիպերի

Ավագ դպրոցներում հայոց լեզվի և հայ գրականության ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 2-5, մաթեմատիկային՝ 1-4, ֆիզիկային՝ 3, ռուսաց լեզվին՝ 3-6 դասաժամ, իսկ մյուս բոլոր առարկաների ուսումնասիրությանը՝ 2 դասաժամ:


Միջնակարգ դպրոցներում հայոց լեզվին և հայ գրականությանը՝ շաբաթական 1-5, մաթեմատիկային՝ 2-4, ֆիզիկային՝ 3, իսկ մնացած բոլոր առարկաների ուսումնասիրությանը տրամադրվում է 2-ական դասաժամ:

Վարժարաններում նույն այս հոսքերում հայոց լեզու և հայ գրականության ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 2-5, հայոց պատմությանը՝ 2-4, ֆիզիկային՝ 3, մաթեմատիկային՝ 3-4 դասաժամ, իսկ մյուս առարկաներին՝ 2-ական դասաժամեր:

Ոչ պետական ուսումնական հաստատություններում բոլոր առարկաների ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 2-ական դասաժամեր:

5.4 Տնտեսագիտական հոսք

Պիագրամ 5դ



Տնտեսագիտական հոսքերում հայոց լեզվի և հայ գրականության ուսումնասիրությանը շաբաթական տրամադրվում է 2-6 դասաժամ, հայոց պատմությանը և աշխարհագրությանը՝ շաբաթական 2 դասաժամ, քիմիային, կենսաբանությանը և ռուսաց լեզվին՝ շաբաթական 1-2 դասաժամ, ֆիզիկային՝ 1-4 դասաժամ, մաթեմատիկային՝ 1-8, իսկ անգլերենին՝ 3-5 դասաժամ:

Տնտեսագիտական հոսքերում շաբաթական դասաժամերը ըստ դպրոցների տիպերի

Ավագ դպրոցներում այս հոսքերում հայոց լեզվի և հայ գրականության ուսումնասիրությանը տրամադրվում է 2-6, մաթեմատիկային՝ 2-8, անգլերենին՝ 4-5, ռուսաց լեզվին՝ 1-2, ֆիզիկային՝ 1-4, հայոց պատմությանը և քիմիային՝ 2-ական, կենսաբանությանը և աշխարհագրությանը՝ 1-2-ական շաբաթական դասաժամեր:

Միջնակարգ դպրոցներում անգլերենի ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 3 դասաժամ:


Վարժարաններում մաթեմատիկայի ուսումնասիրությանը շաբաթական 8 դասաժամ է տրամադրվում:

Ոչ պետական ուսումնական հաստատություններում առարկաների ուսումնասիրությանը տրամադրվում է՝ հայոց լեզվին և հայ գրականությանը, հայոց պատմությանը, քիմիային 2-ական, ֆիզիկային 1-2, մաթեմատիկային 3-7, հաճախ 5 շաբաթական դասաժամեր:

5.5 Ֆիզմաթ հոսք

Դիագրամ 5ե

Ֆիզմաթ հոսքում առարկայի ուսումնասիրությանը տրամադրվող շաբաթական դասաժամերը ըստ ուսուցիչների



Ֆիզմաթ հոսքերում հայոց լեզվի և հայ գրականության ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 2 դասաժամ, քիմիայի ուսումնասիրությանը՝ 1-2 դասաժամ, ֆիզիկայի դասավանդմանը՝ շաբաթական 4-6 դասաժամ, կենսաբանության, աշխարհագրության, ռուսաց լեզվի ուսումնասիրությանը այս հոսքերում տրամադրվում է 1-ական, մաթեմատիկայի ուսումնասիրությանը՝ շաբաթական 7-8 դասաժամ:

Ֆիզմաթ հոսքերում շաբաթական դասաժամերը ըստ դպրոցների տիպերի

Ավագ դպրոցներում ֆիզիկայի ուսումնասիրությանը տրամադրվում է շաբաթական 4-6, մաթեմատիկային 7-8 դասաժամ, աշխարհագրությանը և ռուսաց լեզվին՝ շաբաթական 1-ական դասաժամ:

Վարժարաններում հայոց լեզվի և հայ գրականությանը ուսումնասիրությանը տրամադրվում է 2, ֆիզիկային՝ 4-5, մաթեմատիկային՝ 4-8, ֆրանսերենին՝ 2, քիմիային, կենսաբանությանը, աշխարհագրությանը՝ 1-ական շաբաթական դասաժամ:


Ոչ պետական ուսումնական հաստատություններում ֆիզիկայի ուսումնասիրությանը տրամադրվում է 2, մաթեմատիկային՝ 7, իսկ քիմիային՝ 2 շաբաթական դասաժամ:

6. Ուսուցիչների մանկավարժական ստաժը, ատեստացիայի մասնակցությունը, մանկավարժական որակավորման աստիճանները (տարակարգեր)

6.1 Ուսուցիչների մանկավարժական ստաժը


Հարցված ուսուցիչների 12%-ը ունի մինչև 10 տարվա, 26%-ը՝ 11-20 տարվա, 28%-ը՝ 21-30 տարվա, 34%-ը՝ 31 և ավելի տարվա մանկավարժական ստաժ:

Դիագրամ 6



Դիտարկենք սովորողների առաջադիմության հանրակրթական ցուցանիշների վրա իրենց ուսուցիչների մանկավարժական ստաժի ազդեցությունը: Դիագրամ 7-ում ներկայացված է վերոնշյալ մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների աշակերտների առաջադիմության միջին միավորները: Նշենք, որ էական տարբերություններ չեն նկատվում:

Դիագրամ 7



Այժմ դիտարկենք սովորողների առաջադիմության միջին միավորները կոնկրետ առարկաների դեպքում՝ կապվածնրանց դասավանդող ուսուցիչների մանկավարժական ստաժի հետ: Առաջադիմության ամենաբարձր միջին միավորները անգլերենից են (տարբեր մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների խմբերում): Աշակերտների առաջադիմության ամենաբարձր միջին միավորը անգլերենից է մինչև 10 տարի աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների շրջանում:


Աղյուսակ 2

Սովորողների առաջադիմությունը կապված ուսուցիչների մանկավարժական ստաժի հետ								
Ուսուցիչների մանկավարժական ստաժը	մինչև 10 տարի (ուսուցիչները ունեն 863 աշակերտ - 14%)		11-20 տարի (ուսուցիչները ունեն 1754 աշակերտ - 28%)		21-30 տարի (ուսուցիչները ունեն 2022 աշակերտ - 32%)		31 և ավելի տարի (ուսուցիչները ունեն 1641 աշակերտ - 26%)	
	Միջին միավորը	Սովորողների թիվը (%-ը)	Միջին միավորը	Սովորողների թիվը (%-ը)	Միջին միավորը	Սովորողների թիվը (%-ը)	Միջին միավորը	Սովորողների թիվը (%-ը)
Հայոց լեզու	5.21	163 (19%)	5.09	340 (19%)	5.06	377 (19%)	5.06	305 (19%)
Հանրահաշիվ	5.25	125 (14%)	5.12	278 (16%)	5.19	296 (15%)	5.17	253 (15%)
Հայոց պատմություն	5.85	102 (12%)	5.66	230 (13%)	5.81	279 (14%)	5.88	215 (13%)
Ռուսաց լեզու	6.31	111 (13%)	6.01	166 (10%)	6.27	213 (10%)	6.05	170 (10%)
Անգլերեն	6.92	95 (11%)	6.70	145 (8%)	6.64	202 (10%)	6.52	189 (12%)
Ֆրանսերեն	5.29	17 (2%)	5.00	24 (1%)	5.28	25 (1%)	5.20	20 (1%)
Կենսաբանություն	5.82	80 (9%)	5.38	182 (10%)	5.55	194 (10%)	5.67	151 (9%)
Ֆիզիկա	4.99	69 (8%)	5.03	156 (9%)	5.14	175 (9%)	5.24	144 (9%)
Քիմիա	6.14	40 (5%)	6.12	81 (5%)	5.94	92 (4%)	6.08	70 (4%)
Աշխարհագրություն	5.27	61 (7%)	5.22	152 (9%)	5.24	164 (8%)	5.23	124 (8%)
Ընդամենը		100%		100%		100%		100%

Ի դեպ, մինչև 10 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչներին մեթոդական օգնություն է հետևյալ միտումը. սովորողների առաջադիմության անգլերենի միջին միավորները նշանակալիորեն բարձր է հայոց լեզվի, հանրահաշվի, հայոց պատմության, ֆրանսերենի, կենսաբանության, ֆիզիկայի և աշխարհագրության միջին միավորներից, իսկ 21-30 տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների խմբում՝ անգլերենի միջին միավորը նշանակալիորեն բարձր է հայոց լեզվի, հանրահաշվի, հայոց պատմության, ֆրանսերենի, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի և աշխարհագրության միջին միավորներից (տե՛ս աղյուսակ 2):

6.2 Ատեստացիայի մասնակցությունը

Ուսուցիչների ատեստացիան համեմատաբար նոր երևույթ է Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում: Այն ներդրվել է ՀՀ հանրակրթության մասին օրենքով և 2010 թվականի ապրիլից դարձել է պարտադիր: Յուրաքանչյուր ուսուցիչ ենթակա է ատեստավորման յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ [3, հոդված 26]: Ամեն տարի հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչների մեկ հինգերորդը հաստատության տնօրենի առաջարկությամբ մասնակցում է ատեստացիայի: Ատեստացիայից առնվազն վեց ամիս առաջ ուսուցիչները մասնակցում են վերապատրաստման դասընթացների, որի համար վճարում է դպրոցը տվյալ ուսումնական հաստատության բյուջեից հատկացվող միջոցներից: Այսպիսով, ուսուցիչները ենթակա են մասնակցելու շարունակական վերապատրաստումների և ատեստացիայի գործընթացընպաստում է նրանց մասնագիտական որակավորման բարձրացմանը, ինչու չէ, նաև ինքնագարգացմանը: Ուսուցիչների հարցման ժամանակ պարզվել է, որ նրանց 87%-ը արդեն մասնակցել է ատեստացիայի գործընթացի, 10%-ը՝ դեռևս ոչ, իսկ 3%-ը չի պատասխանել այս հարցին:



Ատեստացիա անցած ուսուցիչների 70%-ը նաև նշել է, թե երբ է մասնակցել ատեստացիայի, իսկ 30%-ը չի նշել որևէ տարեթիվ կամ սխալ ժամանակահատված է նշել:

Հետաքրքիր է դիտարկել այս երկու խումբ ուսուցիչների սովորողների առաջադիմության ցուցանիշները:


Դիտարկելով ատեստացիայի արդեն մասնակցած (5.69) և դեռևս չմասնակցած (5.83) ուսուցիչների սովորողների առաջադիմության հանրակրթական ցուցանիշները, նկատում ենք, որ, հակառակ մեր ակնկալիքների, դեռևս չատեստավորված ուսուցիչների աշակերտները մի փոքր ավելի բարձր միջին գնահատականներ են ստացել, սակայն այդ տարբերությունը էական չէ, ուստի կարող ենք ասել, որ դեռևս սովորողների առաջադիմության վրա ուսուցչի ատեստացիան դրականորեն չի անդրադառնում:

6.3 Մանկավարժության որակավորման աստիճանները

Ըստ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգի» ուսուցիչները ենթակա են ատեստավորման 5 տարին մեկ անգամ: Իրենց ցանկությամբ նրանք կարող են դիմել մանկավարժության որակավորման աստիճաններ (տարակարգեր) ստանալու համար, որը ենթադրում է նաև աշխատավարձի բարձրացում. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ տարակարգերի համար համապատասխանաբար ուսուցչի դրույքաչափի 10, 20, 30 և 50 տոկոսի չափով հավելավճար ուսումնական հաստատության միջոցներից [4]:

<<Ի՞նչ տարակարգ ունեք>> հարցին հարցված ուսուցիչների 13%-ը պատասխանել է 1-ին, 2%-ը՝ 2-րդ, 4%-ը՝ դիմել է, բայց դեռ չի ստացել, 64%-ը չի դիմել և 17%-ը չի պատասխանել հարցաթերթի այդ հարցին:

Դիագրամ 9



Ինչպես նկատում ենք, ուսումնասիրված ուսուցիչների ամենամեծ մասը դեռևս չի դիմել ուսուցչի որակավորման աստիճանի ստանալու համար:

Դիտարկենք նաև, թե որ առարկաներն են դասավանդում արդեն տարակարգ ունեցող համեմատաբար թվով ավելի շատ ուսուցիչները:

Ֆիզիկայի ուսուցիչների 35%-ը նշում է, որ ունի 1-ին տարակարգ, 3%-ը՝ 2-րդ տարակարգ, 3%-ը դիմել է, բայց դեռ չի ստացել և 52%-ը դեռ չի դիմել: 7%-ը չի պատասխանել այս հարցին:

Կենսաբանության ուսուցիչների 17%-ը ունի 1-ին տարակարգ, 8%-ը՝ դիմել է, բայց դեռ չի ստացել, 66%-ը չի դիմել, նրանցից 9%-ը չի պատասխանել այս հարցին:

Աշխարհագրության ուսուցիչների 15%-ը ունի 1-ին տարակարգ, 69%-ը՝ դեռ չի դիմել, մնացած 16%-ը չի պատասխանել այդ հարցին:

Հայոց լեզու և հայ գրականություն դասավանդողների 11%-ը նշել է, որ ունի 1-ին տարակարգ, 3%-ը՝ 2-րդ տարակարգ, 4%-ը դիմել է, բայց դեռ չի ստացել, 66%-ը չի դիմել: Մնացած 16%-ը չի պատասխանել այս հարցին:

Մաթեմատիկայի ուսուցիչների 10%-ը ունի 1-ին տարակարգ, 1%-ը՝ 2-րդ տարակարգ, 3%-ը դիմել է, բայց դեռ չի ստացել, 68%-ը դեռ չի դիմել, 18%-ը չի պատասխանել հարցաթերթի այս հարցին:

Անգլերենի ուսուցիչների 10%-ը ունի 1-ին տարակարգ, 5%-ը դիմել է, բայց դեռ չի ստացել, 60%-ը դեռ չի դիմել: Մնացած 25%-ը չի պատասխանել այս հարցին:

Ռուսաց լեզվի ուսուցիչների 9%-ը ունի 1-ին տարակարգ, 66%-ը դեռ չի դիմել: Մնացած 25%-ը չի պատասխանել այս հարցին:

Հայոց պատմության ուսուցիչների 9%-ը ունի 1-ին տարակարգ, 7%-ը դիմել է, բայց դեռ չի ստացել, 67%-ը դեռ չի դիմել: Մնացած 17%-ը չի պատասխանել այս հարցին:

Քիմիայի ուսուցիչների 8%-ը ունի 1-ին տարակարգ, 4%-ը՝ 2-րդ տարակարգ, 4%-ը՝ դիմել է, բայց դեռ չի ստացել և 52%-ը դեռ չի դիմել: 32%-ը չի պատասխանել այս հարցին:

Ինչպես նկատում ենք, հանրակրթական առարկաներ դասավանդող ուսուցիչներից ֆիզիկա, կենսաբանություն և աշխարհագրություն առարկաներ դասավանդող առավել շատ ուսուցիչներն են ստացել ուսուցչի մանկավարժական որակավորման 1-ին տարակարգ:

Ուսուցչի մանկավարժական որակավորման տարակարգեր արդեն ունի ուսումնասիրված ուսուցիչների 15%-ը: Եվ ինչպես նկատում ենք՝ առարկայական ուսուցիչների 52-69%-ը թերևս չի կարևորում ուսուցիչների մասնագիտական որակավորման աստիճաններ ձեռք բերելը:

Հարկավոր է նշել, որ ուսումնասիրված ուսուցիչներից և ոչ մեկը դեռևս չունի 3-րդ և 4-րդ մասնագիտական կրթության որակավորման աստիճաններ(տարակարգեր): Ըստ օրենքի, 1-ին տարակարգ ունեցող ուսուցիչը տարակարգ ստանալուց հետո առնվազն երկու տարի անց կարող է դիմել երկրորդ տարակարգ ստանալու համար, 2-րդ տարակարգ ունեցողը այն ստանալուց հետո առնվազն երեք տարի անց կարող է դիմել 3-րդ տարակարգ ստանալու համար և արդեն 3-րդ տարակարգ ունեցողը այն ստանալուց հետո առնվազն չորս տարի անց կարող է դիմել 4-րդ տարակարգ ստանալու համար [5]:

Սա աստիճանական գործընթաց է, որը ներդրվել է 2009 թվականին Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին օրենքի>> ընդունմամբ և սկսվել է իրականացվել 2012թվականից: Ուստի 2021 թվականին մեր երկրում հանրակրթության համակարգում կլինեն ուսուցիչներ, որոնք կունենան ամենաբարձր՝ 4-րդ տարակարգ:

Ա. Ուսուցիչների մանկավարժական ստաժը և նրանց տարակարգերը

Ուսումնասիրվել է նաև ուսուցիչների մանկավարժական ստաժի և նրանց մասնագիտական որակավորման տարակարգերի միջև եղած կապը:

Աղյուսակ 3

Ուսուցիչների մանկավարժական ստաժը և նրանց տարակարգերը				
Տարակարգեր	Ենթակրթական ստաժ	Ենթակրթական ստաժ	Գլխավոր, բայց դեռ չեն ստացել	Չեն դիմել
Մինչև 10 տարի	2%	16.70%	19%	16%
11-20 տարի	27.50%	33.30%	6%	33%
21-30 տարի	41%	50%	50%	26%
31 և ավելի տարի	29.50%	0%	25%	25%
Ընդամենը	100%	100.00%	100%	100%

Ինչպես նկատում ենք աղյուսակ 3-ում 21-30 տարի մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչները կազմում են 1-ին և 2-րդ տարակարգ ունեցող ուսուցիչների մեծաթիվ խումբը, ինչպես նաև, որ 21-30 տարի աշխատանքային ստաժ ունեցողների 50%-ը նշել է, որ դիմել է, բայց դեռ չի ստացել տարակարգ: Այսինքն 21-30 տարվա մանկավարժական ստաժ ունեցողները ավելի մեծ ցանկություն ունեն տարակարգ ունենալու:

Բ. Ուսուցիչների դասավանդած հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը և նրանց տարակարգերը

Այս ուսումնասիրության մեջ ընդգրկված 10-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների 69%-ը դասավանդում է ավագ դպրոցներում, 12%-ը՝ միջնակարգ դպրոցներում, 14%-ը՝ վարժարաններում և 5%-ը՝ հանրակրթական ոչ պետական ուսումնական հաստատություններում:

Դիտարկվել է ուսուցիչների դասավանդած հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը և նրանց որակավորման տարակարգերը (տե՛ս աղյուսակ 4):

Ինչպես նկատում ենք, թեպետ ոչ պետական ուսումնական հաստատությունների ուսուցիչները թվով ավելի քիչ են, սակայն 1-ին տարակարգ ունեցողների շրջանում ամենամեծ խումբը նրանք են կազմում:

Ուսուցիչների դասավանդած հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը և նրանց տարակարգերը					
Տարակարգեր	Դպրոցի տիպ	Ավագ դպրոց	Միջնակարգ դպրոց	Վարժարան	Ոչ պետական ուս. հաստատություն
1-ին տարակարգ		14%	15%	16%	17%
2-րդ տարակարգ		0%	5%	8%	0%
դիմել են, բայց դեռ չեն ստացել		6%	0%	2%	0%
չեն դիմել		63%	72%	62%	61%
չեն պատասխանել		17%	8%	12%	22%
ընդամենը		100%	100%	100%	100%

Երկրորդ տարակարգ ունեցողների շրջանում համեմատաբար մեծ թիվ են կազմում վարժարանների ուսուցիչները, տարակարգերի համար դեռևս չդիմած ուսուցիչների ամենամեծ խումբը միջնակարգ դպրոցի ուսուցիչներն են:

Գ. Տարբեր սեռերի ուսուցիչների տարակարգերը


Երբ դիտարկում ենք դասավանդող ուսուցիչներին ըստ սեռերի, ապա կին ուսուցիչների (կազմում են ուսումնասիրված ուսուցիչների 90%-ը) 14%-ը, և տղամարդ ուսուցիչների (կազմում են ուսումնասիրված ուսուցիչների 10%-ը) 2%-ը արդեն ունեն տարակարգեր: Երբ դիտարկում ենք տղամարդ ուսուցիչների բազմությունը նրանցից 22%-ը ունի տարակարգ, ի տարբերություն կանանց բազմության՝ որոնցից միայն 16%-ը ունի տարակարգ: Այսինքն, թեպետ տղամարդիկ կազմում են ուսումնասիրված ուսուցիչների փոքր խումբը, սակայն նկատվում է, որ նրանց շրջանում տարակարգեր ունեցողներն ավելի շատ են:

Դ. Ուսուցիչների տարակարգերը և աշակերտների հանրակրթական ցուցանիշները

Դիտարկենք վերոնշյալ ուսուցիչների 10-րդ դասարանում սովորողների հանրակրթական ցուցանիշները: 1-ին տարակարգ ունեցող ուսուցիչների աշակերտների հանրակրթական ցուցանիշի միջին միավորը 5.66 է, 2-րդ տարակարգ ունեցողների աշակերտների միջին միավորը՝ 6.22, այն ուսուցիչները, որոնք դիմել են, բայց դեռ չեն ստացել տարակարգ ունեն աշակերտներ, որոնց հանրակրթական միջին միավորը 5.31 է, և տարակարգե-

րի համար դեռևս չդիմաձև ուսուցիչների աշակերտների միջին միավորը 5.70 է:

Դիագրամ 10




Թեև վերոնշյալ ուսուցիչների խմբերում առկա է հանրակրթական ցուցանիշների տարբերություն 2-րդ տարակարգ ունեցող ուսուցիչների մոտ աշակերտների հանրակրթական ցուցանիշը ավելի բարձր է մնացած բոլոր ենթախմբերի ուսուցիչների աշակերտների նկատմամբ, սակայն տարակարգեր ունեցողների փոքրաթիվ լինելու պատճառով սովորողների ցուցանիշների միջին միավորների միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չեն: Ուստի այս ուսումնասիրության շրջանում չենք կարող պնդել, որ ուսուցչի մոտ տարակարգի առկայությունը ինչ-որ կերպ ազդում է իրենց աշակերտների հանրակրթական ցուցանիշների վրա:

7. Արտադասարանային պարապմունքները

<<Ինչպե՞ս եք գնահատում արտադասարանային պարապմունքների արդյունավետությունը>> հարցին ուսուցիչների 84%-ը նշել է *<<Արդյունավետ են>>*, 15%-ը՝ *<<Ոչ այդքան արդյունավետ են>>*, 1%-ը՝ *<<Արդյունավետ չեն>>* պատասխանները:

Դիագրամ 11



Այս ուսուցիչների աշակերտների 39%-ը նշում է, որ <<Մասնակցում է որևէ խմբակի>>: Այս աշակերտների հանրակրթական միջին միավորը 5.56 է, մինչդեռ 57%-ը չի մասնակցում որևէ խմբակի՝ նրանց միջին միավորը 5.31 է: Աշակերտների 4%-ը չի պատասխանել այս հարցին:

Ուսուցիչների մեծամասնությունը (84%) կարծում է, որ արտադասարանային պարապմունքները արդյունավետ են: Դիտարկենք այս ուսուցիչների աշակերտների բազմությունը: Որևէ խմբակի մասնակցող սովորողների առաջադիմության միջին միավորը (6.17) ավելի բարձր է, քան չմասնակցող աշակերտների միջին միավորը (5.58): Այն սովորողները, որոնք մասնակցում են որևէ խմբակի նշում են նաև, թե ինչ խմբակի են մասնակցում: Մեծ թվով աշակերտներ հաճախում են օտար լեզուների պարապմունքների, գեղագիտական զարգացման (երգի, պարի, հռետորության և ասմունքի) և սպորտային խմբակներ, ինչպես նաև նորարարական <<Թումո>> ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, որտեղ 12-18 տարեկան աշակերտները սովորում են համակարգչային տարբեր ծրագրերի գործածություն և ձեռք բերում ռոբոտաշինության, գրաֆիկական դիզայնի և այլ պրակտիկ գիտելիքներ:

8. Ծնողների մասնակցությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացին

<<Ինչպե՞ս եք գնահատում ծնողների մասնակցությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացին>> հարցին ուսուցիչների 36%-ը նշել է, որ ակտիվ մասնակցում են, 31%-ը՝ պրակտիկորեն չեն մասնակցում, միայն ծնողական ժողովներին են մասնակցում, 33%-ը՝ քչերն են մասնակցում: Շատ հաճախ բարձր դասարաններում ծնողները հակված են ավելի պասիվ մասնակցելու ուսումնադաստիարակչական գործընթա-


ցին, որը իր հերթին չի նպաստում սովորողների ավելի բարձր առաջադիմության ցուցաբերելուն:

Դիտարկենք ըստ վերոնշյալ ուսուցիչների կարծիքների առանձնացված երեք խումբ ծնողների երեխաների առաջադիմության համեմատական ցուցանիշները: Առկա է շատ չնչին տարբերություն սովորողների առաջադիմության միջին միավորներում ակտիվ մասնակցող (5.84), միայն ծնողական ժողովներին այցելող՝ (5.79) և քիչ մասնակցող՝ (5.56) ծնողների երեխաներից ցուցանիշներում: Թերևս նման երեք խմբերի տարանջատումը չի վերաբերում դպրոց քիչ այցելող, բայց տանը հետևողականորեն իր երեխայի առաջադիմությամբ հետաքրքրվող ծնողներին:

9. Համակարգչային տեղեկատվական միջոցների կիրառություն

Ուսումնասիրելու համար, թե որքանով են համակարգչային տեղեկատվական միջոցները (համակարգիչ, համացանց, պրոյեկտոր) նպաստում ուսումնական գործընթացների արդյունավետ կազմակերպմանը դիտարկվել են ուսուցիչների տարբեր կարծիքներ: Ուսուցիչների 46%-ը պատասխանել է, որ ակտիվ օգտագործում են դիդակտիկ նյութերի պատրաստման և դասի ընթացքում, 50%-ը նշել է, որ ժամանակ առ ժամանակ են օգտագործում, 1%-ը պատասխանել է, որ կուզենային ակտիվ օգտագործել, բայց հստակ չեն պատկերացնում՝ ինչպես, 2%-ը նշել է, որ դպրոցում բացակայում են համապատասխան միջոցները և 1%-ը նշել, որ թերհավատորեն են մոտենում ուսումնական գործընթացում դրանց կիրառման արդյունավետությանը, այդ պատճառով չեն օգտագործում:


Դիագրամ 12



Համադրենք երկու մեծ խումբ կազմող ուսուցիչների (դասի ընթացքում և դիդակտիկ նյութերի պատրաստման համար համակարգչից ակտիվ օգտվողների (5.71) և ժամանակ առ ժամանակ օգտվողների (5.74)) սովորողների առաջադիմության ցուցանիշները: Ինչպես նկատում ենք, էական տարբերություն չկա այս երկու խումբ կազմող ուսուցիչների սովորողների առաջադիմությունների միջև: Իսկ դրանք ակտիվ օգտագործել ցանկացող, բայց ինչպես հստակ չպատկերացնող ուսուցիչների սովորողների առաջադիմության միջին միավորը 6.23 է: Այն ուսուցիչներ, որոնք նշել են, որ դպրոցում բացակայում են համապատասխան միջոցները ունեն աշակերտներ, որոնք առաջադիմության միջին միավորը 5.21 է, իսկ այն ուսուցիչները, որոնք նշել են, որ թերահավատորեն են մոտենում ուսումնական գործընթացում դրանց կիրառման արդյունավետությանը, այդ պատճառով չեն օգտագործում աշակերտներ, որոնց միջին միավորը 9.78 է: Այս վերջին երեք կարծիքներն արտահայտող ուսուցիչների աշակերտների առաջադիմությունները չենք կարող համեմատել մյուս երկու կարծիք արտահայտող մեծաթիվ ուսուցիչների աշակերտների առաջադիմության հետ, քանի որ այդ ուսուցիչների թիվը փոքր է:


Ուսուցիչների 50%-ը համակարգչային միջոցները ժամանակ առ ժամանակ են օգտագործում: Այս ուսուցիչների աշակերտները նշում են, որ ուսման գործընթացում, բացի ինֆորմատիկայի դասերից, համակարգչային տեղեկատվական միջոցներից շատ հաճախ (16%-ը), հաճախ(35%-ը), հազվադեպ (34%-ը)և երբեք (9%-ը) են օգտվում: Սովորողների 5%-ը չի պատասխանել այդ հարցին:

Դիագրամ 13



Ե՛վ հաճախ (6.04), և՛ հազվադեպ (6.13) համակարգչային տեղեկատվական միջոցներից օգտվողների միջին միավորները նշանակալիորեն բարձր են շատ հաճախ (5.06) օգտվողների կամ երբեք չօգտվողների (5.02) առաջադիմության միջին միավորներից (տե՛ս դիագրամ 14): Հարցաթերթի տվյալ հարցին չպատասխանած սովորողների միջին միավորը ամենացածրն է (4.28):

Դիագրամ 14



Հարկավոր է խորհուրդ տալ ծնողներին այս հարցում հետևողական լինել, քանի որ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ օգտվող սովորողների հանրակրթական ցուցանիշը մոտ 1 միավորով բարձր է շատ հաճախ օգտվողների ցուցանիշից: Ուղղորդեն, որ սովորողները շատ հաճախ օգտվելիս ճիշտ նպատակով կիրառեն համակարգիչը, համացանցը և այլ տեղեկատվական միջոցները: Շատ հաճախ օգտվող սովորողների 52%-ը հումանիտար, 20%-ը տնտեսագիտական, 14%-ը բնագիտական և 14%-ը ֆիզմաթ հոսքերից են:

Ինչ խոսք, երբեք համակարգչային տեղեկատվական միջոցներից չօգտվողների առաջադիմությունը ցածր է հաճախ և հազվադեպ օգտվողների համեմատությամբ: <<Երբեք>> պատասխան արտահայտած սովորողների 68%-ը 7 ավագ դպրոցների սաներ են, որոնցից 6-ը խոշոր քաղաքների, իսկ մեկը՝ միջին մեծության քաղաքի դպրոցներ են, իսկ սովորողների 32%-ը խոշոր քաղաքում գտնվող վարժարանի սաներ են: Երբեք համակարգչային տեղեկատվական միջոցներից ուսումնական գործընթացում չօգտվողների 47%-ը հումանիտար, 32%-ը ֆիզմաթ, 13%-ը տնտեսագիտական, 8%-ը բնագիտական հոսքերում սովորողներ են:

Եզրակացություն

Հիմնվելով ուսուցիչների հարցման արդյունքների վրա՝ ուսումնասիրվել է 10-րդ դասարանում սովորողների թվի, դասավանդվող դասագրքերի և օժանդակ նյութերի, հոսքային ուսուցման պարագայում համապատասխան առարկայի ուսումնասիրությանը հատկացվող շաբաթական ժամերի, սովորողների արտադասարանային պարավունքների մասնակցության, ուսումնական գործընթացներում ուսուցչի կողմից համակարգչային տեղեկատվական միջոցների կիրառության, ինչպես նաև ուսումնական գործընթացներում ծնողների մասնակցության տարբեր դրսևորումների ազդեցությունները 10-րդ դասարաններում սովորողների հանրակրթական ցուցանիշների վրա:

Աշակերտների թիվը դասարաններում

Ուսումնասիրվել է տարբեր տիպի դպրոցներում միևնույն հոսքերի 10-րդ դասարաններում աշակերտների խտությունը: Ոչ պետական ուսումնական հաստատություններում սովորողների թիվը միևնույն հոսքերում շատ ավելի փոքր է (13 աշակերտ) միջին դպրոցների (17 աշակերտ), ավագ դպրոցների (18 աշակերտ) և վարժարանների (22 աշակերտ) միևնույն հոսքերում սովորողների թվի համեմատությամբ, որը իր հերթին նպաստում է սովորողների ավելի բարձր հանրակրթական ցուցանիշներ ցուցաբերելուն:

Հանրակրթական առարկաների ուսումնասիրությանը տրամադրվող շաբաթական դասաժամերը

Ըստ ուսուցիչների հարցման պատասխանների՝ դիտարկվել է հանրակրթական առարկաներին տրամադրվող շաբաթական դասաժամերի բաշխումը բոլոր հոսքերի և դպրոցների դեպքում: Միևնույն առարկայի ուսումնասիրությանը տարբեր տիպի ուսումնական հաստատություններում հատկացվում է տարբեր քանակության շաբաթական դասաժամեր, ինչը իր հերթին նպաստում է սովորողների տարբեր հանրակրթական ցուցանիշների ձևավորմանը:

- Հոսքային ուսուցման պարագայում դիտարկվել է միևնույն հոսքերում սովորողների հանրակրթական ցուցանիշները՝ կախված ուսումնական հաստատության տիպից: Բոլոր հոսքերում ոչ պետական ուսումնական հաստատություններում սովորող 10-րդ դասարանի աշակերտների հանրակրթական ցուցանիշը ամենաբարձրն

է ավագ դպրոցներում, միջին դպրոցներում և վարժարաններում սովորողների ցուցանիշների համեմատությամբ՝ բացառությամբ ֆիզմաթ հոսքի:

- Վարժարանների ֆիզմաթ հոսքերում են ամրագրվել ամենաբարձր հանրակրթական ցուցանիշները ավագ և միջնակարգ դպրոցների-ֆիզմաթ հոսքում սովորողների նկատմամբ:
- Իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն սովորողների հանրակրթական ցուցանիշների վրա դասարաններում առկա աշակերտների թվի և հոսքային ուսուցման եղանակի ազդեցությունները գնահատելու համար: Պարզվել է, որ այդ ազդեցությունները դրականորեն են անդրադառնում սովորողների հանրակրթական ցուցանիշների վրա:
 - ◆ Քանի որ աշակերտների հանրակրթական ցուցանիշները ձևավորվել են նրանց կողմից երկու նախընտրելի առարկաներից արտաքին ընթացիկ գնահատմամբ թեստավորվելիս, հոսքային ուսուցման եղանակի պարագայում հոսքերում սովորողների ցուցանիշների վրա բոլոր հոսքերի դեպքում ազդեցությունները դրական են:
 - ◆ Դասակարգվել են դիտարկված գործոնների ազդեցությունները: Առավելագույն դրական ազդեցություն ունի ֆիզմաթ հոսքում սովորելը, մյուս բոլոր հոսքերում սովորելը նույնպես դրականորեն է անդրադառնում սովորողների ցուցանիշների վրա: Միջին դրական ազդեցություն ունի 1-10 և 21-30 աշակերտ ունեցող դասարաններում սովորելը և որոշակի թույլ դրական ազդեցություն ունի 11-15 աշակերտ ունեցող դասարաններում սովորելը:

Ուսուցիչների մանկավարժական ստաժը

- Դիտարկվել է ուսումնասիրության մեջ ներառված ուսուցիչների մանկավարժական ստաժի ազդեցությունը նրանց աշակերտների հանրակրթական ցուցանիշների վրա: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էական տարբերություններ չկան տարբեր մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների աշակերտների հանրակրթական ցուցանիշներում:
- Սակայն մինչև 10 տարվա մանկավարժական ստաժ ունեցող բոլոր ուսուցիչների շրջանում նկատվում է հետևյալ միտումը. սովորողների միջին միավորները անգլերենից նշանակալիորեն բարձր է հայոց լեզվի, հանրահաշվի, հայոց պատմության, կենսաբանությ-

յան, ֆիզիկային աշխարհագրության միջին միավորներից, ինչպես նաև 21-30 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների աշակերտների անգլերենի միջին միավորը նշանակալի բարձր է հայոց լեզվի, հանրահաշվի, հայոց պատմության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի և աշխարհագրության միջին միավորներից:

Ատեստացիային ուսուցիչների մասնակցությունը

Ուսուցիչների ատեստացիան, որը միտված է բարձրացնելու ուսուցիչների մասնագիտական որակները, պարտադիր գործընթաց է յուրաքանչյուր ուսուցչի համար: Ըստ ՀՀ հանրակրթության մասին օրենքի, ուսուցիչները ենթակա են ատեստավորման հինգ տարին մեկ անգամ: Սակայն այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ատեստացիայի գործընթացը դեռևս չի անդրադառնում սովորողների առաջադիմության վրա:

Ուսուցիչների մասնագիտական որակավորման տարակարգեր

- Մասնագիտական որակավորման տարակարգերի ստանալու հարցում ավելի շատ շահագրգռված են 21-30 տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչները, քանի որ մեծ թվով ուսուցիչներ, որոնք ունեն 21-30 տարվա աշխատանքային ստաժ, ունեն 1-ին և 2-րդ տարակարգեր, և այս խմբի մեծաթիվ ներկայացուցիչներն են արդեն դիմել տարակարգ ստանալու համար, բայց դեռ չեն ստացել: Տարակարգ ստանալու համար չդիմած ուսուցիչների մեծ մասը կազմում են 11-20 տարվա աշխատանքային ստաժ ունեցողները:
- Հանրակրթական առարկաներ դասավանդող ուսուցիչների շրջանում ֆիզիկա, կենսաբանություն և աշխարհագրություն դասավանդող ուսուցիչներից ավելի մեծ թվով ուսուցիչներ են արդեն ստացել ուսուցչի մանկավարժական որակավորման 1-ին տարակարգ:
- Տարակարգ ունեցող ուսուցիչները թեպետ փոքրաթիվ են, սակայն նկատելի է, որ 1-ին տարակարգ ունեն ոչ պետական ուսումնական հաստատությունների, իսկ 2-րդ տարակարգ՝ վարժարանների ավելի մեծ թվով ուսուցիչներ: Տարակարգի համար չդիմած ուսուցիչների ամենամեծ խումբը կազմում են միջնակարգ դպրոցների ուսուցիչները:
- Դիտարկելով տարբեր տարակարգեր ունեցող և դեռևս չունեցող ուսուցիչների աշակերտների հանրակրթական ցուցանիշները՝

նկատում ենք, որ 2-րդ տարակարգ ունեցողների աշակերտների հանրակրթական ցուցանիշը որոշ չափով բարձր է մյուս ուսուցիչների աշակերտների ցուցանիշներից, սակայն տարակարգ ունեցողների փոքրաթիվ լինելու պատճառով այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, ուստի ուսուցչի տարակարգ ունենալը չի առնչվում նրանց սովորողների հանրակրթական ավելի բարձր ցուցանիշների դրսևորման հետ:

- Տղամարդ ուսուցիչները կազմում են ուսումնասիրված ուսուցիչների ընդամենը 10 տոկոսը: Նրանից 22 տոկոսն արդեն ունի տարակարգ, ի տարբերություն կանանց (ուսուցիչների 90 տոկոսը), որոնց միայն 16 տոկոսը ունի տարակարգ: Այսինքն, ուսուցչի որակավորման աստիճանների՝ տարակարգերի ձեռքբերմամբ նրանց որակավորման ճանաչման, հեղինակության հարցերը և որպես խրախուսում տվյալ տարակարգին համապատասխան հավելվածար ստանալը ավելի շատ տղամարդ ուսուցիչներին է հետաքրքրում:
- Հարցված ուսուցիչների մեծ մասը թերևս չի կարևորում ուսուցիչների մասնագիտական որակավորման աստիճաններ ձեռք բերելը, որը, ցավոք, նաև մասնագիտական աճի, շարունակական կրթության և ճանաչման նկատմամբ պասիվ վերաբերմունքի դրսևորում է:

Ուսուցիչների կողմից ուսումնական գործընթացում համակարգչային տեղեկատվական միջոցների կիրառությունը

- Ուսուցիչների մեծ մասը նշում է, որ իրենք ժամանակ առ ժամանակ են օգտվում համակարգչային տեղեկատվական միջոցներից (համակարգիչ, համացանց, պրոյեկտոր): Ենթադրում ենք, որ ժամանակ առ ժամանակ համակարգչային միջոցներից օգտվող ուսուցիչները ձևակերպում են աշակերտների համար այնպիսի հանձնարարություններ, որ նրանք ևս իրենց հերթին օգտվեն այդ միջոցներից: Մեծ խմբերը կազմում են այն ուսուցիչների աշակերտները, որոնք նշում են, որ ուսումնական գործընթացում հաճախ կամ հազվադեպ են օգտվում համակարգչային տեղեկատվական միջոցներից:
- Այն սովորողները, որոնք հաճախ կամ հազվադեպ են օգտվում համակարգչային տեղեկատվական միջոցներից, ցուցաբերում են նշանակալիորեն բարձր հանրակրթական ցուցանիշներ շատ հաճախ և երբեք օգտվողների ցուցանիշների համեմատությամբ:

- Շատ հաճախ համակարգչային տեղեկատվական միջոցներից օգտվող սովորողները իրենց հանրակրթական ցուցանիշով զիջում են հաճախ և նույնիսկ հազվադեպ օգտվողներին, ուստի հարկավոր է ծնողների և ուսուցիչների ուշադրությունը սևեռել շատ հաճախ օգտվելու բացասական ազդեցության վրա:

Արտադասարանային պարապմունքներ

Ուսուցիչների մեծամասնությունը կարծում է, որ աշակերտների արտադասարանային պարապմունքները արդյունավետ են: Դիտարկելով այդ ուսուցիչների աշակերտների բազմությունը, նկատում ենք, որ ավելի բարձր են այն սովորողների հանրակրթական ցուցանիշները, որոնք մասնակցում են որևէ խմբակի՝ խմբակներ չհաճախողների ցուցանիշների համեմատությամբ:

Ուսուցիչների համագործակցությունը ծնողների հետ

Ուսուցիչների պատասխաններում քանակապես գերակա չէ դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում ծնողի մասնակցության որևէ դրսևտրման վերաբերյալ կարծիքը, թեև ուսուցիչների 36 տոկոսը նշում է, որ ծնողները ակտիվ մասնակցում են, 31 տոկոսը նշում է, որ միայն ծնողական ժողովներին են մասնակցում, իսկ 33 տոկոսը նշում է, որ ծնողներից քչերն են մասնակցում: Այս երեք կարծիքներն արտահայտող ուսուցիչների աշակերտների հանրակրթական ցուցանիշները միմյանցից էապես չեն տարբերվում:

Օգտագործված գրականություն

1. «Էկոնոմետրիկա. 1-ին մակարդակ՝ SPSS փաթեթի կիրառմամբ», Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան, <http://www.crrc.am/546-Դասընթաց-«Էկոնոմետրիկա.-1-ին-մակարդակ՝-SPSS-փաթեթի-կիրառմամբ»?lang=hy>
2. Արկղանման դիագրամ, <http://www.physics.csbsju.edu/stats/box2.html>
3. ՀՀ Հանրակրթության մասին օրենքը, 2009, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3674&lang=arm>, հոդված 26, 31:
4. ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745 - Ն որոշման Հավելված N 4, «<Ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու կարգ>», <http://edu.am/index.php/am/documents/view/903>, էջ 15:
5. ԿԳ նախարարի 2013 թվականի օգոստոսի 15-ի N 1031-Ն հրաման, «<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները, որակավորման

տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի 1321 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>>, կետ 1, 5-րդ ենթակետ:

6. 2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում իրականացված արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ աշակերտների հարցման արդյունքները, 2017, http://www.atc.am/files/verlucutyunner/2016/2016_noyemb-dektemb%20ashakert%20anketa.pdf
7. 2016 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացրած արտաքին ընթացիկ գնահատման ուսումնասիրությունների ուսուցիչների և աշակերտների ԳԹԿ բազաներ:

Գոհար ՉԱԼՈՒՄՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
առաջատար մասնագետ

2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում իրականացված արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ աշակերտների հարցման արդյունքները

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում ընթացիկ գնահատման ժամանակ իրականացված աշակերտների հարցմանը մասնակցել են 3268 10-րդ դասարանցիներ, որոնք սովորում են ՀՀ հանրակրթական 60 ուսումնական հաստատություններում՝ 34 ավագ դպրոցում, 17 միջնակարգ դպրոցում, 5 վարժարանում, 4 ոչ պետական ուսումնական հաստատությունում: Աշակերտների հարցման նպատակն է եղել պարզել 10-րդ դասարանում Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից իրականացվող արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ ուսումնասիրվող սովորողների առաջադիմության մակարդակը հանրակրթական բոլոր առարկաներից՝ ամրագրելով սովորողների մուտքը հանրակրթության երրորդ աստիճան՝ ավագ դասարաններ: Ուսումնասիրության ընթացքում սովորողները լրացրել են հարցաթերթ: Աշակերտի հարցաթերթի վերլուծությունը ուսումնասիրում է որոշ գործոններ և նրանց բուհերի ընդունելության միասնական քննություններին մասնակցելու հարցում կողմնորոշվածության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա:

Այդ նպատակով կիրառվել է ցրվածքային վերլուծության մեթոդը (ANOVA): Կիրառվել է IBM SPSS, MS Excel, MS Access, IATA, MS SQL ծրագրային գործիքակազմը:

1.1 Ընդհանուր վիճակագրական տվյալներ

Սույն ուսումնասիրությունը վերաբերում է այն 10-րդ դասարանցիներին, որոնք մասնակցել են և՛ արտաքին գնահատմանը, և՛ լրացրել են աշակերտի հարցաթերթը: Աղյուսակ 1-ը ներկայացնում է սովորողների միջին գնահատականները, իսկ գունավորումամբ տարանջատված են պարտադիր (հայոց լեզու, հանրահաշիվ և հայոց պատմություն), օտար լեզուներ (ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) և բնագիտական (կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն) առարկաները:

Աղյուսակ 1

10-րդ դասարանում սովորողների առաջադիմության միջին միավորները ուսումնասիրվող հանրակրթական առարկաներից			
Առարկան	Միջին միավոր	Ստանդարտ շեղում (ստ. սխալ)	Մասնակիցների թիվը (%)
Հայոց լեզու	5.02	1.81 (0.03)	2289 (55%)
Հանրահաշիվ	5.23	1.76 (0.05)	1064 (32%)
Հայոց պատմություն	5.63	1.67 (0.06)	756 (37%)
Ռուսաց լեզու	5.90	1.49 (0.07)	375 (28%)
Անգլերեն	6.40	2.24 (0.1)	494 (32%)
Գերմաներեն	9	-	1 (0,03%)
Ֆրանսերեն	5.71	0.75 (0.28)	7 (0,2%)
Կենսաբանություն	5.46	1.91 (0.08)	480 (16%)
Ֆիզիկա	5.68	2.01(0.09)	436 (19%)
Քիմիա	6.07	1.97 (0.22)	79 (5%)
Աշխարհագրություն	5.27	1.71 (0.09)	325 (19%)

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած յուրաքանչյուր աշակերտ նախօրոք իր ցանկությամբ հայտագրվել է թեստավորման մասնակցելու համար՝ ընտրելով հանրակրթական երկու առարկա: Ինչպես նկատում ենք, աղյուսակ 1-ում սովորողները ամենաբարձր միջին միավորները ցուցաբերել են «Անգլերեն» առարկայից, այնուհետև «Քիմիա», «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն», «Ֆիզիկա», «Հայոց պատմություն»:

յուն>>, <<Կենսաբանություն>>, <<Աշխարհագրություն>>, <<Հանրահաշիվ>> և <<Հայոց լեզու>> առարկաներից: Ուշագրավ է, ամենացածր միջին միավորը <<Հայոց լեզվից>> է (այս առարկայից թեստավորվել է սովորողների ամենամեծ խումբը (55%-ը)): Աղյուսակ 1-ը նաև ցույց է տալիս, որ սովորողները ավելի մեծ ուշադրություն են դարձնում անզլերենի և այլ օտար լեզուների ուսումնասիրությանը:

2. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Պարզելու համար 10-րդ դասարանում սովորողների կողմնորոշվածությունը բուհի ընդունելության միասնական քննություններին մասնակցելու հարցում, անցկացվել է նաև սովորողների միասնական քննություններին մասնակցելու նախընտրելի առարկաների հարցում: Սովորողների 62.5%-ը նշել է, թե որ առարկաներից է ցանկանում մասնակցել միասնական քննությունների, 38.5%-ը նշել է <<Ղեռ չեմ որոշել>>, իսկ 2%-ը չի հանձնելու միասնական քննություններ: Ստորև ներկայացված է արդեն կողմնորոշված և որևէ քննական առարկայից միասնական քննություն հանձնելու ցանկություն հայտնած սովորողների հայտագրման պատկերը:

Աղյուսակ 2

Հատ տվյալ առարկայից միասնական քննության մասնակցելու ցանկության հայտնած սովորողների առաջադիմությունը				
Սովորողների առաջադիմությունը	Տվյալ առարկայից միասնական քննություն հանձնելու ցանկություն հայտնածները		Տվյալ առարկայից միասնական քննություն չհանձնողները	
	Սովորողների թիվը (%-ը)	Միջին միավորը	Սովորողների թիվը (%-ը)	Միջին միավորը
Առարկան, որից սովորողները ցանկանում են հանձնել միասնական քննություն				
Հայոց լեզու և հայ գրականություն	1192 (36%)	5.13	2076 (64%)	4.94
Մաթեմատիկա	740 (23%)	5.47	2528 (77%)	4.99
Հայոց պատմություն	484 (15%)	5.93	2784 (85%)	5.44
Անգլերեն		6.65		6.09
Ռուսաց լեզու	1030 (31.5%)	6.24	2238 (68.5%)	5.73
Գերմաներեն		9.00		-
Ֆրանսերեն		5.71		-
Կենսաբանություն	313 (10%)	5.87	2955 (90%)	5.20
Ֆիզիկա	302 (9%)	5.89	2966 (91%)	5.47
Քիմիա	207 (6%)	6.38	3061 (94%)	5.62
Աշխարհագրություն	139 (4%)	5.01	3129 (96%)	5.36

Աղյուսակ 2-ում ներկայացված են 10-րդ դասարանցիների առաջադիմության միջին միավորները տվյալ քննական առարկայից միասնական քննություն հանձնողների և չհանձնողների խմբավորմամբ: Ինչպես նկատում ենք, բոլոր առարկաների դեպքում տվյալ առարկայից միասնական քննություն հանձնելու ցանկություն հայտնաձևների միջին միավորները ավելի բարձր են այդ առարկայից միասնական քննություն չհանձնողների միջին միավորներից, բացի <<Աշխարհագրություն>> առարկայից: Սա թերևս բացատրվում է նրանով, որ սովորողները նախապես պետք է ընտրեին ընթացիկ գնահատման ժամանակ թեստավորման երկու առարկա՝ հետևյալ սկզբունքով՝ մեկ առարկա պարտադիր առարկաների ցանկից (հայոց լեզու, հանրահաշիվ և հայոց պատմություն), երկրորդ նախընտրելի առարկան կարող էր լինել նորից պարտադիր առարկաներից որևէ այլ առարկա կամ որևէ օտար լեզու, կամ բնագիտական առարկա: Սովորողները մի մասը չկողմնորոշվելով երկրորդ առարկայի ընտրության հարցում՝ նախընտրել է թեստավորման մասնակցել աշխարհագրությունից: Նշենք, որ միասնական քննություններին մասնակցելու կողմորոշվածության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա դիտարկվել է նաև այլ ուսումնասիրության ժամանակ [1, էջ 14,15]:

3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐ

3.1 Սովորողների առաջադիմությունը ըստ իրենց ուսման մեջ ունեցած ինքնագնահատականի

<<Ինչպե՞ս ես գնահատում սեփական հաջողություններդ ուսման մեջ>> հարցին պատասխանելով՝ սովորողների 24%-ը նշել է <<Ամբողջովին գոհ եմ>>, 58%-ը՝ <<Մասամբ գոհ եմ>>, 4%-ը՝ <<Գոհ չեմ>> և 10%-ը՝ <<Դժվարանում եմ պատասխանել>>, իսկ սովորողների 4%-ը չի պատասխանել այս հարցին: Ստորև ներկայացված են սովորողների վերոնշյալ խմբերի առաջադիմության ցուցանիշները:

Աղյուսակ 3

Սովորողների առաջադիմությունը ըստ իրենց ուսման մեջ ունեցած հաջողությունների կարծիքի										
Առարկան	Սովորողների կարծիքը		Ամբողջովին գոհ եմ (24%)		Մասամբ եմ գոհ (58%)		Գոհ չեմ (4%)		Դժվարանում եմ պատասխանել (10%)	
	Միջին միավորը	Սովորողների թիվը	Միջին միավորը	Սովորողների թիվը	Միջին միավորը	Սովորողների թիվը	Միջին միավորը	Սովորողների թիվը	Միջին միավորը	Սովորողների թիվը
Հայոց լեզու	5.38	574	4.98	1353	4.42	68	4.70	246		
Հանրահաշիվ	5.53	246	5.14	618	5.39	60	4.93	104		
Հայոց պատմություն	5.99	193	5.62	435	5.49	31	5.16	78		
Ռուսաց լեզու	6.08	85	5.95	221	6.28	19	5.34	39		
Անգլերեն	6.45	117	6.48	308	5.41	16	6.13	46		
Գերմաներեն	-	-	9.00	1	-	-	-	-		
Ֆրանսերեն	6.00	2	5.60	5	-	-	-	-		
Կենսաբանություն	5.84	125	5.44	279	4.85	8	4.98	58		
Ֆիզիկա	6.04	90	5.62	252	5.70	32	5.12	46		
Քիմիա	6.62	24	5.60	43	6.33	3	6.50	8		
Աշխարհագրություն	5.28	66	5.28	199	5.57	16	5.23	37		

Աղյուսակում մգեցված թվերը արտահայտում են սովորողների՝ ըստ իրենց ուսման մեջ ունեցած հաջողությունների վերաբերյալ կարծիքների տարանջատված խմբերում դիտարկված ուսումնասիրվող առարկաներից ցուցաբերած միջին միավորների մեծագույն արժեքները, իսկ գույներով տարանջատվածները ընդգծում են նշված խմբերում սովորողների միջին գնահատականները, եթե համադրվող միջին միավորների տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են և խմբերի միջին միավորների միջև առկա է 0.5 և ավել միավորի տարբերություն:

Այսպիսով, <<Ամբողջովին գոհ եմ>>, <<Գոհ չեմ>> և <<Դժվարանում եմ պատասխանել>> կարծիքներ արտահայտող սովորողների շրջանում ամենաբարձր միջին միավորը <<Քիմիա>> առարկա հանձնողների մոտ է (6.62), իսկ <<Մասամբ եմ գոհ>> կարծիք ունեցողների մոտ՝ անզլերեն հանձնողների մոտ է (6.48) (գերմաներենից միայն 1 աշակերտ է թեստավորվել, որի միավորը 9 է եղել):

Ընդհանուր առմամբ, իրենց ուսման հաջողությունից <<Ամբողջովին գոհ եմ>> պատասխանածների առաջադիմությունը (բացառությամբ ռուսաց լեզվից և աշխարհագրությունից թեստավորվածների) բարձր է և՛ <<Մասամբ եմ գոհ>>, <<Գոհ չեմ>>, և՛ <<Դժվարանում եմ պատասխանել>> կարծիք հայտնած սովորողների առաջադիմությունից: Իսկ հայոց լեզու, հանրահաշիվ, հայոց պատմություն, կենսաբանություն և ֆիզիկա հանձնած սովորողներից մոտ <<Ամբողջովին գոհ եմ>> պատասխանածների միջին միավորները նշանակալիորեն բարձր են <<Դժվարանում եմ պատասխանել>> կարծիք հայտնածների միջին միավորներից: Հայոց լեզվից թեստավորված այն սովորողները, որոնք ամբողջովին գոհ են իրենց ուսման հաջողություններից, ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն (5.38), քան իրենց ուսման հաջողություններից դժգոհները (4.42):

Ուսման մեջ ունեցած սեփական հաջողությունների վերաբերյալ ինքնագնահատականի աճին զուգահեռ սովորողները ցուցաբերում են առաջադիմության ավելի բարձր միջին միավորներ:

Սովորողների ճնշող մեծամասնությունը (82%-ը) ամբողջովին և մասամբ գոհ են ուսման մեջ ունեցած իրենց հաջողություններից: Դիտարկենք սովորողների վերոնշյալ խմբերը և տեսնենք, թե ինչ տիպի հանրակրթական ուսումնական հաստատություններում են նրանք սովորում:

Սովորողների բաշխումը ըստ ուս. հաստատության տիպի և ուսման մեջ ունեցած հաջողությունների վերաբերյալ կարծիքի				
Դպրոցի տիպը	Սովորողների կարծիքը	Սովորողները ամբողջովին գոհ են իրենց ուսման հաջողություններից	Սովորողները մասամբ են գոհ իրենց ուսման հաջողություններից	
	Սովորողների թիվը (%-ը)			
Ավագ դպրոց		551 (24.4%)	1293 (40%)	2251 (69%)
Միջնակարգ դպրոց		88 (27%)	443 (13%)	327 (10%)
Վարժարան		95 (20%)	1258 (39%)	475 (14%)
Ոչ պետական ուս. հաստատություն		48 (22.3%)	140 (65.1%)	215 (7%)
Սովորողների ընդհանուր թիվը (%-ը)				3268 (100%)

Ուսման մեջ ունեցած իրենց հաջողություններից ամբողջովին գոհ սովորողների մեծագույն տոկոսը միջնակարգ դպրոցի (27%), իսկ մասամբ գոհ սովորողների մեծագույն տոկոսը (65.1%) ոչ պետական ուսումնական հաստատությունների աշակերտներն են (տե՛ս աղյուսակ 4):

Ուսումնասիրվել է սեփական ուսման հաջողությունների նկատմամբ դրական կարծիք ունեցողների առաջադիմությունը ըստ հոսքերի: Քննարկված խմբերում միայն <<Հանրահաշիվ>> և <<Ֆիզիկա>> առարկաների դեպքում է ամրագրվել հոսքերում սովորողների միջին միավորների միջև առկա նշանակալի տարբերություններ (աղյուսակ 5): Մյուս հանրակրթական առարկաների դեպքում տարբեր հոսքերում սովորողների առաջադիմության միջին միավորների տարբերությունները էական չեն:

Սա թերևս բացատրվում է նրանով, որ սովորողները 10-րդ դասարանում հաղթահարում են իրենց համար կարևոր մի շարք դժվարություններ որոնցից են դպրոցից դպրոց տեղափոխվելը, մեծաթիվ հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հոսքային ուսուցմամբ սովորելը և այլն:

Աղյուսակ 5

Սովորողների առաջադիմությունը ըստ հոսքերի և ուսման մեջ ունեցած հաջողությունների վերաբերյալ կարծիքի					
Հոսքեր	Սովորողների կարծիքը	Սովորողները ամբողջովին գոհ են իրենց ուսման հաջողություններից		Սովորողները մասամբ են գոհ իրենց ուսման հաջողություններից	
		Հանրահաշվի միջին միավորը	Սովորողների թիվը	Ֆիզիկայի միջին միավորը	Սովորողների թիվը
Բնագիտական		5.86	90	5.56	165
Հումանիտար		3.72	18	3.81	7
Ընդհանուր		3.52	18	5.38	7
Տնտեսագիտական		5.45	88	3.69	16
Ֆիզմաթ		6.98	32	6.61	57

Ինչպես նկատում ենք աղյուսակ 5-ից՝ ամենաբարձր միջին միավորները և՛ հանրահաշվից, և՛ ֆիզիկայից ֆիզմաթ հոսքում սովորողներին են (հանր. 6.98, ֆիզ. 6.61): Ֆիզմաթ հոսքում հանրահաշվի և ֆիզիկայի առաջադիմության միջին միավորը նշանակալիորեն բարձր է մյուս բոլոր հոսքերի միջին միավորներից: Հանրահաշվի դեպքում տնտեսագիտական հոսքում սովորողների միջին միավորը (5.45) ևս նշանակալիորեն բարձր է հումանիտար (3.72) և ընդհանուր (3.52) հոսքերում սովորողների ցուցանիշներից, իսկ ֆիզիկայից բնագիտական հոսքում սովորողների միջին միավորը (5.56) նշանակալիորեն բարձր է տնտեսագիտական հոսքում սովորողների (3.69) միջին միավորից: Այս վերլուծությունից եզրակացնում ենք, որ այն սովորողները, որոնք ամբողջովին և մասամբ գոհ են իրենց ուսման մեջ ունեցած հաջողություններից համապատասխան հոսքերում ցուցաբերում են որոշակի կողմնորոշվածություն առարկաների նկատմամբ և տվյալ հոսքում խորությամբ ուսումնասիրվող առարկաներից ստանում են ավելի բարձր միավորներ, ի տարբերություն այն հոսքերում սովորողների, որտեղ այդ առարկաները խորությամբ չեն ուսումնասիրում:

3.2 Արտադասարանային գործունեության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

<<Հաճախ՞ում ես որևէ խմբակի>> հարցին սովորողների 39%-ը պատասխանել է <<այո>>, 57%-ը՝ <<ոչ>>, իսկ 4%-ը չի պատասխանել: Դիտարկենք որևէ խմբակ հաճախող և չհաճախող սովորողների 10-րդ դաս-

սարաններում սովորողների հանրակրթական առաջադիմության ցուցանիշները:

Ինչպես և ակնկալվում էր, որևէ խմբակ հաճախող սովորողների առաջադիմությունը որոշակի չափով բարձր է (հանրակրթական առարկաներից արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորը 5.56 է, ստանդարտ շեղումը՝ 1.90) խմբակներ չհաճախող սովորողների առաջադիմությունից (միջին միավորը՝ 5.31, ստանդարտ շեղումը՝ 1.91):

3.3 Ուսումնական գործընթացում համակարգչային միջոցների կիրառության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

Դիտարկենք սովորողների առաջադիմությունը ըստ ուսումնական գործընթացում բացի ինֆորմատիկայի դասերից համակարգչից, համացանցից և տեղեկատվական համակարգչային միջոցներից օգտվելու հաճախության: Առաջադիմության ցուցանիշների միջին միավորների համադրումից փաստում ենք, որ չի նկատվում որևէ էական տարբերություն <<Շատ հաճախ>> (5.51), <<Հաճախ>> (5.46), <<Հազվադեպ>> (5.48) և <<Երբեք>> (5.34) համակարգչային միջոցներից օգտվողների ցուցանիշների միջև, սակայն առկա է սովորողների մի խումբ, որը չի պատասխանել հարցաթերթի տվյալ հարցին և նրանց մոտ առաջադիմության ցուցանիշը նշանակալիորեն ամենացածրն է (4.44) բոլոր այլ կարծիքներ հայտնած սովորողների խմբերի միջին միավորների նկատմամբ: Իսկ այդ աշակերտները, որոնք ունեն ուսուցիչները, որոնք ուսումնական գործընթացում ժամանակ առ ժամանակ օգտվում են համակարգչային տեղեկատվական միջոցներից ձևավորում են աշակերտների մոտ համակարգչային տեղեկատվական միջոցներից օգտվելու անհրաժեշտություն:

3.4 Ծնողական դիրքորոշման տարբեր դրսևորումների ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

Հայտնի է, որ ծնողների հոգատար վերաբերմունքը և ուշադրությունը հանդիսանում են երեխաների զարգացմանն ու սովորելուննպաստող հանգամանքներ ևնպաստում են սովորողների ավելի բարձր առաջադիմության ցուցաբերելուն: Աշակերտի հարցաթերթում ներառվել են նաև 10-րդ դասարանում սովորողների շրջանում ծնող-աշակերտ հարաբերությունների մասին որոշ հարցեր:

3.4.1 Դպրոցական կյանքի մասին ծնողներին պատմելու ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

Հարցաթերթի <<Կիսվում եմ դպրոցական կյանքի մասին ծնողներիս հետ>> պնդմանը սովորողների 24%-ը պատասխանել է <<Շատ հաճախ>>, 37%-ը՝ <<Հաճախ>>, 27%-ը՝ <<Հազվադեպ>>, 4%-ը՝ <<Երբեք>>, իսկ 8%-ը չի պատասխանել (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Սովորողների առաջադիմությունը ըստ <<Կիսվում եմ դպրոցական կյանքի մասին ծնողներիս հետ>> պնդմանը տրված պատասխանների հաճախության					
Մտարկան	Շատ հաճախ (24%)	Հաճախ (37%)	Հազվադեպ (27%)	Երբեք (4%)	Չեն պատասխանել (8%)
Հայոց լեզու	5.38	5.20	4.82	4.39	3.89
Հայոց պատմություն	6.01	5.95	5.32	4.79	4.47
Հանրահաշիվ	5.53	5.36	4.95	4.79	4.78
Ռուսաց լեզու	6.17	6.16	5.77	5.45	4.66
Անգլերեն	6.66	6.54	6.05	6.03	5.70
Քիմիա	6.41	6.42	4.50	-	4.50
Կենսաբանություն	5.75	5.74	5.37	4.43	3.92
Ֆիզիկա	5.80	5.71	5.42	5.72	6.17
Աշխարհագրություն	5.59	5.59	5.07	5.10	4.44

Ինչպես նկատում ենք, մեծագույն միջին միավորները*, բացի ֆիզիկայի միջին միավորից, այն սովորողների միջին միավորներն են, որոնք նշել են, որ շատ հաճախ կամ հաճախ են խոսում իրենց ծնողների հետ դպրոցական կյանքից: Ծնողների հետ դպրոցական կյանքի մասին խոսելու հաճախության աճին գուցա հետ արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ ուսումնասիրվող հանրակրթական առարկաներից սովորողները դրսևորում են ավելի բարձր միջին միավորներ:

* Աղյուսակներում մզեցված են հանրակրթական առարկաներից խմբերում ցուցաբերված միջին միավորների մեծագույն արժեքները, իսկ քննարկվող այն խմբերում, որտեղ խմբերի միջին միավորների միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի է և առկա է 0.5 և ավելի միավորի տարբերություն, դրանք նշված են միննույն գույնով:

3.4.2 Սովորողի ուսումնական հաջողություններով ծնողների հետաքրքրվածության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

<<Ծնողներս հետաքրքրվում են իմ ուսումնական հաջողություններով>> պնդմանը սովորողների 71%-ը պատասխանել է <<Շատ հաճախ>>, 21%-ը՝ <<Հաճախ>>, 1%-ը՝ <<Հազվադեպ>>, իսկ 7%-ը չի պատասխանել: Սովորողների մեծամասնության կարծիքով, ծնողները հաճախ են հետքքրքրվում իրենց երեխաների ուսման հաջողություններով:

Աղյուսակ 7

Սովորողների առաջադիմությունը ըստ <<Ծնողներս հետաքրքրվում են իմ ուսումնական հաջողություններով>> պնդմանը տրված պատասխանների				
Ստորկան	Շատ հաճախ (71%)	Հաճախ (21%)	Հազվադեպ (1%)	Չեն պատասխանել (7%)
Հայոց լեզու	5.23	4.70	4.61	3.84
Հայոց պատմություն	5.76	5.63	5.14	4.14
Հանրահաշիվ	5.29	5.08	4.40	4.96
Ռուսաց լեզու	5.97	6.02	6.34	4.88
Անգլերեն	6.49	6.27	5.42	5.65
Քիմիա	6.08	5.88	-	7.00
Կենսաբանություն	5.67	5.21	4.32	3.86
Ֆիզիկա	5.71	5.43	4.4	6.35
Աշխարհագրություն	5.50	5.08	4.19	4.42

Ինչպես նկատում ենք աղյուսակ 7-ից, հայոց լեզվից, հայոց պատմությունից, ռուսաց լեզվից, կենսաբանությունից և աշխարհագրությունից <<Ծնողներս հետաքրքրվում են իմ ուսումնական հաջողություններով>> պնդմանը չպատասխանած սովորողների միջին միավորներից նշանակալիորեն բարձր են այն սովորողների միջին միավորները, որոնք պատասխանել են, որ իրենց ծնողները շատ հաճախ են հետաքրքրվում իրենց առաջադիմությամբ:

Հայոց լեզվից, ռուսաց լեզվից և կենսաբանությունից նորից նշանակալիորեն բարձր է այն սովորողների առաջադիմությունը, որոնք կարծում են, որ իրենց ծնողները <<Հաճախ են>> հետաքրքրվում իրենց ուսման հաջողություններով:

Հանրակրթական վեց առարկաների դեպքում (հայոց լեզու, հայոց պատմություն, հանրահաշիվ, անգլերեն, կենսաբանություն և աշխարհագրություն) մեծագույն միջին միավորները ստացել են այն սովորողները, որոնք կարծում են, որ իրենց ծնողները <<Շատ հաճախ>> են հետաքրքրվում իրենց ուսումնական հաջողություններով:

Զարմանալի է, բայց քիմիայի և ֆիզիկայի առաջադիմության ցուցանիշներում ամենամեծ միջին միավորները այն խմբերի սովորողներին են, որոնք չեն պատասխանել հարցաթերթի այդ պնդմանը:

3.4.3 Ծնողների կողմից հասկացված լինելու ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

<<Ծնողներս լավ են հասկանում ինձ>> պնդմանը սովորողների 56%-ը պատասխանել է <<Շատ հաճախ>>, 31%-ը՝ <<Հաճախ>>, 5%-ը՝ <<Հազվադեպ>>, 1%-ը <<Երբեք>>, իսկ 7%-ը չի պատասխանել այս պնդմանը:

Աղյուսակ 8

Սովորողների առաջադիմությունը ըստ <<Ծնողներս լավ են հասկանում ինձ>> պնդմանը տրված պատասխանների						
Առարկա	Հաճախություն աստիճան	Հաճախ (56%)	Հաճախ (31%)	Հազվադեպ (5%)	Երբեք (1%)	Չեն պատասխանել (7%)
Հայոց լեզու		5.17	5.07	4.78	4.23	3.80
Հայոց պատմություն		5.69	5.70	5.80	6.22	4.50
Հանրահաշիվ		5.32	5.15	5.21	4.44	4.83
Ռուսաց լեզու		5.99	5.95	6.13	5.45	5.01
Անգլերեն		6.36	6.47	6.82	5.34	6.15
Քիմիա		6.38	5.50	5.00	-	4.50
Կենսաբանություն		5.61	5.62	4.96	5.07	3.85
Ֆիզիկա		5.63	5.66	6.04	4.16	6.11
Աշխարհագրություն		5.38	5.46	5.13	3.09	4.50

Հայոց լեզու, հանրահաշիվ և քիմիա առարկաների դեպքում մեծագույն միջին միավորները այն սովորողներին են, որոնք պնդում են, որ իրենց ծնողները <<Շատ հաճախ>> իրենց լավ են հասկանում (հլգ. 5.17, հանր. 5.32, քիմ. 6.38):

Հայոց լեզվի դեպքում <<Ծնողներս լավ են հասկանում ինձ>> պնդմանը և՛ <<Շատ հաճախ>> (5.17), և՛ <<Հաճախ>> (5.07), և՛ <<Հազվադեպ>> (4.78) պատասխաններ նշած սովորողների առաջադիմության ցուցանիշները նշանակալիորեն բարձր են այդ հարցին չպատասխանածների ցուցանիշներից (3.80):

Կենսաբանության և աշխարհագրության պարագայում <<Ծնողներս լավ են հասկանում ինձ>> պնդմանը <<Հաճախ>> կարծիք հայտնողների առաջադիմությունը (կենսաբ. 5.62, աշխարհ. 5.46) ամենաբարձրն է այդ առարկաներից այլ կարծիքներ հայտնողների առաջադիմության միջին միավորների համեմատությամբ:

Ռուսաց լեզվի և անգլերենի դեպքում <<Հազվադեպ են ծնողներս ինձ լավ հասկանում>> կարծիք հայտնողների առաջադիմությունը ամենաբարձր է (ռ.լ. 6.13, անգլ. 6.82): Նշենք, որ աղյուսակ 8-ում ամենաբարձր միջին միավորը անգլերենից է (6.82), ընդ որում այն սովորողների, որոնք նշել են, որ <<Հազվադեպ>> են ծնողներն իրենց լավ հասկանում:

Հայոց պատմության դեպքում ամենաբարձր միջին միավորը <<Ծնողներս ինձ լավ են հասկանում>> պնդմանը <<Երբեք>> պատասխանը նշողներինն է (6.22):

Տիզիկայի դեպքում ամենաբարձր միջին միավորը (6.11) ստացել են այն սովորողները, որոնք չեն պատասխանել հարցաթերթի տվյալ հարցին:

Իմաստ ունի նաև համեմատել սովորողների միջին միավորները ըստ հանրակրթական առարկաների, քանի որ աղյուսակում սովորողների գնահատականները արտահայտված են առաջադրանքների պատասխանների տեսությամբ - ԱՊՏ (Item Response Theory -IRT) միավորներով [2, էջ 7], որը թույլ է տալիս տարբեր առարկաների միջև առաջադիմության արդյունքների համեմատություններ կատարել:

<<Ծնողներս լավ են հասկանում ինձ>> պնդման նկատմամբ անտարբեր, այս հարցին չպատասխանածները բոլոր առարկաներից ամենացածր միջին միավորներն ունեն բացառությամբ ֆիզիկա, հանրահաշիվ և աշխարհագրություն հանձնողների:

3.4.4 Ծնողների խստապահանջ լինելու ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա


<<Ես ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև ծնողներս են ստիպում>> պնդմանը սովորողների 5%-ը պատասխանել է, որ <<Միանգամայն համամիտ եմ>>, 9%-ը՝ <<Գրեթե համամիտ եմ>>, 22%-ը՝ <<Շատ քիչ եմ համամիտ>> և 51%-ը՝ <<Բոլորովին համամիտ չեմ>>, իսկ սովորողների 13%-ը չի պատասխանել: Ինչպես տեսնում ենք, սովորողների ճնշող

մեծամասնությունը շատ քիչ է համամիտ կամ միանգամայն համամիտ չէ, որ իրենք ձգտում են ավելի լավ սովորել, որովհետև ծնողներն են ստիպում:

Դիագրամ 1-ում պատկերված է արտաքին ընթացիկ գնահատման ուսումնասիրության ժամանակ սովորողների նախընտրած հանրակրթական երկու առարկաներով ձևավորված միջին ցուցանիշները վերոնշյալ կարծիքները հայտնողների համադրմամբ: Ինչպես նկատում ենք, սովորողների ճնշող մեծամասնությունը կազմում են <<Շատ քիչ եմ համամիտ>> և <<Բոլորովին համամիտ չեմ>> կարծիք հայտնողները և այս երկու խմբերի միջին միավորները բարձր են ընդհանուր համակազմի այս ուսումնասիրության ժամանակ դրսևորված հանրակրթական միջին միավորից (5.40):

Դիագրամ 2

Սովորողների առաջադիմության հանրակրթական միջին ցուցանիշները ըստ <<Ես ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև ծնողներս են ստիպում>> պնդմանը տրված պատասխանի



Մասնավորեցնելով և դիտարկելով միջին միավորների բաշխումը ըստ կոնկրետ հանրակրթական առարկայի՝ նկատում ենք, որ վերոնշյալ միտումը վառ արտահայտվում է հայոց լեզվի դեպքում, երբ <<Բոլորովին համամիտ չեմ>> և <<Շատ քիչ եմ համամիտ>> կարծիք հայտնողների հայոց լեզվի միջին միավորը նշանակալիորեն բարձր է <<Միանգամայն համամիտ եմ>> և այդ հարցին չպատասխանածների միջին միավորներից, ինչպես նաև հանրահաշվի դեպքում, երբ <<Բոլորովին համամիտ չեմ>> կարծիք արտահայտողների հանրահաշվի միջին միավորը նշանակալիորեն բարձր է և՛ <<Միանգամայն համամիտ եմ>>, և՛ <<Գրեթե համամիտ

էւ>>, և՛ հարցաթերթի այդ հարցին չպատասխանած սովորողների միջին միավորներից:

4. ԱՎԵԼԻ ԼԱՎ ՍՈՎՈՐԵԼՈՒՆ ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽԱՆԳԱՐՈՂ ԱՅԼ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Հարցաթերթում ներառված է եղել մի քանի պնդումների փունջ, որոնց տրված պատասխաններով սովորողների բազմությունը բաժանվել է ենթախմբերի՝ ըստ տվյալ պնդումի վերաբերյալ ունեցած իրենց կարծիքների: Այդ պնդումները դիտարկում ենք որպես արտաքին՝ սովորողից դուրս նրա վրա ազդող (հասարակության մեջ ընդունված նորմերի ու ավանդույթների) և ներքին՝ սովորողի անձով պայմանավորված (ձգտումների, ներքին մղումների) ազդեցություններ:

Աղյուսակ 9

Սովորողների առաջադիմությունը ըստ <<Ես ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև...>> պնդումների վերաբերյալ կարծիքների										
Պնդումներ	Միանգամայն համաձայն եմ		Գրեթե համաձայն եմ		Շատ քիչ եմ համաձայն		Բարբոթված համաձայն չեմ		Չեմ պատասխանում	
	միջին միավոր	սովորողների թիվը (%)	միջին միավոր	սովորողների թիվը (%)	միջին միավոր	սովորողների թիվը (%)	միջին միավոր	սովորողների թիվը (%)	միջին միավոր	սովորողների թիվը (%)
Օտարներն են ստիպում (ներառված նորմ)	4.69	143 (5%)	5.27	286 (9%)	5.52	728 (22%)	5.60	1634 (51%)	4.58	361 (13%)
Սովորելը անհրաժեշտ է կյանքի համար (ներառված նորմ)	5.47	2658 (82%)	5.30	234 (9%)	4.85	36 (2%)	4.19	19 (1%)	4.72	206 (6%)
Հաճույք եմ ստանում ուսման պրոցեսից (ներքին մղում)	5.71	1033 (32%)	5.44	1293 (41%)	5.31	384 (12%)	4.83	90 (3%)	4.56	350 (12%)
Նոր ինֆորմացիա եմ ստանում (արտաքին ազդեցություն)	5.53	2352 (72%)	5.43	443 (14%)	4.79	71 (2%)	4.55	17 (1%)	4.51	296 (11%)

4.1 Ծնողներն են ստիպում

Պարզենք, թե ինչն է խթանում կամ խանգարում սովորողներին ավելի լավ սովորել: Ինչպես արդեն քննարկվեց [Էջ 14] <<Ես ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև ծնողներս են ստիպում>> պնդման հետ և՛ <<Բոլորովին համամիտ չեմ>> (5.60), և՛ <<Շատ քիչ եմ համամիտ>> (5.52), և՛ <<Գրեթե համամիտ եմ>> (5.27) կարծիք հայտնողների հանրակրթական առաջադիմության միջին միավորները նշանակալիորեն բարձր են <<Միանգամայն համամիտ եմ>> կարծիք հայտնողների միջին միավորից (4.69): Հաճելի է նշել, որ թվով ավելի քիչ սովորողներ են փաստում, որ իրենք ձգտում են ավելի լավ սովորել, քանի որ ծնողներն են ստիպում և մեծ թվով սովորողներ ձգտում են ավելի լավ սովորել, քանի որ կարևորում են ուսումը (տե՛ս աղյուսակ 9):

4.2 Սովորելը անհրաժեշտ է կյանքի համար

«Ես ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև սովորելը անհրաժեշտ է կյանքի համար» պնդման հետ *«Միանգամայն համամիտ եմ»* (5.47) կարծիք հայտնողների միջին միավորը նշանակալիորեն բարձր է և՛ *«Շատ քիչ եմ համամիտ»* (4.85), և՛ *«Բոլորովին համամիտ չեմ»* (4.19) կարծիք հայտնողների միջին միավորներից, իսկ *«Գրեթե համամիտ եմ»* (5.30) կարծիք հայտնողների միջին միավորը ևս բարձր է *«Բոլորովին համամիտ չեմ»* (4.19) և՛ այդ հարցին չպատասխանածների միջին միավորներից (4.72): Սովորողների մեծամասնությունը (82%-ը), որոնք *«Միանգամայն համամիտ եմ»* կարծիքն են հայտնել, ցուցաբերել են առաջադիմության ամենաբարձր միջին միավորը այս հարցի վերաբերյալ այլ կարծիք արտահայտած խմբերի համեմատությամբ:

4.3 Հաճույք են ստանում ուսման պրոցեսից

Այն սովորողները, որոնք *«Ես ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև հաճույք եմ ստանում ուսման պրոցեսից»* պնդման հետ *«Միանգամայն համամիտ եմ»*, ցուցաբերում են ամենաբարձր միջին միավորը (5.71) (տե՛ս աղյուսակ 9): Ե՛վ *«Միանգամայն համամիտ եմ»*, և՛ *«Գրեթե համամիտ եմ»* (5.44) կարծիք արտահայտողների առաջադիմության միջին միավորները նշանակալիորեն բարձր են *«Բոլորովին համամիտ չեմ»* (4.88) կարծիք հայտնողների միջին միավորից: Այս հարցի շուրջ սովորողների մեծաթիվ խումբը *«Գրեթե համամիտ եմ»* կարծիք հայտնողներն են (41%-ը), և ելնելով աղյուսակ 9-ում ներկայացված արդյունքներից կարելի է հանդես գալ սովորողների համար ուսման պրոցեսը ավելի հաճելի կազմակերպելու առաջարկով:

4.4 Նոր ինֆորմացիա են ստանում

«Ես ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև նոր ինֆորմացիա եմ ստանում» պնդման հետ *«Միանգամայն համամիտ եմ»* կարծիք հայտնողները ցուցաբերում են առաջադիմության ամենաբարձր միջին միավորը (5.53), որը նշանակալիորեն բարձր է *«Շատ քիչ եմ համամիտ»* (4.79) և *«Բոլորովին համամիտ չեմ»* (4.55) կարծիք հայտնողների միջին միավորներից: Վերոնշյալ պնդման հետ *«Գրեթե համամիտ եմ»* կարծիք հայտնողների առաջադիմության միջին միավորը (5.43) ևս նշանակալիորեն բարձր է *«Շատ քիչ եմ համամիտ»* կարծիք հայտնողների առաջադիմության միջին միավորից (4.79): Մեծ թվով սովորողներ (72%-ը), որոնք ստացել են ամենաբարձր միջին միավորներ, համամիտ են, որ ձգտում են ավելի լավ սովորել, որովհետև նոր ինֆորմացիա են ստանում:

4.5 Ուսումը հեշտ է տրվում

Հետաքրքիր է դիտարկել սովորողների առաջադիմության ցուցանիշները <<Ես ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև ուսումը հեշտ է տրվում>> պնդմանը տրված պատասխանների համաձայն: Սովորողների 20 %-ը պատասխանել է <<Միանգամայն համամիտ եմ>>, 40%-ը <<Գրեթե համամիտ եմ>>, 21%-ը <<Շատ քիչ եմ համամիտ>>, 7 %-ը <<Բոլորովին համամիտ չեմ>>, 13%-ը չի պատասխանել: Սովորողների առաջադիմության միջին միավորները այս խմբերում նշանակալիորեն չեն տարբերվում՝ բացառությամբ չպատասխանողների խմբի, որոնց առաջադիմության միջին միավորը ցածր է մյուս բոլոր խմբերում սովորողների միջին միավորներից:

Սովորողների առաջադիմության ցուցանիշները կոնկրետ հանրակրթական առարկաների դեպքում և դրանց ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ <<Հայոց լեզու>>, <<Հայոց պատմություն>> և <<Աշխարհագրություն>> առարկաների դեպքում այդ պնդմանը <<Միանգամային համամիտ եմ>> պատասխանը նշած սովորողների առաջադիմության միջին միավորները շատ քիչ, սակայն ցածր են այն սովորողների առաջադիմությունից, որոնք բոլորովին համամիտ չեն վերոնշյալ պնդման հետ: Մնացած բոլոր հանրակրթական առարկաների դեպքում <<Բոլորովին համամիտ չեմ>> պատասխանողների առաջադիմությունից փոքր ինչ բարձր է այն սովորողների առաջադիմությունը, որոնք միանգամայն համամիտ են, որ իրենք ձգտում են ավելի լավ սովորել, որովհետև ուսումն իրենց հեշտ է տրվում: Եվ քանի որ սովորողները հայտագրվել էին մասնակցելու արտաքին ընթացիկ գնահատմանը՝ նախապես ունենալով երկու առարկա ընտրելու հնարավորություն՝ կարող ենք պնդել, որ որոշ առարկաների դեպքում ուսումը իրոք հեշտ է տրվում: Սա կարելի է բացատրել դասաժամերի քանակով, առարկայի ուսուցման հարցում ուսումնական հաստատության կողմից դպրոցական բաղադրիչ ժամերի բաշխմամբ և, ընդհանրապես, հասարակության մեջ այդ առարկայի նկատմամբ ձևավորված վերաբերմունքով ու պահանջմունքով:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել է սովորողների առաջադիմության վրա ազդող որոշ գործոններ:

Սովորողների առաջադիմությունը ըստ իրենց ուսման մեջ ունեցած ինքնագնահատականի

Ուսման մեջ սեփական հաջողությունների մասին բարձր ինքնագնահատականի աճի հետ զուգահեռ սովորողները ունենում են առաջադիմության ավելի բարձր միջին միավորներ:

Միասնական քննություններին մասնակցելու կողմորոշվածության ուսումնասիրություն

10-րդ դասարանում արդեն դրսևորվում է միասնական քննություններին մասնակցելու կողմորոշվածության ազդեցությունը սովորողների առաջադիմության ցուցանիշների վրա: Այն աշակերտները, որոնք արդեն նշում են, որ մասնակցելու են բուհի ընդունելության միասնական քննություններին և նշում են այն առարկան(երը), որից (որոնցից) ցանկանում են մասնակցել միասնական քննության, արտաքին ընթացիկ գնահատման ընթացքում ցուցաբերել են ավելի բարձր միջին միավորներ՝ ի տարբերություն այդ առարկաներից միասնական քննություն հանձնելու ցանկություն չհայտնածների:

Արտադասարանային գործունեության ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները՝ արտադասարանային գործունեությունը դրականորեն է ազդում սովորողների առաջադիմության վրա: Այն սովորողները, որոնք հաճախում են որևէ խմբակ ցուցաբերում են մի փոքր ավելի բարձր առաջադիմություն, քան այն սովորողները, որոնք որևէ խմբակ չեն այցելում: Սակայն սովորողների մեծ տոկոսը դեռևս չի հաճախում որևէ խմբակ, որը կարող է պայմանավորված լինել ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակով կամ սովորողների ազատ ժամանակի ոչ արդյունավետ կազմակերպմամբ:

Ծնողական դիրքորոշման տարբեր դրսևորումների ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

Ծնողական դիրքորոշման տարբեր դրսևորումները հանդես են գալիս որպես արտաքին հանգամանք սովորողների առաջադիմության տարբեր ցուցանիշների դրսևորման համար: Ծնողների կողմից ավելի հաճախ դպրոցական կյանքից հետաքրքրվելը, ավելի հաճախ սովորողների ուս-

ման հաջողություններով հետաքրքրվելը և սովորողների կարծիքով ծնողների կողմից ավելի հաճախ հասկացված լինելը հանդես են գալիս որպես ավելի լավ սովորելուն նպաստող հանգամանքներ:


Սովորողների առաջադիմության վրա ազդող որոշ այլ գործոններ

- Մեծաթիվ սովորողներ ձգտում են ավելի լավ սովորել, որովհետև ծնողները չեն ստիպում: Առաջադիմության ամենաբարձր միջին միավորներն ունեն այն սովորողները, որոնք բոլորովին համամիտ չեն, որ իրենք ավելի լավ են սովորում ծնողների ստիպելու պատճառով:
- Սովորողները ձգտում են նաև ավելի լավ սովորել, որովհետև արժևորում են հասարակության կողմից ընդունված նորմը, ըստ որի սովորելը անհրաժեշտ է ողջ կյանքի ընթացքում և այն հանդիսանում է հաջողակ լինելու գրավական:
- Սովորողները ձգտում են ավելի լավ սովորել, քանի որ հաճույք են ստանում ուսման գործընթացից:
- Սովորողները ձգտում են ավելի լավ սովորել, որովհետև սովորելը նոր ինֆորմացիա ստանալու ավանդական աղբյուր է և այն արժևորվում է նրանց կողմից:
- Սովորողները փորձում են ավելի լավ սովորել, որովհետև իրենց նախընտրելի և սիրելի առարկաների դեպքում ուսումն իրենց հեշտ է տրվում:

Օգտագործված գրականություն

1. 12-րդ դասարանում սովորողների առաջադիմության վրա ազդող որոշ գործոնների վերլուծություն և աշակերտների՝ բուհերի ընդունելության միասնական քննություններին մասնակցելու կողմնորոշվածության վերաբերյալ, <http://www.atc.am/files/verlucutyunner/2016/Sovor%20vra%20azdox%20gorts on%2012-rd.pdf>, էջ 14,15
2. DeMars Ch., Item Response Theory. Understanding Statistics. Measurement, p 7-8, Oxford University Press, 2010

ՀՈՒՎԱԾՆԵՐ



Անգլերենի թեստային առաջադրանքների նոր տիպեր

Կրթական բարեփոխումների համատեքստում շրջանավարտների գիտելիքների ստուգման և գնահատման ձևերը պարբերաբար փոփոխության են ենթարկվում: Փոխվում են նաև դրանց կազմակերպման, անցկացման, միավորների սանդղակավորման ձևերը, ընթացակարգերը, գնահատման գործիքները:

Սկսած անցյալ դարի վերջին քառորդից, մինչև օրս հանրակրթական տարբեր առարկաներից և մասնավորապես օտար լեզուներից գիտելիքների ստուգման և գնահատման ձևերը կրել են բազմափուլ փոփոխություններ՝ կապված առկա հիմնախնդիրներին նոր լուծումներ փնտրելու հետ:

«Սովորողների գնահատման հայեցակարգում» մանրամասն ներկայացվում են լուծման կարիք ունեցող հիմնախնդիրները, ապա նաև նշվում է գնահատման նոր համակարգի դերը կրթության որակի բարձրացման գործում (Սովորողների գնահատման հայեցակարգ 2005, էջ 3):

Երբ նոր ժամանակների առանցքային պահանջներից դարձավ գրավոր աշխատանքների համակարգչային ստուգումը, որով հնարավոր դարձավ ամբողջ հանրապետության տարածքում քննություններն անցկացնելը մեկ օրում, համակարգչային ստուգման նոր տեխնոլոգիան իր հետ բերեց թեստերի վերափոխման անհրաժեշտություն: Հասկանալի է, որ նախկին թեստերը, որոնք նախատեսված չէին այդպիսի ստուգման համար, չէին կարող նույնությամբ, առանց փոփոխությունների գործածվել նոր եղանակով անցկացվող քննություններում:

Ուստի անհրաժեշտ էր վերանայել նախկին թեստային առաջադրանքների կառուցվածքը և բովանդակությունը, առանձնացնել այն առաջադրանքները, որոնք հնարավոր է ներառել նոր շտեմաբաններում և ստեղծել նոր տիպի առաջադրանքներ: Թեստային առաջադրանքները ենթարկվեցին ոչ միայն որակական, այլև քանակական փոփոխության:

Ավելացվեց առաջադրանքների քանակը, որը հնարավորություն տվեց ընդլայնել լեզվական գիտելիքների ստուգման բովանդակային ոլորտը:

2008 թվականին, ինչպես հայտնի է, ՀՀ-ում նոր համակարգով առաջին անգամ «Անգլերեն» առարկայից անցկացվեցին պետական ավարտական և միասնական քննություններ: Այդ քննությունների համար կազմված թեստը շատ կողմերով տարբերվում էր նախկին թեստերից:

Նոր թեստային առաջադրանքները կարելի է դասակարգել 4 տիպի՝

1. առաջադրանքներ, որոնք պահպանվեցին նույնությամբ,
2. առաջադրանքներ, որոնք ընդգրկվեցին նոր թեստերում փոփոխված տարբերակով,
3. առաջադրանքներ, որոնք ամբողջությամբ հանվեցին շրջանառությունից,
4. նոր տիպի առաջադրանքներ:

Առաջին կետում նշված առաջադրանքների նկարագրության վրա կանգ չառնելով՝ մեկնաբանենք երկրորդ կետում նշված առաջադրանքները:

Այսպես՝ նախկին թեստում կար առաջադրանք հետևյալ պահանջով՝ «Ավարտել նախադասությունները»: Այդ առաջադրանքի գնահատման չափանիշները հստակ չէին, ուստի չէր լուծվում օբյեկտիվ գնահատման խնդիրը: 2008 թվականին այս առաջադրանքը փոխարինվեց հետևյալ տիպի առաջադրանքով. տրվում է համապատասխանեցման առաջադրանք՝ մի քանի նախադասություններով: Նախադասության սկիզբը տրվում է ձախ մասում, ավարտը՝ խառը դասավորությամբ, աջ մասում: Անհրաժեշտ է համապատասխանեցնել նախադասության սկիզբը պատրաստի տրված ավարտին: Նախադասությունների բաղադրիչները մշակվում են այնքան հստակ, որ տարբերությունների տեղիք հիմնականում չեն տալիս, այսինքն՝ հնարավոր չէ, օրինակ, առաջինի շարունակությունը համարել չորրորդը, եթե դրա շարունակությունը, ասենք, երրորդն է: Նախկինում այս առաջադրանքին տրվում էր 1 միավոր, քանի որ կառուցվածքային առումով առաջադրանքը ընտրովի պատասխանով էր. պատասխանների տարբերակներում տրվում էին համապատասխանեցված գույգերը: Հետագայում առաջադրանքը վերամշակվեց և դարձավ կարճ պատասխանով առաջադրանք՝ հետևյալ տեսքով՝

- A. They called an ambulance
- B. Martin decided to

- 1. visit the doctor after his trip to the jungle.
- 2. is suffering from a severe disease.
- 4. to take the injured man to hospital.
- 5. get a terrible headache.

Մեկ միավոր տրվում է բոլոր գույգերի ճիշտ համապատասխանեցման դեպքում:

Մեկ այլ առաջադրանք, որը հնարավոր չէր նույնությամբ ներառել նոր թեստերում, վերաբերում էր ուղղակի և անուղղակի խոսքի փոխակերպմանը: Սա բաց առաջադրանք էր, որի դեպքում աշակերտը ինքնուրույն պետք է գրեր փոխակերպված տարբերակը:

Օրինակ՝

Who is going to live in this big house? he asked.

Հեշտ է նկատել, որ առաջադրանքի գնահատումը կարող էր մեծապես կախված լինել սուբյեկտիվ գործոնից: 2008-ից առաջադրանքը վերափոխվեց ընտրովի պատասխանով առաջադրանքի:

Օրինակ՝

Why didnt you tell me about the party? he asked me.

- a) He asked me why didnt I tell him about the party.
- b) He asked me if I had told him about the party.
- c) He asked me why I hadnt told him about the party.
- d) He asked me why hadnt I told him about the party.

2016-ից առաջադրանքը ստացել է հետևյալ տեսքը.

- 1. *I am going to call him this afternoon, she said.*
She said that she was going to call him that afternoon.
- 2. *Bella says to her brother: Where are you planning to go this summer?*
Bella asked her brother where he was planning to go this summer.
- 3. *Dont forget to buy some milk, Andy, said Clare.*
Clare reminded Andy to buy some milk.
- 4. *Me? No, I didnt take Sues calculator, said Bob.*
Bob denied taking Sues calculator.
- 5. *The secretary asked me to fill up that form.*
Would you like to fill up this form? said the secretary.

Սա կարճ պատասխանով առաջադրանք է. բոլոր ճիշտ փոխակերպումների համարները նշելու դեպքում աշակերտը ստանում է 1 միավոր:

Նախկինում «Բայ» թեման ստուգվում էր և՛ ընտրովի պատասխանով առաջադրանքով, և՛ հետևյալ տիպի առաջադրանքով. տրվում էր մեկ նախադասություն, որում անհրաժեշտ էր լրացնել բաց թողնված բայը ճիշտ ժամանակաձևով: Դարձյալ ապահովված չէր գնահատման օբյեկտիվությունը: Նոր թեստերում թեման ստուգվում է համատեքստի միջոցով և առաջադրանքն ունի հետևյալ տեսքը.

The Oxford University or simply Oxford (1)_____ a research university located in Oxford, England. After disputes between students and Oxford townsfolk in 1209, some academics (2)_____ northeast to Cambridge, where they (3)_____ what became the University of Cambridge.

- | | | | |
|------------------------|----------------|--------------|----------------------|
| 1. a) has been | b) is | c) was | d) will be |
| 2. a) fled | b) were fled | c) flee | d) have fled |
| 3. a) have established | b) established | c) establish | d) were establishing |

Այս տեսքով առաջադրանքը հնարավորություն է տալիս ստուգել բայի միաժամանակ երեք տարբեր ժամանակաձևերի ճիշտ գործածությունը, ինչպես նաև ստուգել դրանք համատեքստում՝ կապակցված խոսքում, որի դեպքում օտարալեզու հաղորդակցական կոմպետենցիան առավել լավ է դրսևորվում: Այն ապահովում է նաև պատասխանների միարժեքությունը:

Նախկին թեստերում գոյություն ունեցող առաջադրանքներից մեկում տրվում էր տեքստ բաց թողնված բառերով. բառերը տրվում էին ներքևում: Անհրաժեշտ էր տեքստի բովանդակությանը համապատասխան տեղադրել բառերը ճիշտ տեղերում՝ ենթարկելով անհրաժեշտ քերականական փոփոխությունների: Առաջադրանքի գլխավոր թերությունն այն էր, որ հստակեցված չէր ստուգվող գիտելիքի ոլորտը, ինչպես նաև հստակ չէին գնահատման չափանիշները, այսինքն, շրջանավարտը կարող էր բառը ճիշտ տեղում տեղադրել, բայց չկատարել համապատասխան փոփոխությունը և չստանալ միավոր: Նոր թեստերում առաջադրանքը հիմնականում միտված է բառիմաստի բացահայտմանը. առանձնացված է յոթ բառ, որոնցից թեստավորվողը պետք է ընտրի հինգը: Բառերը տրվում են քերականորեն պատրաստի ձևավորված տեսքով: Շրջանավարտը պետք է կարողանա որոշել այդ բառերից յուրաքանչյուրի տեղը համատեքստում: Բոլոր բառերի ճիշտ տեղադրման համար տրվում է մեկ միավոր: Այս առաջադրանքը տեղ է գտել թեստերի Ա մակարդակում, իսկ Բ մակարդակում ավելացվել է նույն ունակությունը ստուգող մեկ այլ առաջադրանք,

որի դեպքում տեքստում բաց են թողնվում ոչ թե բառեր, այլ նախադասություններ: Բերենք օրինակներ:

Before the _____ of money, people used to get the goods and services they wanted by swapping things with others. The system was entirely _____ on an agreement between both people, each of whom needed to have what the other wanted to exchange.

The system of exchange started to work much more _____ with the introduction of money. By using precious metals which had been officially _____ and made into coins, it became possible to sell what you produced in _____ for coins, and then use the coins to buy anything you wanted from a third party.

1. weighed 2. invention 3. smoothly 4. place 5. dependent 6. return 7. fast

Ինչպես նշվեց, որոշ առաջադրանքներ պարզապես հանվեցին շրջանառությունից:

Այսպես՝ նախկին թեստերում գործածվող առաջադրանքների տիպերից նոր թեստերում տեղ չգտան հետևյալ առաջադրանքները.

1. Վերադասավորել տրված բառերը ամփոփ միտք արտահայտելու համար: Այս առաջադրանքը չընգրկվեց նոր թեստերում, քանի որ հնարավոր չէր ապահովել համակարգչային ստուգումը:

2. Հայերենից անգլերեն թարգմանել տրված նախադասությունները: Սրա բացառման հիմնական պատճառը, բացի գնահատման չափանիշների անհստակությունից, համակարգչային ստուգման ենթակա չլինելն էր: Անշուշտ, հնարավոր էր առաջադրանքը բերել համապատասխան տեսքի այնպես, ինչպես արվել է և կիրառվել է 9-րդ դասարանի թեստերում: Առաջադրանքի այս տիպին դեմ արտահայտվողների հիմնական հիմնավորումը բոլորի կողմից ընդունելի գնահատման անառարկելի սխալ տարբերակներ մշակելու անհնարինությունն էր:

Սակայն նկատի ունենալով ստուգվող հմտությունների կարևորությունը՝ այդպիսի առաջադրանքներ ներդրվեցին 9-րդ դասարանի ավարտական թեստերում: Այս նախաձեռնությունը, մի կողմից, պայմանավորված է ուսուցիչների կողմից աշակերտների մեջ համապատասխան կարողությունների ձևավորելու մոտիվացիայով, մյուս կողմից՝ այն առաջադրանքների անհրաժեշտ փորձաքննություն է, հեռանկարով, որ դրանք հետագայում կարող են ներմուծվել նաև միասնական քննությունների թեստերում: Բերենք այդպիսի առաջադրանքի մեկ նմուշ 9-րդ դասարանի թեստերի ժողովածուից:

Եթե դու ժամանակին չգաս, մենք կգնանք առանց քեզ:

- a) If you don't come in time, we shall go without you.
- b) If you won't come in the time, we shall go without you.
- c) If you don't come on time, we go without you.
- d) If you wouldn't come in time, we don't go without you.

Ինչպես ասվեց, նոր թեստերում ավելացվել են նաև նոր տիպի առաջադրանքներ: Նշենք դրանցից մի քանիսը:

Առաջադրանքներից մեկը այսպիսին է. ձախ կողմում տրվում է չորս բառ, աջում՝ հինգ բառիմաստ, և պահանջվում է բառերի և բառիմաստների համապատասխանեցում: Առաջադրանքը ստուգում է բառերի իմաստային (հոմանիշների, նույնանունների) տարբերությունների ըմբռնումը, որից բխում է բառերի կիրարկությունը բառակապակցության կամ նախադասության մեջ, կապակցելիությունը այլ բառերի հետ և այլն: Բառերի տրված շարքը կարող է կազմվել հոմանիշներից, նույնանուններից, որոնց ճանաչումը սովորողների կողմից ենթադրել է տալիս նրա՝ բառի տեսքի ընկալման կարողությունը և բառագործածության սխալներից խուսափելու ունակությունը:

Մեկ այլ առաջադրանքում պահանջվում է գտնել նախադասության մեջ գործածված ավելորդ բառը: Այս առաջադրանքը ներմուծվեց՝ համարելու համար կապակցված խոսքի հմտությունը ստուգող առաջադրանքների խումբը: Նախկինում սա ընտրովի պատասխանով առաջադրանք էր: Հետագայում այն վերածվեց կարճ պատասխանով առաջադրանքի՝ բարդության աստիճանը բարձրացնելու նպատակով: Բերենք այդպիսի առաջադրանքների նմուշներ:

Ընտրել ավելորդ բառը:

Unfortunately, many university courses do not provide to students with the basic study skills they really need.

- a) many, b) to, c) with, d) really

Ընտրել այն նախադասությունները, որոնցում կա ավելորդ բառ:

1. Our team train day and night but so far we have had no success.
2. Mr. Mortimers assistant was seen to leave the office hurriedly.
3. I had read this evening that a new advertising agency has been founded.
4. I played so much football yesterday that I wore out of two pairs of boots.
5. If you want to make a woman to change her mind, you must agree with her categorically.

2008 թվականին անցկացված պետական ավարտական և միասնական քննությունների ընթացքում փաստորեն փորձարկվեցին նոր թեստերը: Բնական է այն, որ այդ քննությունների արդյունքները պիտի հաշվի առնվեին թեստերում նոր փոփոխություններ կատարելու համար: Անշուշտ, մինչ քննությունները թեստերը փորձարկվել էին, սակայն փորձարկումը որքան էլ նպաստի ինչ-ինչ կողմեր հստակեցնելուն, այնուամենայնիվ չի կարող ճշգրիտ և ամբողջական պատկեր տալ մի շարք պատճառներով: Փորձարկմանը մասնակցում են ավելի քիչ թվով աշակերտներ, իսկ թեստաբանության պատմությունից հայտնի է, որ որքան շատ է մասնակիցների թիվը, այնքան ստացված արդյունքը ավելի ճիշտ է արտացոլում իրավիճակը (փորձարկման մասնակիցների մի մասը ուղղակի չի նշում որևէ պատասխան կամ նշում է ինչ-որ պատահական պատասխան): Ուստի տարօրինակ չէ, որ միասնական քննություններից հետո բացահայտվեցին որոշ իրողություններ, որոնք ի հայտ չէին եկել փորձարկման ժամանակ:

Վերլուծության արդյունքում պարզվեց, որ առաջադրանքներից առնվազն երկուսը պետք է բացառել թեստերից մի քանի նկատառումներով: Օրինակ, թեստերում կար այսպիսի առաջադրանք՝ Ա2-ում տրվում էին մարդկանց կենսագործունեության տարբեր ոլորտներ նկարագրող հատվածներ և ոլորտների անուններ, և պահանջվում էր որոշել, թե որ հատվածը, որ ոլորտն է նկարագրում, գտնել անունների համապատասխանությունը ոլորտներին: Բերենք մեկ օրինակ:

Bill Gates is probably the richest man in America. He studied engineering and has now become the worlds most famous computer engineer. When he was 15, he invented a system for controlling traffic in Seattle. In 1975 he wrote a book on the computer language BASIC.

- a) Traffic b) People c) Engineering d) Cities

Այս պարբերության համար, որպես ճիշտ պատասխան տրված էր b) People տարբերակը, սակայն տրված մյուս տարբերակները՝ a) Traffic և c) Engineering ևս կարող են համարվել ճիշտ: Հետևաբար, այս երկու տարբերակները դժվար է միարժեք ճիշտ կամ միարժեք սխալ համարելը, քանի որ ըստ էության երկուսն էլ կարող են լինել նկարագրվող ոլորտի անվանումը: Ասվածը հանգեցնում է հետևյալ եզրակացությանը. իրար մոտ տարբերակներ դնելու դեպքում առաջադրանքի լուծումը դառնում է վիճելի, իրարից շատ հեռու տարբերակների դեպքում՝ օրինակ՝ d) Cities, թույլ: Արդյունքում ստացվում է ծավալուն առաջադրանք՝ փոքր արդյունավետությամբ և տարբերակման (դիսկրիմինացիայի) ցածր գործակցով: Դիսկրիմինացիան թեստաբանության առանցքային հասկացություններից է, թեստային առաջադրանքների վերլուծության կարևոր բաղադրիչներից

մեկը: Դա առաջադրանքի այն բնութագրիչն է, որով որոշվում է, թե ինչպես և որքանով է առաջադրանքը միմյանցից տարբերակում ուժեղ և թույլ մասնակիցներին: Եթե առաջադրանքը լավ են կատարել ամբողջ թեստից բարձր միավորներ հավաքած մասնակիցները, և չեն կատարել ցածր միավորներ հավաքած մասնակիցները, ապա դիսկրիմինացիան ունենում է դրական բարձր գործակից, հակառակ դեպքում՝ բացասական գործակից: Եթե առաջադրանքը հավասարապես լուծել են (կամ չեն լուծել) և՛ ցածր, և՛ բարձր միավորներ հավաքածները, ապա առաջադրանքի դիսկրիմինացիան մոտենում է զրոյին, այսինքն՝ առաջադրանքը տարբերակում չի կատարում ուժեղ և թույլ մասնակիցների միջև:

Բացի այդ, որոշ դեպքերում վիճելի էր լինում տվյալ հատվածին վերագրվող ոլորտը, կամ միևնույն ոլորտը կարող էր համապատասխանել մեկից ավելի հատվածների, կամ էլ, հակառակը՝ միևնույն հատվածին կարող էին համապատասխանել մեկից ավելի ոլորտներ:

Մեկ այլ առաջադրանքում տրվում էին անավարտ նախադասություններ և դրանց շարունակությունները, և պահանջվում էր գտնել, թե որ հատվածը որ նախադասության շարունակությունն է: Օրինակ՝

- | | |
|---|---|
| 1. By the time the baby is two months old, | a. the game will be played. |
| 2. Whether it rains or not | b. unless he has a deadline. |
| 3. Even though it controls all of our body movements, | c. it should be able to focus its eyes and coordinate stares. |
| 4. Tim rarely works on the weekend | d. the brain itself never moves. |

Առաջադրանքի թերությունն այն էր, որ ամեն մի նախադասության շարունակություն կամ դրանցից մեկ-երկուսը հիմնականում ակնհայտ էին: Ուստի առաջադրանքների այս պարզունակությունը չէր համապատասխանում ոչ միայն Բ մակարդակի պահանջներին, որում դրված էր, այլև առհասարակ համահունչ չէր թեստի ընդհանուր ուղղվածությանը: Թեստաբանական վերլուծությունը ցույց տվեց, որ առաջադրանքը ունի վատ կոռելացիա և տարբերակման (դիսկրիմինացիայի) ցածր գործակից: Վերափոխված առաջադրանքն այժմ ունի մեկ այլ տեսք, որն էլ ապահովում է Բ մակարդակին համապատասխան բարդություն: Կոռելացիան ևս թեստաբանական հասկացություն է: Նրա գործակցով որոշվում է, թե որքանով է առաջադրանքի արդյունքը համապատասխանում թեստի ընդհանուր արդյունքին:

Այսպիսով, թեստի կառուցվածքի, ինչպես նաև առաջադրանքների տիպերի լրամշակումը շարունակական գործընթաց է՝ գնահատման ձևերի՝ տվյալ ժամանակի պահանջներին համապատասխանության համատեքստում: Թեստաբանները պարբերաբար որոնում են գնահատման առավել արդյունավետ ուղիներ և ձևեր, որն էլ իր հերթին հանգեցնում է նոր թեստերի տեղծման և նրանց որակի բարելավմանը: Ակնհայտ է, որ պետական ավարտական և միասնական քննությունների համար նախատեսված անգլերենի թեստերը շարունակաբար վերանայվելու են՝ հաշվի առնելով ոչ միայն դրանց բովանդակությանը և գործառույթներին առաջադրվող պահանջները և չափանիշները, այլև թեստաբանության ոլորտում տեղի ունեցող վերջին զարգացումները:

Օգտագործված գրականություն

1. Սովորողների գնահատման հայեցակարգ, Երևան, 2005:
2. Tristan Lopez A. The Item Discrimination Index, 1998. Rasch Measurement Transactions.
3. L. Atoyán, R. Gasparyan From school to University, Yerevan, 2008.
4. Churchill, G.A., (1979). «A paradigm for developing better measures of marketing constructs», Journal of Marketing Research.

Իրավունքի դասավանդման մեթոդները և գնահատման ձևերը

Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումների գործընթացում բացառիկ կարևորություն ունի <<Հասարակագիտություն>> առարկան: Հասարակագիտության ուսուցանումը կարևոր նշանակություն ունի սովորողի քաղաքացիական դաստիարակության, քաղաքացու ձևավորման գործում: Այն ուսուցանվում է 8-12-րդ դասարաններում: Առանձնակի կարևորություն ունի 9-րդ դասարանում հասարակագիտության դասավանդումը, քանի որ նպատակն է դաստիարակել իր իրավունքներն իմացող, դրանց համար պայքարող, իր պարտականություններն ու պատասխանատվությունը գիտակցող, իրավական մշակույթ ունեցող քաղաքացի: Իրավունքի ուսումնական նյութի յուրացումը որոշակի բարդություններ ունի, ինչը պայմանավորված է դրանում բազմաթիվ յուրահատուկ իրավաբանական եզրույթների և հասկացությունների առկայությամբ: Եթե ուսուցիչը ուսուցումը կառուցում է միայն գիտելիքների փոխանցման և բոլորին միատեսակ մոտեցում ցուցաբերելու վրա, ապա երբեք չի կարող հասնել լավ արդյունքի, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի ընկալման առանձնահատկություններ և յուրովի է ընկալում ուսուցչի ուսուցանածը: Ուսուցման ժամանակակից տեսությունները համոզիչ կերպով ապացուցում են, որ միայն գիտելիքների փոխանցումը դեռևս սովորեցնել չի նշանակում: Ուշադրությունը պետք է սևեռել այն կարևոր փաստին, որ այսօր մանկավարժական գիտության մեջ տեղի են ունենում փոփոխություններ, որոնց արդյունքում փոխվում են կրթության կազմակերպման ձևերը, մեթոդները և միջոցները, ինչն էլ նպաստում է ուսուցման գործընթացի և սովորողների ուսումնառնական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

9-րդ դասարանում հասակագիտություն առարկան դասավանդելիս առանձին թեմաների ուսուցման համար կարևոր է մեթոդիկայի ճիշտ ընտրությունը:

Ուսուցման տեսանկյունից առանձնացվում են իրավունքի դասերի հետևյալ տեսակները՝

- նորամուծության դաս,
- նոր նյութի հետազոտման դաս,
- համակցված դաս,
- ստուգողական դաս,
- գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման դաս,
- կրկնողական դաս:

Իրավական ուսուցման մեջ շատ տարածված են համակցված տիպի դասերը: Առանձնացվում են դրանց հետևյալ կառուցվածքային բաղադրատարրերը.

1. կազմակերպչական մաս,
2. սովորողներին պարապմունքի նպատակների ներկայացում,
3. նախորդ թեմայի ուսումնասիրումից հետո աշակերտներին ստուգելու նպատակով հանձնարարությունների ներառումը հարցում,
4. նոր նյութի ուսումնասիրում,
5. ուսումնասիրված նյութի ամրապնդում, դասի արդյունքների ամփոփում:

Ավագ դասարաններում իրավունքի ուսումնասիրման ժամանակ անցկացվում են դասախոսություն-դասեր, սեմինարներ կամ պրակտիկ պարապմունքներ:

Այս տեսակի դասերը նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեության զարգացմանը: Կարևոր նշանակություն ունի իրավական կրթության տարբեր մեթոդների կիրառումը, որոնցով ակտիվացվում է աշակերտների ինքնուրույն աշխատանքը դասերին: Այն ճանաչողական գործունեություն է, ունի նպատակ, արտահայտման ձև և ավարտվում է արդյունքների ստուգմամբ:

Վերջին տարիներին լայնորեն կիրառվում է տարբերակված ուսուցումը, որի դեպքում աշակերտները միավորվում են ըստ իրենց ընդունակությունների, հետաքրքրությունների: Աշխատելով յուրաքանչյուր աշակերտի հետ առանձին՝ իրավունքի ուսուցիչը կատարում է իրավական ուսուցման անհատականացում:

Իրավական ուսուցման ժամանակ առանձնացնում ենք աշակերտների ինքնուրույն գործունեության երկու փուլ.

1. Առաջին փուլում պետք է աշակերտներին սովորեցնել ինքնուրույն աշխատանքի հնարքը:
2. Ձեռք բերելով ինքնուրույն աշխատանքի հնտություններ՝ աշակերտը պատրաստվում է հետագոտական աշխատանքի:

Իրավունքի դասավանդումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով դպրոցում հարկավոր է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները աշակերտների ինքնուրույն ստեղծագործական գործունեության համար: Ուսուցման ընթացքում ստեղծագործական մթնոլորտի ստեղծման համար անհրաժեշտ է՝

- աշակերտներին ծանոթացնել ստեղծագործական աշխատանքի հմտություններին,
- կատարել գաղափարների վերլուծություն (որոշ գաղափարներ կարող են առաջանալ հանկարծակի, կարևոր է դրանք ամրապնդել, հիշել և հետագայում վերլուծել)
- ձեռնպահ մնալ գնահատականներից (աշակերտները ավելի շատ պետք է մտածեն հանձնարարությունը կատարելու մասին, ոչ թե գնահատականի),
- տալ ինքնուրույն մտածելու հնարավորություն,
- ընդլայնել իրավական գիտելիքների պաշարը (աշակերտներին ծանոթացնել իրավական կոնկրետ նորմերին, որպեսզի կարողանան լուծել ստեղծագործական խնդիրները):

Իրավունքի ստուգողական դասը նպատակահարմար է անցկացնել տվյալ թեմայի ուսումնասիրումից հետո: Աշակերտներին առաջարկվում է կատարել գրավոր հանձնարարություններ, լուծել խնդիրներ, բացատրել այս կամ այն իրավիճակում մարդկանց իրավաբանական վարքագիծը և այլն: Գիտելիքների ստուգման և հաշվառման դասերին աշակերտներին պետք է առաջարկել թեստային հանձնարարություններ, ընդ որում, դրանց ստուգումը կազմակերպել դասարանում: Ուսումնական տարվա վերջում անցկացվում են կրկնողական բնույթի եզրափակիչ դասեր: Դրանց գլխավոր նպատակը աշակերտների՝ հիմնական իրավական հասկացությունների վերաբերյալ գիտելիքների ամրապնդումն է: Անհրաժեշտ է կազմել երեխաների գիտելիքների և հմտությունների ամրապնդման, նրանց ստուգման և գնահատման համակարգ: Աշակերտներին գնահատելիս պետք է հաշվի առնել ուսումնական գործունեության ամբողջականությունը, հարցերին պատասխանելու աստիճանը, ակտիվությունը, ինքնուրույնությունը: Ուսուցիչը պետք է մտքում արժևորի, գնահատի սովորողի ուսումնական գործունեությունը: Գիտելիքների գնահատման և ստուգման

համար անհրաժեշտ է հաշվի առնել դրանց ճշգրտությունը, ամբողջականությունը, գիտակցվածությունը և համակարգվածությունը: Աշակերտներին գնահատելիս ուսուցիչը պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքներով՝

1. Գնահատականը պետք է օբյեկտիվ լինի, այսինքն, համապատասխանի աշակերտների գիտելիքներին, հմտություններին, կարողություններին:
2. Աշակերտին անհաժեշտ է բացատրել, թե ինչու նրա պատասխանը գնահատվեց հենց այդպես, ինչպիսի սխալներ է թույլ տվել և այլն:
3. Գնահատելիս պետք է հաշվի առնել պատասխանի ամբողջականությունը, խոսքի մեջ իրավական հասկացություններ օգտագործելու հմտությունը: Սովորողների պատասխանների որակական գնահատումը միշտ պետք է նախորդի միաորներով քանական գնահատականին:

<<Հասարակագիտություն>> առարկայի դասավանդման սեփական փորձից ելնելով՝ կարծում եմ, որ այս առարկայի ուսուցումը պետք է լինի ակտիվ: Պասիվ ուսուցումով հնարավոր չէ դաստիարակել պատասխանատու, երկրում տեղի ունեցող գործընթացներին ակտիվորեն մասնակցող քաղաքացի: Քննարկումները, բանավեճերը, ստեղծագործական ազատությունը հասարակագիտության դասավանդման նախապայմաններից են: Դասի կազմակերպման ձևը աշակերտի համար պետք է նաև անակնկալ լինի, միօրինակությունը նվազեցնում է ուսման շարժառիթը, խաթարում մտածողության զարգացումը: Այդ առումով՝ մեթոդների, հնարների հարուստ զինանոցի կիրառումը կարող է սովորողների համար դասը դարձնել սպասված, բայց նաև ինչ-որ առումով անսպասելի:

Հասմիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գառնի բանավանի դպրոցի ֆրանսերենի ուսուցչուհի

Գնահատումը որպես սովորողի առաջընթացի կարևոր խթան

Սովորողների գնահատումը հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքները ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման և տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է: Գնահատումը պետք է լինի հուսալի, հավաստի, արդյունավետ և օգտակար: Այն անհրաժեշտ է կրթության որակը բարելավելու, յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու, ակտիվացնելու և շարունակաբար զարգացնելու համար:

Գոյություն ունի գնահատման երկու հիմնական տեսակ՝ ամփոփիչ գնահատում և ձևավորող գնահատում: Ամփոփիչ գնահատման նպատակն է աշակերտի առաջադիմության գնահատումը ժամանակի մի որոշակի հատվածում և առաջադիմության առկա մակարդակի գրանցումը: Ձևավորող գնահատման նպատակն է ժամանակի որոշակի հատվածում աշակերտի կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակի ստուգումը, որոշելու համար, թե ինչպես պետք է կատարելագործել նրա կողմից նյութի յուրացումը:

Գնահատման հիմնական սկզբունքներն են՝

- օբյեկտիվություն,
- հուսալիություն,
- անկողմնակալություն,
- հավաստիություն,
- հիմնավորվածություն,
- մատչելիություն,
- թափանցիկություն,
- գնահատում՝ հիմնվելով դրական արդյունքի վրա:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

- ստուգում,
- ուսուցանում,
- ուղղորդում,
- դաստիարակում,
- զարգացում:

Գնահատում, գնահատման տեսակները

Նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները կիրառում են տարբեր անհատական մոտեցումներ (խրախուսում, ոգևորում)։ Երեխաների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները այլ կերպ չեն գնահատվում:

Հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններում կիրառվում է գնահատում, որը հանդիսանում է ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց: Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցի կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը: Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործումն ու ուսման որակի վերահսկումն է: Այն նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը կիրառվում են երկու՝ իրար փոխլրացնող ձևեր՝

ա) ուսուցանող կամ ձևավորող գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և սովորաբար ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկներով, դիտողություններով կամ մեկնաբանություններով,

բ) ամփոփիչ միավորային գնահատում, երբ ստուգվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը: Վերջինս իրականացվում է տվյալ ուսումնական նյութն ավարտելուց հետո և ունի վերահսկող դեր:

Ուսուցանող գնահատում

Ուսուցանող գնահատումը կատարվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, այն հետապնդում է սովորողի առաջադիմության բարձ-

բացման և կրթության որակի բարելավման նպատակ: Ուսուցանող գնահատման մեկ շրջափուլը կարելի է ներկայացնել այսպես.

դասավանդում դպրոցում (ուսումնառություն), ուսուցանող գնահատում (հետադարձ կապ), բարելավված ուսուցում:

Ուսուցանող գնահատումը ուսուցչին հնարավորություն է տալիս պարզելու ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակելու հետագա գործողությունները՝ յուրաքանչյուր սովորողի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու համար: Գնահատման այս ձևում կարևորվում է հետադարձ կապի առկայությունը: Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում առաջացած թերությունների շտկման գործողությունների թե՛ սովորողի և թե՛ ուսուցչի համար: Այս դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը:

Ուսուցանող գնահատման նպատակով երաշխավորվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝

- ✓ բանավոր հարցում,
- ✓ գրավոր աշխատանք տանը և դպրոցում,
- ✓ ինքնուրույն աշխատանք,
- ✓ բաց հարցերով քննարկում,
- ✓ ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
- ✓ խմբային աշխատանք:

Ամփոփիչ գնահատում

Ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտելու համար գործածության երաշխավորվող չորս տեսակներից (բանավոր հարցում, գործնական աշխատանք, թեմատիկ գրավոր աշխատանք, կիսամյակային ամփոփիչ աշխատանք) յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս ստուգելու սովորողի, խմբի, դասարանի և դպրոցի կողմից հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի պահանջների կատարման ընթացքը, յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների փաստացի վիճակը, նրա արժեքային որակները:

Բանավոր հարցում: Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով՝ բանավոր խոսք, վերարտադրություն, հաղորդակցություն, համագործակցություն, լեզվամտածողություն, գիտելիքի յուրացում, տրամաբանություն, ստեղծագործական մտածողություն:

Գործնական աշխատանք: Ուսումնական ծրագրով նախատեսված տարբեր տիպի և բնույթի գործնական առաջադրանքներ, որոնք պետք է գնահատվեն:

Թեմատիկ գրավոր աշխատանք: Յուրաքանչյուր թեմայից սովորողի ձեռքբերումները բացահայտելու համար նախատեսված է ծավալուն գրավոր աշխատանք: Այն պետք է կազմված լինի տվյալ թեմայից սովորողին ներկայացվող առարկայական չափորոշչային պահանջների յուրացման աստիճանը ստուգող առաջադրանքներից:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանք: Կիրառվում է ուսումնական կիսամյակի վերջում, ամբողջ ծրագրային նյութն ուսումնասիրելուց հետո: Կարող է կիրառվել բանավոր կամ գրավոր տարբերակը:

Եվրոպական լեզվական թղթապանակ

Վերջերս Եվրախորհրդի լեզվաքաղաքականության մեջ լայն տարածում է գտել <<Եվրոպական լեզվական թղթապանակը>> (ԵԼԹ): Դա մի փաստաթուղթ է, որը ստեղծվել է ժամանակակից լեզուների իմացության և իրազեկության համաեվրոպական համակարգի համապատասխան և արտացոլում է Եվրախորհրդի լեզվաքաղաքականության և լեզվակրթության սկզբունքները՝

- ապահովել բազմալեզվությունն ու մշակութային բազմազանությունը,
- խթանել տարբեր լեզուների նկատմամբ հանդուրժողականությունը,
- խթանել սովորողների ինքնուսուցումն ու ինքնագնահատումը,
- սովորողների մեջ ձևավորել սեփական ուսումնառության պատասխանատվությունը ստանձնելու, իր ուսումնական գործընթացի մասին դատելու ունակություն,
- նպաստել սովորողների կողմից սեփական ուսումնական գործընթացը պլանավորելու կարողությունների ձևավորմանը:

Եվրոպական լեզվական թղթապանակի կիրառման նպատակն է օգնել սովորողին վերլուծելու և գրի առնելու լեզու սովորելու ընթացքում իր կատարած աշխատանքը, ծանոթանալու աշխարհի բազմալեզվությանը: ԵԼԹ-ն կոչված է սատարելու և խթանելու տարբեր լեզուներ սովորելու մարդկանց ձգտումը, խորացնելու լեզուների ուսումնասիրության նպատակի մասին նրանց գիտելիքները, գնահատելու սովորողի լեզվական իմացության, ինչպես նաև ավելացնելու ռազմավարությունների իմացության և կիրառման մակարդակը:

ԵԼԹ -ն կազմված է հետևյալ մասերից՝

- <<Իմ լեզվական անձնագիրը>>,
- <<Իմ լեզվական կենսագրությունը և հաջողությունները>>,
- <<Իմ գանձատուփը>>:

Առաջինում սովորողը գրում է ընդհանուր տեղեկություններ իր մասին, թվարկում է իր իմացած լեզուները, նշում լեզուների իմացության իր մակարդակը:

Երկրորդ մասի ներառման նպատակն է օգնել սովորողին ինքնուրույն արձանագրելու և գնահատելու ուսումնասիրվող օտար լեզուների իմացության իր մակարդակը:

Թղթապանակի << Իմ գանձատուփը>> բաժինը պարունակում է այն, ինչ սովորողը կցանկանար հավաքել, պահպանել և ցույց տալ ուրիշներին: Դրանք կարող են լինել լուսանկարներ, նամակներ, ինքնուրույն աշխատանքներ, հավաստագրեր, պատվոգրեր և այլն:

Արձանագրելով սեփական առաջընթացը և ուսումնառության արդյունքները՝ դպրոցականները տեսնում են նաև իրենց գործունեության բարելավման հնարավոր հեռանկարները, ինչը նպաստում է նրանց զարգացմանը:

Թեստը որպես չափման գործիք

Որպեսզի գնահատենք աշակերտի կամ ցանկացած անձի որևէ գործունեություն, հարկավոր է, որ մենք չափենք այն: Դրա համար նախ պետք է որոշենք, թե ինչ ենք չափում, ինչու ենք չափում, ինչպես ենք չափում:

<< Չափումը >> գնահատականի թվանշային արտահայտությունն է, թվերի համակարգված վերագրումը անհատին կամ անհատի գործունեության արդյունքին:

Ուսումնառության գործընթացում թեստի կիրառումը հանդիսանում է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և չափման գործիք: Թեստային ստուգումն ունի մի շարք առավելություններ.

- ✓ հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր չափաբաժիններով ստուգելու մեծածավալ ուսումնական նյութի յուրացումը,
- ✓ արագ գնահատելու մեծ թվով սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը,
- ✓ նվազեցնում է սուբյեկտիվ գործոնի աստիճանը:

Թեստը աշակերտներին գնահատելու և ուսման արդյունքը արժևորելու նպատակով խնամքով ընտրված ուղղորդող ցուցումներով առաջադրանքների շարք է: Թեստը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի առաջադրանքներից, որոնք էլ իրենց հերթին տարբեր հարցերից ու կետերից: Յուրաքանչյուր կետ բացահայտում է տվյալ առաջադրանքը կատա-

րողի ունակություններն ու հմտությունները: Շատ կարևոր է, որ թեստում պահանջը ձևակերպվի պարզ, հստակ և միանշանակ:

Թեստի տեսակները

Կախված թեստի նպատակից՝ տարբերակում ենք թեստի հետևյալ տեսակները՝ *ձևավորող, հայտորոշիչ և ամփոփիչ*:

Ձևավորող թեստեր օգտագործելու հիմնականում նպատակ ունեն խթանել և օգնել սովորողին բարելավելու իր առաջադիմությունը: Դրանց կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզելու ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարություններն ու բացթողումները՝ ապահովելով հետադարձ կապը: Քանի որ այս թեստերի կիրառման նպատակը գիտելիքների հաղորդումն ու ամրապնդումն է, դրանք օգտագործվում են դասավանդման ժամանակ նյութի մատուցման ու ամրապնդման փուլերում և այլ կերպ կոչվում են ուսուցանող: Ձևավորող թեստի հարցերը պետք է լինեն ուսուցանող բնույթի: Աշակերտի ցանկացած պատասխան ընդունելի է: Անգամ եթե նրա պատասխանը չի գոհացնում ուսուցչին, միննույն է, ուսուցիչը պետք է արժևորի այն: Սովորողի պատասխանին ուսուցչի արձագանքը չի կարող լինել «այո» կամ «ոչ» , այն պետք է ուղեկցվի մեկնաբանություններով, այսինքն՝ ուսուցանող լինի:

Հայտորոշիչ թեստը ձևավորող թեստի մի տեսակ է, որը կիրառվում է ուսումնառության սկզբում կամ ընթացքում, սովորողի թույլ կողմերը հայտնաբերելու, ուսուցումը բարելավելու համար: Հայտորոշիչ թեստերը լինելով ընթացիկ ստուգման ձև՝ հաճախ օգտագործվում են նոր թեմա անցնելուց առաջ՝ սովորողի նախնական իրազեկության աստիճանը պարզելու և դրա հիման վրա նյութի ուսուցումը կազմակերպելու համար: Այս թեստի հիմնական նպատակը ոչ թե գնահատումն է, այլ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց ուսուցման բարելավման նպատակով:

Հայտորոշիչ թեստի կարևոր առանձնահատկություններն են՝

- ստուգում են մեկ հիմնական գիտելիք,
- թեստի առաջադրանքերը ձևակերպվում են կարճ, պարզ, մատչելի,
- թեստի առաջադրանքերի կատարման տևողությունը կարճ է՝ 7-20 րոպե,
- արդյունքները պետք է վերլուծվեն ոչ ուշ, քան հաջորդ դասին,
- սովորողների մեծ մասի կողմից թեստը հեշտությամբ պիտի հաղթահարվի:

Ամփոփիչ թեստը, ի տարբերություն ձևավորող և հայտորոշիչ թեստերի, հիմնականում ստուգողական բնույթի է: Հանրակրթական դպրոցում ամփոփիչ թեստերը կիրառվում են՝

- մի քանի թեմաներ ստուգելու և ամփոփելու նպատակով,
- կիսամյակ կամ ուստարի ամփոփելու նպատակով,
- ընտրության նպատակով (օլիմպիադա, միասնական քննություն),
- վկայականի շնորհման նպատակով:

Ուստի ամփոփիչ թեստերի կիրառումը ենթադրում է ավելի լայն ու խորը գիտելիքների ստուգում, առաջադրանքների տեսակների բազմազանություն, թեստավորման ավելի երկար ժամանակ:

Քանի որ ամփոփիչ թեստերի կիրառման հիմնական նպատակը տվյալ առարկայից սովորողի ծրագրային նյութին տիրապետելու մակարդակի ճշտումն ու գնահատումն է, դրանց առաջադրանքներն ու հարցերը պետք է կազմվեն առանձնակի ուշադրությամբ ու խնամքով: Դա նշանակում է, որ թեստ կազմելիս պետք է ապահովվեն թեստի հուսալիությունը, արդյունավետությունն ու հավաստիությունը:

Հուսալի նշանակում է ստուգման արդյունքում գրանցված գնահատականի հարաբերական կայունություն: Այսինքն, այդ թեստերով ստուգման արդյունքները պետք է փոփոխական չլինեն:

Արդյունավետ է համարվում այն թեստը, որով հաջողությամբ չափվում է ստուգվողի գիտելիքների մակարդակը, հմտությունների սահմանը: Արդյունավետ թեստ նշանակում է նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով առավելագույն արդյունք ապահովել: Բովանդակային տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը:

Հավաստի նշանակում է, որ թեստի արդյունքները պետք է վավերական լինեն, այսինքն՝ ներկայացնեն սովորողի այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք նախատեսված էին ստուգել: Այլ կերպ ասած՝ թեստի հավաստիությունը իր նպատակին ճիշտ ծառայելն է:

Օտար լեզուների թեստերի առանձնահատկությունները

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ ուսուցանվող նյութի, նաև թեստի բովանդակությունը համապատասխանի սովորողի հետաքրքրություններին, խթանի սովորելու ցանկությունը: Որպեսզի լեզվական նյութը ապահովի այս պայմանը, այն պետք է ունենա հաղորդակցական ուղղվածություն և սովորողի մեջ զարգացնի հաղորդակցման բոլոր բաղադրիչները՝ ունկնդրել, խոսել, գրել, ընթերցել: Խոսքային գործունեության տարբեր տեսակներին վերաբերող թեստերը նպաստում են ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը,

ընդլայնում սովորողի մտահորիզոնը, օգնում հաղորդակցական կարողությունների ձևավորմանը:

Խոսքային գործունեության յուրաքանչյուր ձև համապատասխան առաջադրանքների և հարցերի միջոցով պետք է արժարժվի օտար լեզուների թեստերում:

Օտար լեզուների թեստ կազմելիս պետք է՝

- ընդգրկել խոսքային գործունեության բոլոր տեսակները,
- ապահովել հաղորդակցական ուղղվածություն,
- հիշել, որ քերականությունը միջոց է և ոչ թե նպատակ,
- ընտրել հետաքրքիր, մոտիվացնող, ներգրավող առաջադրանքներ,
- առաջադրանքները ձևակերպել այնպես, որ դրանք խթանեն ու հետաքրքրեն աշակերտին,
- ներմուծել երկրագիտական և հանրամշակութային գիտելիքներ:

Թեստի կառուցման կանոնները

Նախքան թեստը գրելը հարկավոր է պատասխանել հետևյալ հարցերին.

- Ո՞ւմ եմ թեստավորում:
- Ինչո՞ւ եմ թեստավորում:
- Ե՞րբ եմ թեստավորում:
- Ի՞նչ հմտություններ եմ ստուգում:
- Քանի՞ առաջադրանք եմ տալիս:
- Ինչպիսի՞ հարցեր եմ ընդգրկում:
- Բարդության աստիճանը ինչպիսի՞ն է:
- Հարցերի կշիռը ինչպիսի՞ն է:
- Ինչպե՞ս բաշխել միավորները:
- Ինչպե՞ս գնահատել:
- Ինչպե՞ս արժևորել:
- Որքա՞ն ժամանակ հատկացնել:

Ինչպես ապահովել թեստի դրական արդյունքը բոլոր աշակերտների համար:

- Կարդալ թեստը բարձրաձայն:
- Բացատրել այլ նախադասություններով:
- Խնդրել, որ աշակերտները կրկնեն:
- Ապահովել ժամացույցի առկայությունը ժամանակի վերահսկման համար:
- Տեսանելիորեն ցույց տալ խնդիրը:
- Տալ ընտրության հնարավորություն:
- Գնալ կոնկրետից դեպի վերացականը:

- Թույլ տալ աշակերտներին օգտվել գրառումներից:
- Աշակերտի լրացնելուց հետո անմիջապես անդրադառնալ նրա աշխատանքին:
- Հարցերի յուրաքանչյուր խմբի համար հաշվարկել միասնական միավոր արժեք:

Ինքնագնահատում

Աշակերտի կրթական առաջընթացի համար կարևոր հիմք են նրա ճիշտ պատկերացումներն ուսումնական նյութի իր իմացության մակարդակի ու սեփական ուժերով թերությունները վերացնելու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատումը:

Որպեսզի հստակ ընկալվի, թե ինքնագնահատումը որքանով կարող է նպաստել աշակերտի լավ սովորելուն, անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել և օգնել՝

- որպես սովորող ինքնուրույն պարզելու իր գիտելիքների մակարդակը,
- առաջադրանքը հստակ պատկերացնելուն,
- փնտրելու սեփական ուսման որակը բարելավելու միջոցներ:

Ինքնագնահատման նպատակն է ընդլայնել աշակերտի ճանաչողության, արժեքային համակարգի շրջանակները, ինչպես նաև արմատավորել պատասխանատվության գիտակցումը: Առաջադրանքի վերլուծությունից հետո կարևոր է, որ աշակերտը տեսնի և հասկանա իր թերությունները և դրանց շտկման համար դրսևորի ձգտում, կամք և կարողություն: Օրինակ, եթե ուսուցչի հետ միասին կարդում են շարադրությունը, և աշակերտը կարողանում է նկատել իր սխալները և ասել, թե հետո ավելի լավ ինչպես կգրեր, դա ինքնագնահատման մի դրսևորում է:

Որպեսզի ուսուցանելը լինի արդյունավետ, սովորողին պետք է հասցնել այն գիտակցության, որ նրա դատողությունը միտված լինի նվազեցնելու իր ձեռքբերումների առկա և նախատեսված պաշարների միջև եղած տարբերությունը: Այսպիսի որակներով օժտված աշակերտն ուսուցչի օգնությամբ կարող է վերացնել իրական և ցանկալի վիճակների միջև եղած տարբերությունը:

Աշակերտն աստիճանաբար պետք է պատասխանատու դառնա իր սովորելու համար: Սովորողին մտածողության այդպիսի աստիճանի հասցնելը ու կլինի լավագույն միջոցը, որը կնպաստի կրթության որակի բարելավմանը և կիսթանի նրա առաջընթացը:

Եթե աշակերտը կատարում է ամենօրյա առաջադրանքները, բայց չի գիտակցում, թե որն է սովորելու նպատակը, ապա նա չի կարողանա լավ պատկերացնել իր կատարած աշխատանքի իմաստը և գնահատել սեփա-

կան առաջընթացը: Այդ բացը լրացնելու համար նա պետք է սեփական ուժերով կամ ուսուցչի օգնությամբ փորձի հասկանալ այն ուսումնական նպատակը, որին հասնելու համար ինքը ջանքեր է ներդնում:

Ինքնագնահատումը սովորողից պահանջում է իր կատարած աշխատանքների նկատմամբ հետադարձ դատողություններ անելու կարողություն, որն արդյունավետ սովորելու և առաջընթացը խթանելու համար կարևոր նախապայման է:

Եզրակացություն

Այսպիսով, գնահատումը սովորեցնելու անբաժանելի մասն է կազմում: Այն չի կարող այդ գործընթացից դուրս լինել: Իսկ դպրոցում գնահատման համար ամենամեծ պատասխանատվություն կրող անձը ուսուցիչն է: Սովորողի աշխատանքի գնահատումը նրա դժվար պարտականություններից մեկն է: Մենք միշտ ակնկալում ենք գնահատված տեսնել մեր յուրաքանչյուր աշխատանքը: Գնահատումը սովորողի հետ մեր հաղորդակցման կարևորագույն միջոցներից է, այն հարաբերականորեն ճիշտ տեղեկություն է տալիս սովորողի՝ ուսման մեջ առաջադիմության մասին և ծառայում որպես նրա ջանքերի խրախուսման միջոց:

Անհրաժեշտ է նշել, որ երբեք հնարավոր չէ բացարձակ գնահատել, բայց ուսուցիչը պետք է կարողանա հիմնավորել իր նշանակած գնահատականը: Գնահատման նպատակը ոչ թե լավ կամ վատ սովորողի տարբերակումն է, այլ ուսումնառության բարելավումը և սովորողի առաջընթացը: Գնահատումը պետք է խթան հանդիսանա այդ ամենի համար:

Գնահատումը միայն ուսուցման արդյունքների ստուգման և վերահսկման միջոց չէ: Այն ուսումնական գործընթացի անբաժանելի մասն է, սովորողի ուսումնական գործունեության առաջընթացը ապահովելուն նպատակաուղղված աշխատանք: Ուսուցչի կողմից տրված ցանկացած աշխատանք պետք է ստուգվի ու գնահատվի, հակառակ դեպքում աշակերտը անտարբերություն կդրսևորի, և առաջընթացի փոխարեն կունենանք հետընթաց: Դրանից խուսափելու համար ուսուցիչը պետք է կարողանա գնահատման եղանակները համապատասխանեցնել իր կողմից օգտագործվող ուսուցման մեթոդներին, կարողանա մշակել գնահատման մեթոդներ և հիմնավորել ստացված արդյունքները, կարողանա գնահատման ժամանակ դրսևորել անհատական մոտեցում:

Օգտագործված գրականություն

1. Լեզուների իմացության/իրագրելության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Երևան, 2005:
2. Ավետիսյան Զ., Գրիգորյան Կ. և ուրիշներ, Ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Երևան, 2008:
3. Ավետիսյան Զ., Կարապետյան Ա., Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, Երևան, 2009:
4. Միքայելյան Օ., Միքայելյան Ս., Ընթացիկ գնահատման համակարգ, Երևան, 2010:

Ինտեգրված դասը որպես ուսուցման արդյունավետ միջոց

Ժամանակակից ուսուցման մեթոդաբանական հիմքը ինտեգրումն է (լատ. Integration – վերականգնում, համալրում), որը որպես ուսուցման գործընթացում աշխատանքի նորարական ձև և արդյունավետ միջոց, հնարավորություն է տալիս ընկալելու աշխարհը ամբողջության մեջ: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, որովհետև նրանց տալիս է լիաժեք պատկերացում ուսումնական նյութի վերաբերյալ: Ինտեգրված դասը երկու ուսումնասիրվող նյութերի խաչմերուկն է, որին հետևում է վերելքը, ապա գագաթը՝ նպատակային դասը:

Ինտեգրումը հոգեբանամանկավարժական գրականության մեջ ընկալվում է որպես մի գործընթաց, որի միջոցով համադրվում են բոլոր ընդհանուր տարրերը, ամբողջականություն կազմող հատկությունները:

Ուսուցման բովանդակության ինտեգրման խնդրին անդրադարձել են դեռևս Յ. Կոմենսկու ժամանակներում, սակայն համակարգված ուսումնասիրությունները սկսվել են միայն XX դարի երկրորդ կեսին:

Շվեյցարացի մանկավարժ Յ. Պեստալոցցին իմացության ելակետը համարում էր երեխայի կողմից շրջապատող աշխարհի իրերի և երևույթների զգայական ընկալումը: Ըստ նրա, ուսուցումը պետք է հիմնվի դիտման և փորձի վրա, այնուհետև բարձրանա մինչև եզրակացությունների և ընդհանրացումների մակարդակ: Ուսուցման խնդիրն է ճշտել, կարգավորել զգայարանների օգնությամբ ձեռք բերված պատկերացումները, դրանք հասցնել պարզ հասկացությունների աստիճանի: Պեստալոցցին մի շարք արժեքավոր մտքեր է արտահայտել երեխայի ֆիզիկական, աշխատանքային, բարոյական մտավոր դաստիարակության վերաբերյալ, պահանջել է ընդարձակել կրթության բովանդակությունը դպրոցում, կրթությունը սերտորեն կապել կյանքի հետ:

Ինտեգրման փայլուն օրինակ է Վ. Սուխոմլինսկու «Բնության մեջ մտածողության դասերը» փորձը, որը նա անցկացնում էր վեցամյա երեխաների հետ Պավլիշյան դպրոցում: Այս ինտեգրումը ճանաչողական գործունեության հիմնական տեսակն է:

Ինտեգրված ուսուցման տեխնոլոգիան հատկապես արդիական է այսօր, քանի որ նպաստում է կրթական արդի խնդիրների հաջող իրականացմանը: Ինտեգրված ուսուցումը նախատեսում է սկզբունքորեն նոր, ուսումնական նյութի բովանդակության, կրթական ծրագրերին, նոր տեխնոլոգիաներին համապատասխան տեղեկատվության ստեղծում: Ինտեգրված դասը թույլ է տալիս լուծել մի շարք խնդիրներ, որոնք դժվար է իրականացնել ավանդական մեթոդների շրջանակներում: Ահա այդ խնդիրներից մի քանիսը.

- մոտիվացիայի բարձրացումը ուսումնական գործընթացում,
- հասկացությունների դիտարկում, որոնք կիրառվում և բացատրվում են տարբեր առարկաների ուսումնասիրության ոլորտում,
- տրամաբանորեն շաղկապված գործողություններով նպատակաուղղված աշխատանքի կազմակերպում (համեմատում, ընդհանրացում, համադրում, գուգորդում, դասակարգում, վերլուծում և այլն),
- տարաբնույթ խնդիրների լուծման ժամանակ միջառարկայական կապերի ստեղծում և կիրառում:

Ինտեգրված դասերը ապահովում են սովորողների իմացական ակտիվության ու շահագրգռվածության բարձր մակարդակ, նպաստում մեծ ծավալով նյութ ընկալելուն:

Առաջին հերթին պետք է ուսումնասիրել այն առարկաների ուսումնական ծրագրերը, որոնք պետք է ինտեգրվեն, որպեսզի բացահայտվեն ուսումնասիրվող թեմաները: Պարտադիր չէ, որ նրանք լինեն նույնական, կարևոր է բացահայտել ընդհանուր ոլորտները և ընդհանրացնել նախատեսված նպատակները: Այդ գործընթացում վերացվում է եզրույթների (տերմինների) և չափման միավորների անհամաձայնությունը: Դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ, որ դասի նպատակը պետք է ուղղված լինի թեման ավելի խորությամբ ուսումնասիրելուն և տեսական գիտելիքների գործնական ամրապնդմանը, որը անհրաժեշտ է ուսուցանող նյութի լիարժեք յուրացման համար:

Երկրորդը. եթե այդ դասը պատրաստում են երկու ուսուցիչներ, դասապլանի մշակման ժամանակ պետք է հստակ սահմանազատել ժամանակի բաշխումը նրանց միջև և խստորեն պահպանել յուրաքանչյուրին հատկացված ժամանակը: Այս կանոնին պետք է հետևեն հատկապես այն ուսուցիչները, որոնք իրենց առաջին քայլերն են կատարում ինտեգրված դասերի կազմակերպման գործում՝ չունենալով համագործակցելու համար անհրաժեշտ հմտություններ: Ոչ փորձառու ուսուցիչները երբեմն մոռանում են, որ ինտեգրված դասերի ժամանակը կրճատվում է և ճիշտ չեն բաշխում այն:

Երրորդը. պետք է հատուկ ուշադրություն դարձնել ինտեգրված դասի կազմակերպմանը, մանրամասն տեղաբաշխել անհրաժեշտ կահա-

վորումը, որպեսզի այն կիրառելիս աշակերտները չշեղվեն բուն նյութից, սովորողների գործնական աշխատանքի կազմակերպման ձևերը մշակել և նախօրոք նստարանները դասավորել դասի ընթացքում կիրառվող մեթոդներին համապատասխան: Այս ամենը անհրաժեշտ է ժամանակի ռացիոնալ բաշխման համար:

Չորրորդը. չպետք է մոռանալ, որ ինտեգրված դասերի անցկացման համար ուսուցիչներից պահանջվում է լուրջ, մանրակրկիտ նախապատրաստում դասին: Անհրաժեշտ է մանրամասն քննարկել այդպիսի դասերի ժամանակ կիրառվող մեթոդները և հնարները: Այդպիսի դասերը շատ նման են թատերական ներկայացման, հետևաբար, ուսուցիչներից պահանջվում է իմպրովիզ անելու հմտություն:

Ինչ վերաբերում է ինտեգրված դասերի քանակին, ապա դրա պատասխանը միանշանակ չի կարող լինել: Դա կախված է ուսուցչի կարողություններից և հմտություններից, միջառարկայական կապերը համադրելու ունակությունից և այլն: Առայժմ չեն ստեղծվել բավարար քանակով ինտեգրված դասագրքեր, ուստի ուսուցչի համար նյութի ընտրությունը և մշակումը այդքան էլ հեշտ աշխատանք չէ: Հաճախակի նման դասերի կիրառումը կարող է հակառակ հետևանքն ունենալ, որը կրեթի սովորողների ճանաչողական ակտիվության նվազեցման:

Ինտեգրված դասի չափանիշներն են.

1. Ինտեգրումը հատուկ կազմակերպված դասի տեսակ է (եթե այն նախօրոք նախագծված չէ, հնարավոր չէ հասնել հիմնական նպատակին):
2. Միասնական նպատակ կարող է լինել առարկաների նկատմամբ սովորողների կողմից ավելի մեծ հետաքրքրության ցուցաբերումը, ուսումնական ժամանակի տնտեսումը և այլն:
3. Տարբեր առարկաներից զանազան գիտելիքների կիրառումը, միջառարկայական կապերի սերտացումը:

Քանի որ ինտեգրված ուսուցման ժամանակ դիտարկվում են միջառարկայական խնդիրներ, որոնք ընդարձակում են գործող ծրագրերի սահմանները, ապա պետք է մատնանշել, որ նման մոտեցման դեպքում ներդաշնակորեն համատեղվում են ուսուցման զանազան հնարներ (դասավանդման և հետազոտման մեթոդներ), որոնք կիրառվում են առարկաների համընկման ժամանակ: Այդ մեթոդներից են՝ զրույցը և դասախոսությունը, բացատրությունը և սովորողների ինքնուրույն աշխատանքի ղեկավարումը, դիտումը և փորձը, համեմատումը, վերլուծությունը և համադրումը: Մեծ տեղ է հատկացվում էվրիստիկ և համակարգչային մոդելների:

Ամբողջ աշխարհում ինտեգրված ուսուցման սկզբունքները ծառայում են մեկ նպատակի՝ սովորողների մտածողության զարգացմանը:

Ինտեգրված դասի արդյունքները և նշանակությունը

Առաջարկվող համակարգով աշխատանքի փորձը թույլ է տալիս ինտեգրված դասի արդյունքների և նշանակության մասին հետևյալ եզրահանգումներն անել:

Ինտեգրված դասը՝

1. Նպաստում է սովորողների գիտական մտածողության զարգացմանը:
2. Սովորողներին մեծ հնարավորություն է տալիս զարգացնելու ճանաչողական ընդունակությունները:
3. Ձևավորում է մի շարք առարկաների նկատմամբ համակցված մոտեցում, ընդհանուր տեսանկյուն բնական գիտությունների նկատմամբ, նույն խնդրի՝ տարբեր առարկաների տեսանկյունից քննարկման ունակություն:
4. Բարձրացնում է սովորողների գիտելիքների որակը:
5. Բարձրացնում և զարգացնում է հետաքրքրությունը բնագիտական և մաթեմատիկական գիտությունների նկատմամբ:
6. Ընդհանուր պատկերացումներ է ձևավորում ֆիզիկայից, կենսաբանությունից, քիմիայից, ինֆորմատիկայից կարևորագույն հասկացությունների մասին:
7. Սովորողների մեջ ձևավորում է այն համոզմունքը, որ նրանք կարող են ավելի դժվար հասկացություններ ընկալել, քան դասագրքում ներկայացված հասկացություններն են:
8. Թույլ է տալիս կիրառել սովորողների հեղինակային համակարգչային ծրագրերը:
9. Ընդլայնում է սովորողների աշխարհայացքը, զարգացնում է ստեղծագործական հնարավորությունները, նպաստում նոր պայմաններում տարբեր առարկաներից գիտելիքների խորացմանը:
10. Աշակերտներին տրամադրում է գիտահետազոտական գործունեության:

Միջառարկայական կապերը որպես ինտեգրված ուսուցման տեխնոլոգիաների հիմք

Միջառարկայական կապը այն հիմնական գործոններից մեկն է, որն ընկած է սովորողների կողմից տարբեր գիտությունների հիմունքների ուսումնասիրության, գիտական աշխարհայացքի ձևավորման, աշխարհի միասնականության, բնության երևույթների ուսումնասիրության հիմքում:

Ֆիզիկայի դպրոցական դասընթացի ուսումնասիրության ժամանակ այլ ուսումնական առարկաներից՝ քիմիայից, կենսաբանությունից, աշխարհագրությունից, աստղագիտությունից, պատմությունից ձեռք բերած գիտելիքների օգտագործումը նպաստում է ոչ միայն սովորողների իմացական հետաքրքրությունների զարգացմանը, այլև ուսումնական նյութի առավել խորը ըմբռնմանը, նրանց մտահորիզոնի ընդլայնմանը:

Բնագիտական այլ առարկաների հետ ֆիզիկայի օրգանական կապի բացահայտման ամենաարդյունավետ միջոցներից մեկը, այսպես կոչված, միջառարկայական կապի խնդիրների լուծումն է [1, էջ 3]:

Ինտեգրված դասերը լավ է նկարագրել Ի. Պողոսին. «Ինտեգրված դասը միավորում է տարբեր առարկաներից սովորողների ձեռք բերած գիտելիքները մեկ գաղափարի շուրջ»: Շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրվում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար:

Դասավանդվող յուրաքանչյուր առարկա ներկայացնում է գիտելիքների և կարողությունների համակարգ շրջապատող իրականության տարբեր բնագավառների մասին: Արդյունքում աշակերտների ստացած գիտելիքներն ու ձեռք բերած կարողությունները լինում են տարանջատ, որի պատճառով դրանց միասնական ու ամբողջական կիրառումը հաճախ դառնում է անհնար, որն էլ իր հերթին խոչընդոտում է աշակերտների զարգացմանը:

Այս խնդրի լուծմանն է ուղղված ինտեգրված ուսուցման տեխնոլոգիան, որի հիմքը միջառարկայական կապերի օգտագործումն է ուսուցման գործընթացում: Այդ կապերը կարևոր դեր են խաղում սովորողների գործնական և տեսական պատրաստվածության բարելավման, նրանց կողմից ընդհանուր ճանաչողական գիտելիքների ձեռքբերման գործում: Եվ այդ ընդհանրացվածությունը հնարավորություն է տալիս օգտագործելու գիտելիքներն ու կարողությունները որոշակի իրավիճակներում:

Միջառարկայական կապերի շնորհիվ լուծվում են ոչ միայն սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման խնդիրները, այլև ամրապնդվում է բարդ խնդիրների լուծման ժամանակ միասնական

մոտեցում ցուցաբերելու հիմքը: Հենց այդ պատճառով էլ միջառարկայական կապերը հանդիսանում են ինտեգրված ուսուցում իրականացնելու կարևորագույն պայման:

Ինտեգրումը, հիմք ընդունելով միջառարկայական կապերի օգտագործումը, ենթադրում է ուսուցչի գործունեության (ուսուցողական գործունեություն) և աշակերտի գործունեության (ուսումնաճանաչողական գործունեություն) համապատասխանություն: Գործունեության երկու ձևերն էլ ունեն ընդհանուր կառուցվածք՝ նպատակ, դրդապատճառ, բովանդակություն, միջոց, արդյունք, վերահսկողություն:

Գործունեության բովանդակային փուլում ուսուցիչը մատուցում է նոր ուսումնական նյութը՝ միաժամանակ դրանում ընդգրկելով հենակետային գիտելիքներ՝ ինտեգրված հասկացությունների, փաստերի, միասնական խնդիրների վերաբերյալ: Աշակերտները յուրացնում են ընդհանրացված գիտելիքներ, հասկացություններ, խնդիրներ:

Միջոցների ընտրելու փուլում ուսուցիչը որոշում և ընտրում է ձեռնարկներ, գրքեր, աղյուսակներ, սխեմաներ, հարցարաններ ու առաջադրանքներ, գործնական վարժություններ, որոնք կնպաստեն տարբեր առարկաներից գիտելիքների ընդհանրացմանը:

Արդյունքների ամփոփման փուլում իրականացվում է ինտեգրումը՝ էլնելով ուսուցման, զարգացման, դաստիարակության նպատակներից:

Այսպիսով, բազմակողմանի զարգացած, մտածող անձնավորության ձևավորման համար կարևոր նշանակություն ունի տարբեր գիտությունների, երևույթների միջև գոյություն ունեցող կապերի ճանաչումը, դրանց համադրումն ու օգտագործումը, որն իրականացվում է ինտեգրված ուսուցման ժամանակ: Այն ենթադրում է ուսուցանող առարկաների մերձեցման և համապատասխան գիտությունների միջև գոյություն ունեցող կապերի հաստատման գործընթաց: Ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս որևէ երևույթ, հասկացություն, թեմա ուսումնասիրելիս միաժամանակ օգտագործել ուսուցանվող բոլոր առարկաների բովանդակությունը՝ նպաստելով աշակերտների աշխարհաճանաչողությանը և սովյալ երևույթի վերաբերյալ ամբողջական ու խորը գիտելիքների ձեռքբերմանը: Տարբեր առարկաների միջև կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի, երևույթի, անձի կամ իրադրության մասին ուսուցանվող առարկաներից կամ տարբեր ճանապարհներով ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորելու, մի ընդհանուր համակարգի բերելու, ինչպես նաև օգնում է բացատրվող նյութի ճիշտ և խորը յուրացմանը, ձեռք բերված և ունեցած գիտելիքների միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, որը հսկայական զարգացող արժեք ունի երեխայի համար: Այսինքն, պետք է կարևորել համընդհանուր,

ընդհանրացված գիտելիքները, դրանց մեջ գոյություն ունեցող կապերը, քանզի տարբեր առարկաների, երևույթների ու գիտությունների միջև կապերի ճանաչումն ու հայտնաբերումը, դրանց խելացի համադրումն ու օգտագործումը, տարբեր բնույթի փաստերի հիման վրա ընդհանրացված եզրակացությունների բխեցումը շատ կարևոր նշանակություն ունեն անձի բազմակողմանի զարգացման համար:

Օգտագործված գրականություն

1. Գ. Մելիքյան, Ա. Ռուբենյան, Միջառարկայական կապերը ֆիզիկայի խնդիրներում, Երևան, 2014:
2. Կիրակոսյան, Գ. Մելիքյան «Ֆիզիկա» առարկայի ավագ դպրոցի ծրագրեր և չափորոշիչներ, Երևան 2009:
3. ինտեգրված ուսուցումը որպես ուսուցման արդյունավետ մեթոդ <http://forum.armedu.am/showthread.php/1428>

Рипсима СААКЯН

Учитель русского языка и литературы школы N109 г. Еревана

Применение тестовых технологий при работе с художественным текстом

Изменения, которые происходят в современном мире, обуславливают необходимость развития новых способов образования, педагогических технологий, направленных на развитие личности, навыка самостоятельного поиска информации, формирования у школьников способности ставить и решать задачи разного типа. Поэтому особое значение имеет внедрение инновационных технологий в образование: тестовых, информационно-коммуникативных, игровых, технологий речевого развития (работа с текстом), развивающего обучения, проблемного обучения и других. Современные образовательные технологии не только облегчают доступ к информации, открывают возможности вариативности учебной деятельности, ее индивидуализации и дифференциации, но и позволяют по-новому организовать взаимодействие всех субъектов обучения, построить образовательную систему, в которой ученик — активный и равноправный участник образовательной деятельности.

В связи с модернизацией образования в РА у педагогов возникает необходимость в обновлении образовательного процесса путем переориентации своей деятельности в логике компетентностного подхода. Появляется потребность в совершенствовании методов и форм проверки знаний учащихся, формирования ключевых предметных навыков и видов контроля изученного материала. В настоящее время наиболее приемлемым и результативным методом контроля знаний является тестирование. Современный учебный процесс не мыслится без системы тестового контроля. Результатом работы в этом направлении явилось создание государственной системы тестирования по ряду предметов школьного цикла, в том числе и по русскому языку. Тесты можно использовать на любом этапе урока: проверка домашнего задания, совершенствование знаний, закрепление, повторение и систематизация учебного материала и оценка знаний. Тестовые задания эффективны и для самопроверки знаний. Использование тестов позволяет экономить массу времени, проверить широкий спектр знаний учащихся по предмету, уровень сформированности некоторых навыков и умений. Тестовые задания удобно использовать при организации самостоятельной работы учащихся в режиме самоконтроля, при повторении учебного материала. Тестовые задания четко ориентированы на реальный практический результат. Однако применение тестовых технологий не должно быть

эпизодическим, бессистемным, иначе они не повлияют на результаты обучения.

В настоящее время тестирование по русскому языку широко применяется в РА, тестовый контроль знаний проводится как при изучении отдельных тем, так и при итоговых работах, а также при сдаче ЕГЭ. Несколько лет тому назад был создан Республиканский банк тестовых заданий для подготовки к сдаче ЕГЭ по русскому языку. И учителя и ученики уже привыкли к этому виду контроля знаний, а планомерное, последовательное выполнение тестов уже дает свои результаты: ощутимо повысилась грамотность и осознанный подход к русскому языку как науке. Однако с устной, разговорной речью год от года дела обстоят все хуже. Причины этого, как нам представляется, кроются в подходе к русскому языку как школьному учебному предмету.

Мы совершенно упустили из виду тот факт, что во всех учебниках русского языка для школ с армянским языком обучения уделяется достаточно много места текстам из художественной литературы. Однако виды контроля этого учебного материала остались старыми: прочитать, пересказать, выучить наизусть, написать сочинение-миниатюру (чаще всего пишут мамы, тети, соседки). В результате, бессмысленно заученные стихи забываются на следующий же день после получения оценки, а один-два “случайных” вопроса не дают представления об осмысленном усвоении прочитанного. Поэтому зачастую невозможно составить целостную картину об усвоении учащимися-инофонами пройденного материала. А ведь именно этот материал обеспечивает выход на одну из основных функций обучения, требуемых в современном образовательном процессе – коммуникативную.

Нам представляется совершенно необходимым введение тестирования и на уроках, отведенных изучению текстов художественной литературы. Так например, при изучении отрывков из повести Куприна “Гранатовый браслет” (“Русский язык”, XI класс, авторы: Грдзелян, Мхитарян, Тер-Аракелян стр.101-110) можно дать тест такого вида:

1. Какая из тем основная в произведении “Гранатовый браслет”?

- 1) Тема настоящей вечной любви.
- 2) Тема отцов и детей.
- 3) Тема человеческой реализации.
- 4) Тема религии в жизни человека.

2. Главную героиню повести зовут...

- 1) Анна Николаевна Фриессе.
- 2) Вера Николаевна Шеина.
- 3) Жени Рейтер.
- 4) Людмила Львовна Дурасова.

3. Гранатовый браслет княгиня Вера получила в подарок от...

- 1) мужа.
- 2) любовника.
- 3) поклонника.
- 4) брата.

4. В конце описываемых событий Желтков...

- 1) переезжает в другой город.
- 2) убивает себя.
- 3) попадает в полицию.
- 4) вызван на дуэль мужем Веры.

5. Дальнейшая судьба браслета: он был...

- 1) перепродан.
- 2) выброшен в море.
- 3) уничтожен.
- 4) повешен на икону.

6. Произведение какого композитора Желтков считал лучшим и просил передать его название Вере Николаевне?

- 1) Баха.
- 2) Моцарта.
- 3) Бетховена.
- 4) Вивальди.

7. При прощании с Желтковым Вера...

- 1) поцеловала его в лоб.
- 2) поцеловала его в щёку.
- 3) дала ему пощёчину.
- 4) обняла его.

8. Какие слова использует Желтков в своем письме?

- 1) Благодарю Вас.
- 2) Да святится имя твое.
- 3) Прошу прощения.
- 4) Буду помнить Вас всегда.

9. Кто сыграл для Веры Сонату N2 Бетховена?

- 1) Муж.
- 2) Брат.
- 3) Жени Рейтер.
- 4) Хозяйка Желткова.

10. Почему в конце повести Вера Николаевна плакала, слушая произведение композитора?

- 1) Ей было жаль умершего Желткова.
- 2) Эта музыка всегда навевала на нее необъяснимую грусть.
- 3) Ей было жаль, что она не встретила с Желтковым, пока он был жив.
- 4) Она плакала о прошедшей мимо любви.

Такого рода тест не займет много времени на уроке, но зато даст полное представление о том, как ученики проработали и усвоили материал. Чтобы не потерялся интерес к тестам, необходимо применять разнообразные формы тестирования. Так например, при изучении поэтических тестов можно использовать клоуз- тесты, в которых нужно вставить в отрывок из текста пропущенные слова.

В качестве примера приведем стихотворение Пушкина “Я помню чудное мгновенье” (“Русский язык” X класс, авторы: Грдзелян, Мхитарян, Тер-Аракелян стр.105).

Я помню чудное мгновенье:
Передо мной ... ты,
Как мимолетное ...,
Как ... чистой красоты. (и т.д.)

Можно использовать на уроке и ченч-тесты (найти слово, которым подменено авторское, и восстановить оригинальный текст).

Полезно давать задания ученикам самостоятельно составить тест по произведениям (на знание текста, литературоведческих основ произведения) или по биографии писателя. А потом вместе с ними корректировать получившиеся варианты. Детям очень нравится меняться составленными тестами и потом оценивать друг друга. Такая работа развивает познавательную активность, творческие способности, даёт возможность применить полученные знания в новой ситуации, развивает методологическую грамотность. Кроме того, все эти тестовые задания четко ориентированы на реальный практический результат.

Как правильно замечает Аванесов [1], “назначение тестов — не только и даже не столько контроль и оценка знаний и практических умений как итоговых результатов, сколько диагностика состояния и проблем работы учащихся с программным материалом на каждом этапе его изучения:

выявление возможных затруднений, пробелов, смешения понятий и т.д. Тесты предоставляют учащимся возможность проявить самостоятельность, индивидуальность, способствуют обучению детей процессуальному самоконтролю.”

Именно потому, что сейчас в школу пришло поколение, которому, к сожалению, не пели колыбельных песен не рассказывали сказок, учителю важно научить школьников не только внимательно и вдумчиво читать произведения художественной литературы, видеть границы вымышленного и реального, но и научить добру – злу научатся сами. А работа с тестовыми технологиями является незаменимым помощником в решении этой задачи.

Список используемой литературы

1. Аванесов В.С., Композиция тестовых заданий, Москва, 2002.
2. Майоров А.Н., Теория и практика создания тестов для системы образования: как выбирать и использовать тесты для целей образования, Москва, 2005.

Գայանե ԳԱՍՊԱՆՅԱՆ

Երևանի թիվ 100 դպրոցի հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի

Գործաբանական թեստերի կիրառումը հայոց լեզվի ուսուցման ժամանակ

Սովորողների գիտելիքների և ունակությունների ստուգումն ուսումնական գործընթացի ոչ միայն ամենակարևոր, այլև ամենալուրջ ուշադրության արժանի ոլորտներից է:

Ուսուցման գործընթացում որքան արդյունավետ կարող է լինել ճիշտ գնահատումը, նույնքան էլ, եթե ոչ ավելի, խոչընդոտող կարող է լինել սխալ գնահատումը: Տվյալ դեպքում «ճիշտ» և «սխալ» բառերը խիստ տարողունակ են: Այսպես՝ ճիշտ գնահատումը ենթադրում է աշակերտի գիտելիքների օբյեկտիվ պատկերի արտացոլում տվյալ իրավիճակի և տվյալ նպատակի համար ճիշտ ընտրված և մշակված գնահատման գործիքի միջոցով:

Ինչպես հայտնի է, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման ավանդական ձևերը, որոնք օգտագործվում են ուսուցման գործընթացում, ոչ միշտ են համապատասխանում արդյունավետ ստուգմանը ներկայացվող պահանջներին: Ստուգման արդյունավետ ձևերի որոնումը հանգեցրեց թեստավորման հանդեպ հետաքրքրության աճին:

Թեստավորման հիմնական տարբերություններից մեկը ավանդական ստուգման ձևերից (բանավոր հարցում, ստուգողական աշխատանք և այլն) գնահատման հստակ մշակված չափանիշների առկայությունն է: Այդ իսկ պատճառով գնահատականը, որը դրվում է թեստավորման արդյունքների հիման վրա, տարբերվում է ուսուցչի հնարավոր սուբյեկտիվ գնահատականից, որը մասամբ կախված է նրա ստացած անհատական տպավորությունից և միշտ չէ, որ զերծ է անձնական համակրանքի կամ հակակրանքի գործոններից: Ուստի թեստային ստուգման հիմնական տարբերիչ հատկանիշներից մեկը անաչառ գնահատումն է:

Որևէ առարկայից, դրա որևէ բաժնից, թեմայից անցկացվող թեստավորմանը ներկայացվում են որոշակի պահանջներ:

Դրանցից առաջինը գործընթացի սկզբնակետի առումով նպատակաուղղվածության որոշումն է:

Նախ որոշվում է թեստավորման նպատակը. ինչի՞ համար ենք թեստավորում՝ սովորեցնելու, թե՞ որևէ ամփոփիչ գնահատական նշանակելու, ուսումնական նյութի ինչպիսի՞ ծավալի յուրացման մասին ենք ուզում պատկերացում կազմել տվյալ առարկայի շրջանակներում, աշակերտի ինչպիսի՞ հմտություններ ենք ուզում ստուգել: Ըստ դրված նպատակի էլ որոշում ենք թեստի հատկանիշները՝ կառուցվածքը, առաջադրանքների կառուցվածքային և բովանդակային տիպերը և դրանց համամասնությունները:

Ըստ նրա, թե ինչի համար ենք թեստավորում, այն կարող է հետապնդել ստուգողական կամ ուսուցողական նպատակներ: Կախված նրանից, թե ինչ ծավալի գիտելիք ենք ուզում ստուգել՝ ուսումնական նյութի մի փոքր հատվածի ընկալումը, քերականական ամբողջական թեմայի յուրացումը, թե տվյալ ուսումնական փուլում (շաբաթ, ամիս, կիսամյակ, տարի) ձեռք բերված գիտելիքների ընդհանուր պատկերը, թեստը լինում է ընթացիկ, ամփոփիչ և այլն: Իսկ ըստ այն հանգամանքի, թե ո՞ր հմտությունն ենք ուզում ստուգել, թեստերի և թեստային առաջադրանքների բովանդակային բազմազանությունից ընտրում ենք տվյալ նպատակի առումով մեզ անհրաժեշտը:

Մեթոդական գրականության մեջ հայտնի են թեստերի բովանդակային տարբեր տեսակներ՝ խոսքային կարողություններ և հմտություններ ստուգող, կատարողական, հայտորոշիչ, տեղադրման:

Խոսքային կարողություններ և հմտություններ ստուգող թեստերը նախատեսված են մարդկանց բանավոր խոսքի կարողությունները ստուգելու համար՝ անկախ այն բանից, թե նրանք ինչ կրթություն են ստացել:

Ի տարբերություն խոսքային կարողություններ և հմտություններ ստուգող թեստերի՝ *կատարողական* թեստերը վերաբերում են լեզվի քերականական կոնկրետ երևույթներին: Այդ թեստերը լինում են ընթացիկ և ավարտական: Ընթացիկ կատարողական թեստերը կարևորվում են նրանով, որ նրանց միջոցով հնարավոր է դառնում հետևել սովորողների առաջադիմությանը ուսուցման տարբեր փուլերում:

Հայտորոշիչ թեստերը օգտագործվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը ի հայտ բերելու համար: Դրանց նպատակն է պարզել, թե ինչին է անհրաժեշտ ուշադրություն դարձնել ուսանողների հետագա ուսուցման ընթացքում:

Տեղադրման թեստերը նպատակ ունեն ապահովելու սովորողների գիտելիքների մակարդակի մասին տեղեկացվածությունն ուսուցման ծրագրին համընթաց:

Դասավանդման մեթոդիկայում մեծ տարածում ունեն *առանձնացված* և *ինտեգրատիվ* թեստերը:

Առանձնացված թեստերը ստուգում են ինչ-ինչ տարրեր, բաղադրիչներ: *Ինտեգրատիվ* թեստը, հակառակը, պահանջում է լեզվական զանազան տարրերի համակցում: Այն ստուգում է շարադրություն գրելու վարպետություն, գրառումներ անելու կարողություն, թելադրություն գրելու ունակություն, ինչ-որ հատված լրացնելու հմտություն:

Գոյություն ունեն նաև *գործարանական* թեստեր, որոնք հիմնականում կիրառվում են ընթացիկ ստուգումների ժամանակ: Գործարանական թեստերում օգտագործվող առաջադրանքներից են, այսպես կոչված, «ծածկող» (անզլերեն՝ close) առաջադրանքները, որոնց տարատեսակներին էլ անդրադարձել ենք այս հոդվածում:

Դասական ծածկող թեստը խոսքային առաջադրանք է: Տրվում է տեքստ կամ նախադասություն, որում բաց են թողնված բառեր, բառակապակցություններ, հատվածներ: Աշակերտից պահանջվում է վերականգնել տեքստը և բաց թողնված հատվածները տեղադրել համապատասխան տեղերում: Այսպիսի առաջադրանքների ճիշտ կատարումը պահանջում է լեզվի լավ իմացություն, լեզվական հոտառություն, ճիշտ և սխալ արտահայտությունների տարբերակում, բառերը քերականորեն ճիշտ ձևավորելու կարողություն, տեքստի կամ նախադասության հատվածների տրամաբանական կապի գիտակցում: Այս առաջադրանքները ևս ունեն իրենց տարատեսակները, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ունի ենթատեսակներ: Այսպես՝ առաջադրանքների տարատեսակներից մեկը պահանջում է նախադասության մեջ բաց թողնված բառի տեղադրում: Ընդ որում, այդ բառի փոխարեն կարող է բաց թողնված լինել նախադասության՝ ինդրառությամբ կապված որևէ անդամ՝ համապատասխան ձևավորումով՝ հոլովաձևով կամ կապով: Օրինակ՝

Ո՞ր հոլովաձևը կամ կապային կառույցը պետք է տեղադրել նախադասության մեջ:*

Պրոմեթևսը պատմում է նրան իր ծանր և գուշակում, թե իրեն դեռ ինչ քաջագործություններ են վիճակված անելու՞

- 1) ճակատագրի առնչությամբ
- 2) ճակատագրից
- 3) ճակատագրի շուրջ
- 4) ճակատագրերը

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Եվ ամեն մեկը ճգնում էր իր հոգու գեղեցկությունը դրսևորել:

- 1) նրանցից
- 2) նրանց մեջ
- 3) նրանց
- 4) նրանք

Այս առաջադրանքները ճիշտ կատարելու համար աշակերտը պետք է տարբերի խնդրառական ճիշտ ձևերը սխալներից: Այս տարատեսակի ենթատեսակներից է բաց թողած շաղկապի կամ շաղկապական բառի (հարաբերական դերանուն) ճիշտ տեղադրումը, որի համար անհրաժեշտ է շաղկապի իմաստի և գործածականության վերաբերյալ գիտելիքի առկայություն:

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Ամբոխը, ծով էր կապել հրապարակում և ալիք-ալիք կանգնել, մի մարդու պես գետին խոնարհվեց:

- 1) երբ
- 2) մինչ
- 3) քանի դեռ

* Այս և մյուս օրինակները վերցված են հայոց լեզվի և հայ գրականության պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարաններից:

4) որ

Մյուս տարատեսակը նախադասության մեջ բաց թողնված մի քանի (որպես կանոն դրանք լինում են 4-ը, ըստ ցածր կամ բարձր դասարանների՝ կարող են լինել 3-ը, 2-ը, 5-ը և այլն) բառերի տեղադրումն է: Այս տարատեսակը ևս ունի ենթատեսակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նպատակադրումը: Օրինակ, ուսուցիչը կարող է ստուգել միայն նախադասության մտքի և նրանում տեղադրվող բառերի իմաստային փոխկապակցվածությունը՝ առանց բառերի ձևաբանական ձևավորումը կարևորելու:

Օրինակ՝

Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Դա մի , գեղեցկատես, կազմվածքով երիտասարդ էր, ձեռքերն ու ոտքերը էին, կլիներ քսանհինգ-քսանվեց տարեկան:

(1. հիանալի, 2. արտաքուստ, 3. մկանուտ, 4. բարձրահասակ)

- 1) 1, 3, 2, 4
- 2) 4, 1, 3, 2
- 3) 1, 2, 4, 3
- 4) 3, 2, 4, 1

Կամ կարող է կարևորվել ոչ միայն բառերի ճիշտ տեղադրումը նախադասության մեջ, ինչպես նախորդ օրինակում, այլև հենց ձևաբանական ձևավորումը: Օրինակ՝

Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Մի անմարդաբնակ ժայռոտ վայր կա հեռավոր ծայրում՝ սկյութների երկրում, ուր դժնատեսիլ ժայռերն իրենց սուր անվերջ ամպերի մեջ,

Իսկ հետևում թեթև մշուշով պարուրված՝ Կովկասյան լեռների գագաթները:

(1. աշխարհ, 2. գագաթ, 3. մխրճվել, 4. սպիտակին տալ)

- 1) աշխարհի, գագաթներով, մխրճվում են, սպիտակին են տալիս
- 2) աշխարհում, գագաթներով, մխրճվում են, սպիտակին տվեցին
- 3) աշխարհի, գագաթները, մխրճվում են, սպիտակին տվեցին
- 4) աշխարհի, գագաթներով, մխրճվելով, սպիտակին են տալիս

Ինչպես տեսնում ենք, բոլոր տարբերակներում բառերը շարված են նույն հերթականությամբ, բայց տարբեր ձևավորումներով: Մի այլ դեպքում կարող են կարևորվել այս կարողություններից թե՛ մեկը, թե՛ մյուսը, ինչպես դա երևում է հետևյալ օրինակում՝

Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Հրաժեշտ նկատեցի մի բան. Լևոնը անհույս էր , սակայն չէր տեսնում բաժանող անջրպետը:

(1. օրիորդ, 2. ինքը , 3. տալ, 4. սիրահարվել)

- 1) տալով, օրիորդին, սիրահարվել, իրենց
- 2) տալուց, օրիորդին, սիրահարված, իրենցից
- 3) տալիս, սիրահարվում, օրիորդին, իրենց
- 4) տալիս, սիրահարված, օրիորդին, իրենց

Հաջորդ տարատեսակը վերաբերում է ավելի լայն միավորի՝ նախադասության բաց թողնված հատվածին: Այս դեպքում տրվում են անավարտ (անսկիզբ կամ այլ տիպի) նախադասություններ և տեղադրման 4 տարբերակներ: Անհրաժեշտ է ընտրել տվյալ նախադասությունը ոչ միայն տրամաբանորեն, այլև քերականորեն, օրինակ, ըստ կետադրության համապատասխանողը: Ընդ որում, կարող է բաց թողնված լինել՝

- նախադասության սկիզբը, ինչպես՝

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

..... , որ մեր պատմության մեջ առաջին անգամ հաղթական ավարտ էին ունենալու:

- 1) Պատերազմական գործողություններ էին ծավալվում Արցախի ռազմաճակատներում այդ ժամանակ
- 2) Պատերազմական գործողություններն այդ ժամանակ ծավալվում էին Արցախի ռազմաճակատներում
- 3) Արցախի ռազմաճակատներում ծավալվում էին պատերազմական գործողություններ այդ ժամանակ
- 4) Այդ ժամանակ Արցախի լազմաճակատներում ծավալվում էին պատերազմական գործողություններ

- նախադասության ավարտը, ինչպես՝

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Եվ դառնագին ողբում էր Անանդան անհույս ու հոգեմաշ և լալիս էր առանց արցունքի,

- 1) թե մի՞ թե իրավ վատ է մահը, մի՞ թե այն այդքան տաժանելի է:
- 2) քանի որ ինքը նգովել է կյանքը:
- 3) սակայն հեղձամաղձուկ էր աշխարհը և տաղտկալի:
- 4) որովհետև վաղուց է, որ քարացել էին արցունքները նրա աչքերում:

- նախադասության միջին մասը, ինչպես՝

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Պատահեց այնպես,, որն օժտված էր թովչանքով, բայց զուրկ էր կանացի պարկեշտությունից:

- 1) որ Դալիլա անունով մի կնոջ սիրահարվեց Սամսոնը
- 2) ինչպես Սամսոնը սիրահարվեց Դալիլա անունով մի կնոջ
- 3) որ Սամսոնը սիրահարվեց Դալիլա անունով մի առաքինի կնոջ
- 4) որ Սամսոնը սիրահարվեց Դալիլա անունով մի կնոջ

Բերված բոլոր առաջադրանքները ընտրովի պատասխաններով են: Դրանց մի մասը կարող է տրվել նաև որպես կարճ պատասխան պահան-

ջող առաջադրանք, որի պատասխանը աշակերտը պետք է գրի ինքնուրույն: Օրինակ՝

Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Դա մի , գեղեցկատես, կազմվածքով երիտասարդ էր, ձեռքերն ու ոտքերը էին, կլիներ քսանհինգ քսանվեց տարեկան:

(1. հիանալի, 2. արտաքուստ, 3. մկանուտ, 4. բարձրահասակ)

Գոյություն ունի, այսպես կոչված, ծածկող թեստի մեկ այլ առավել ընդարձակ տարբերակ ևս, որը դեռևս տեղ չի գտել հայոց լեզվի և հայ գրականության պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարաններում:

Այս առաջադրանքներում տրվում է տեքստ, որի մեջ բաց են թողնվում ամբողջական նախադասություններ: Անհրաժեշտ է տեղադրել այդ նախադասությունները ճիշտ տեղերում՝ ըստ տեքստի տրամաբանական ամբողջականության: Կարող են տրվել նաև ավելորդ՝ չօգտագործվող միավորներ: Շտեմարաններում այս առաջադրանքների տեղ չգտնելու պատճառը հավանաբար նրանց շատ ծավալուն լինելն է: Սակայն առաջադրանքը շատ հարմար է խոսքի զարգացման թեման ուսումնասիրելու, որպես ստուգիչ նյութ օգտագործելու համար: Այդպիսին է նաև հայոց լեզվի ձեռնարկներում տեղ չգտած տեքստային առաջադրանքի մեկ այլ տեսակ, որը պահանջում է ավելորդ մտքի հայտնաբերում տեքստում: Այս տիպի առաջադրանքները լայնորեն կիրառվում են անգլալեզու թեստերում: Բերենք նշված տիպի առաջադրանքների մեկական օրինակ:

Տիտանիկը Անգլիայում պատրաստված շատ մեծ բրիտանական նավ էր, որը խորտակվեց 1912-ին, իր առաջին ուղևորության ժամանակ՝ բախվելով սառցաբեկորի: Մինչդեռ տերերը պնդում էին, որ այն չի կարող խորտակվել: Նավի վրա չկային բավականաչափ փրկարարական նավակներ, և շուրջ 1500 մարդ ջրահեղձ եղավ: Անցյալ տարի մենք գնացել էինք Անգլիա: Այս աղետից հետո սկսեցին տարբեր օրենքներ մշակել ծովային աղետները կանխելու վերաբերյալ:

Սեմ Լևսը մաքսատան աշխատող էր: _____ Սա հանգիստ քաղաք էր և շատ բան չկար անելու: Փողոցները սովորաբար հան-

գիատ էին և շատ ճամփորդողներ չկային: _____ Շաբաթը
մեկ անգամ նա հանդիպում էր մի ծեր մարդու: Նրա անունը Թեդ էր:
_____ Նրա բեռնատարը միշտ դատարկ էր:

Մի անգամ նա հարցրեց Թեդին իր գործի մասին: Թեդը ժպտաց և ասաց.
«Ես մաքսանենգ եմ»: Անցյալ տարի Սեմը գնաց թոշակի: Նա գնաց Բեր-
մունդներ հանգստանալու: Մի թանկարժեք հյուրանոցում նա հանդիպեց
Թեդին: _____ Պատասխանն էր՝ «Բեռնատարներ»:

1. Նա հարցրեց Թեդին, թե ինչ մաքսանենգություն է նա անում:
2. Դա շատ դժվար գործ էր թվում:
3. Նա աշխատում էր փոքր սահմանամերձ քաղաքում:
4. Նա միշտ գալիս էր սահման մեծ բեռնատարով:
5. Նա հարցրեց, թե նա լա՞վ է հանգստանում:
6. Սեմը գննեց բեռնատարը, բայց ոչինչ չգտավ:
7. Այն միանգամայն ձանձրալի աշխատանք էր, իսկ Սեմը հեշտ կյանք էր սիրում:

Կարծում ենք, ինչպես վերը նշված առաջադրանքները, այնպես էլ առա-
ջարկվող նոր նմուշները բավական նպաստավոր կարող են լինել աշա-
կերտների խոսքային ունակությունների ստուգման համար, որոնք լեզ-
վական ունակությունների առավել կիրառական մասն են կազմում և հա-
յոց լեզվի դասընթացի ընթացքում ձևավորվող կարևոր հմտություններից
են:

Սոֆյա ՔԵՐՈՒՅԱՆ

Բալսահովիտի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Գրականության ուսուցման խնդիրները դպրոցում

Մարդուն կրթում և դաստիարակում է դպրոցը: Այստեղ է, որ երեխան՝ որպես դեռևս չձևավորված անհատ, հասունանում է, հմտանում, ձեռք բերում գիտելիքներ: Դպրոցական տարիներին երեխան, հայտնվելով մարդկային մեծ կոլեկտիվում, ոչ միայն կրթություն է ստանում, այլև սովորում է հարաբերվել մեծերի ու իր հասակակիցների հետ, հայտնվում է տարբեր իրավիճակներում, ինքն իրեն ճանաչում մյուսների հետ շփվելով: Նա հմտություններ է ձեռք բերում ուսման ընթացքում և սեփական փորձից ելնելով: Ձևավորվում են բնավորության գծերը, և արդյունքում ձևավորվում է մարդը: Այստեղ է, որ նա իր աչքի առաջ տեսնում է մարդկային կենդանի օրինակներ, ընդօրինակում կամ մերժում դրանք: Դպրոցը գիտելիք տալուց առաջ նպաստում ու խթանում է անհատի հոգևոր և բարոյական զարգացումը: Այս հարցում <<Գրականություն>> առարկան ունի իր կարևոր դերն ու առաքելությունը: Գրականությունն է, որ սովորեցնում է զգալ, հուզվել, ծանոթանալ մարդկային ու ազգային արժեքներին, օգնում յուրացնել դարերից եկած փորձը: Այս առարկայի ժամերին կարելի է քննարկել խիղճ, սեր, բնավորություն, բարիություն, հայրենասիրություն, ատելություն, կեղծիք, դավաճանություն, անարդարություն և այլ երևույթներ: Ընթերցանությամբ երեխան ճանաչում է բառը, կապվում մայրենիին: Գրականությունն այն ուսումնական առարկաներից է, որոնք մարդուն դաստիարակում են, դարձնում բարեկիրթ, ձգտումներ ու երազանքներ ունեցող էակ, սովորեցնում կապել իր ճակատագիրը հայրենիքի ու իր ազգակիցների ճակատագրին: Գրականությունն է մարդուն բարոյական դարձնում, և, վերջապես, բարձրացնում այն հոգևոր աստիճանին, առանց որի հասարակական և պետական ոչ մի զարգացում տեղի չի կարող ունենալ:

Այսօր, ցավոք, <<Գրականություն>> առարկան դպրոցում կարծես նահանջում է: Երխաները չեն ընթերցում, հետաքրքրություններն այլ են: Մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ հաճախ դասագրքերում գրական նյութերը

մատուցվում են կադապարված ու շրջանակված, դասական գրողները դառնում են <<մումիաներ>>, գրական հերոսները՝ տիկնիկներ: Դժվարանում է կապը սովորողի և գրքի միջև. աշակերտների մի մասը չի սովորում, չի կարդում, մի մասն էլ սովորում է պարտադրված՝ ելնելով առաջիկա քննությունների անհրաժեշտությունից: Հաճախ են լսվում <<Այդպես միայն գրքերում է>>, <<Դրանք կյանքում մեզ պետք չեն>>, <<Դրանց ժամանակն անցել է>> արտահայտությունները:

Անհրաժեշտ է դպրոցում նորովի մոտեցում ցուցաբերել այս առարկային: Գրականությունը պետք է իր օրինակներով, տարբեր իրավիճակների պատկերումով մեծացնի երեխայի մտահորիզոնը, իր շրջապատում և իր հետ կատարվածի միջև համեմատության եզրեր առաջացնի, սովորեցնի վերլուծել, տրամաբանել, սեփական կենսափորձը կարդացածի հետ համեմատել, ստեղծագործությունը գնահատել և եզրակացություններ կատարել: Այս դեպքում միայն այն կծառայի իր նպատակին, կհետաքրքրի սովորողին, կկապի գրքին: Կա չինական մի հին ասացվածք. <<Տվե՛ք մարդուն մեկ ձուկ, և նա կունենա սնունդ միայն այդ օրվա համար: Սովորեցրե՛ք նրան ձուկ բռնել, և նա կունենա սնունդ ողջ կյանքի համար>>:

Ուսուցիչը տարիներ շարունակ դասավանդում է և, բնական է, հաճախ է առնչվում նույն տեքստին, և եթե ամեն անգամ նա այնտեղ իր համար նոր բաներ չի բացահայտում, նշանակում է՝ հետ է մնում կյանքից, ժամանակին համընթաց չի շարժվում: Այդ դեպքում ինչպե՞ս կարող է կամրջել սովորողին գրքի հետ. չէ՞ որ սովորողը ներկայի մարդն է՝ իր պահանջներով ու հետաքրքրություններով: Գրականության ուսումնական նյութի ուսուցման ողջ ընթացքում անհրաժեշտ է այնպես անել, որ այն երբեք չկորցնի իր արդիականությունը, սովորողին առաջին հերթին պետք է հետաքրքրի, ուղղորդի այնտեղ գտնելու իրեն հուզող հարցերի պատասխանը: Գրականության ուսուցիչը ունի մի առավելություն (հատկապես ավագ դպրոցում) այլ առարկաների ուսուցիչների համեմատ: Նա կարող է աշխատել առանց դասագրքի, որովհետև կարևորը գեղարվեստական տեքստն է, իսկ դասագիրքն այստեղ կարող է դառնալ ուղեցույց: Դասը պետք է ընթանա երկխոսության ու քննարկման ձևով, որը մտածելու տեղիք պետք է տա և՛ ուսուցչին, և՛ աշակերտին, հարցադրումները պետք է արվեն այնպես, որ խթանեն սովորողի տրամաբանական մտածողությունը, հնարավորություն տան թափանցելու երևույթների խորքը, ազատ արտահայտելու անձնական կարծիքն ու տեսակետը, միշտ պետք է լինի գրական նյութ-աշակերտ-կյանք կապը, հաճախ պետք է բացառվի <<Միայլ է>> արտահայտությունը:

Գրականությունը բանաձևել հնարավոր չէ, այն արվեստ է, և դպրոցում իր բուն՝ մարդկային արժեքների պահպանման նպատակին ծառայելու համար պետք է լուծվեն երեք կարևոր խնդիրներ՝ **Նյութի ընտրություն, մատուցում, ընկալման ապահովում**: Այս խնդիրները լուծելու համար պետք է ոչ միայն ուսուցչի վարպետություն, այլև գրական նյութերի ճիշտ ընտրություն: Տեքստերի ծավալները պետք է լինեն ոչ շատ մեծ, քանզի մեծ ծավալները հաճախ չեն էլ ընթերցվում: Նյութի ընտրության հարցում պետք է կարևորվի նաև դրա խորությունը, յուրացման, ժամանակակից կյանքին համապատասխան ընկալման հնարավորությունը:

<<Հանրակրթություն. գնահատում և
թեստավորում>>
տեղեկատվական - վերլուծական
հանդեսում հոդվածներ
տպագրելու կարգը

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսը հրատարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:

Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft Word ծրագրով, Sylfaen տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]:

Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Խմբագրությունն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրատարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարանում:

Բովանդակություն

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2017 թ. պետական միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն

.....4

12-րդ դասարանում սովորողների պետական ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն (2016-2017 ուսումնական տարի)

.....52

2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերլուծություն

.....68

2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ 10-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների հարցման արդյունքները

.....96

2016 թ. նոյեմբեր- դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում իրականացված արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ աշակերտների հարցման արդյունքները

..... 133

ԹԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լ. ԱԹՈՅԱՆ

Անգլերենի թեստային առաջադրանքների նոր տիպեր.....152

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Իրավունքի դասավանդման մեթոդները և գնահատման ձևերը161

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գնահատումը որպես սովորողի առաջընթացի կարևոր խթան165

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ինտեգրված դասը որպես ուսուցման արդյունավետ միջոց176

ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

P. СААКЯН

Применение тестовых технологий при работе с художественным
текстом183

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գործաբանական թեստերի կիրառումը հայոց լեզվի
ուսուցման ժամանակ188

Ս. ՔԵՐՈՐՅԱՆ

Գրականության ուսուցման խնդիրները դպրոցում197

ՀԱՆԴԵՍՈՒՄ ՀՈՂՎԱԾՆԵՐ ՏՊԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ200

Տպագրված է Գ-նահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 1300 օրինակ, 203 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
www.atc.am